

ԵՐԵՎԱՆԻ «ԳԼԱՁՈՐ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՍԱՐԳԻՍ ՍԱՄՎԵԼԻ ԳՅՈՒՐՋՅԱՆ

**ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԱՐԴԻ
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**Ը. 00. 03. «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար**

ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Վարդան Բաբկենի Բոստանջյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1. Բանկային համակարգի դերը տնտեսական համակարգում և դրա գործունակության վերլուծությունը.....	10
1.1 Բանկային համակարգի ձևավորման գործընթացը և կառուցվածքը	10
1.2 ՀՀ բանկային համակարգի զարգացման դինամիկան	17
1.3. ՀՀ բանկային համակարգի գործունեության առանձնահատկությունները արդի փուլում.....	28
 Գլուխ 2. Կորպորատիվ հաճախորդների վարկավորման գործընթացի առանձնահատկությունները և վարկային ներդրումների դինամիկան ՀՀ բանկային համակարգում.....	40
2.1. Վարկավորման գործընթացի առանձնահատկությունները և կորպորատիվ հաճախորդների վարկունակության գնահատումը.....	40
2.2. Վարկային ներդրումների կառավարման ռազմավարության միջազգային փորձի վերլուծությունը համաշխարհային ֆինանսական ճգնաժամի համատեքստում	56
2.3. Վարկային ներդրումների կառավարման կատարելագործման արդի միտումները ՀՀ բանկերում.....	67
 Գլուխ 3. Կորպորատիվ հաճախորդների վարկային ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման արդի գերակայությունները ՀՀ առևտրային բանկերում.....	85
3.1. Տնտեսավարող սուբյեկտների վարկային ռիսկերի կառավարման հիմնարար ուղղությունները առևտրային բանկերում.....	85
3.2. Վարկային ռիսկերի կառավարման կատարելագործման արդի գերակայություններն ու կառուցակարգերը ՀՀ բանկային համակարգում.....	100
 Եզրակացություն.....	115
Օգտագործված գրականության ցանկ.....	122
Հավելված	1-7

Ներածություն

Արեւնախոսության թեմայի արդիականությունը: Կորպորատիվ հաճախորդների վարկավորումը շուկայական տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում դիտարկվում է որպես ՀՀ առևտրային բանկերի գործունեության առանցքային ուղղություններից մեկը, և պատահական չէ, որ վերջին տարիներին նկատվում է բանկերի կողմից կորպորատիվ վարկերի բազմատեսակացման բարձր աստիճան:

Ինչպես հայտնի է, վարկային գործառնությունները հանդիսանում են տնտեսության բնականոն գործունեության ապահովման կարևոր նախադրյալներից մեկը: Վարկը ապահովում է շուկայական տնտեսության անխափան գործունեությունը՝ իրականացնելով վերաբաշխման, միջոցների շրջանառության ապահովման, կապիտալի կենտրոնացման և տնտեսության վարկային կարգավորման գործառույթները: Վարկի դերն ու նշանակությունը, հիրավի, անգնահատելի է տնտեսության համար, քանի որ վարկի միջոցով հնարավոր է լինում լուծել տնտեսության մեջ առկա բազմաթիվ ֆինանսատնտեսական խնդիրներ:

Վարկային գործառնությունները շարունակում են դրսևորվել որպես ՀՀ առևտրային բանկերի ակտիվային գործառնությունների կարևորագույն մասը, իսկ դրանցից ստացված տոկոսներից գոյանում է բանկի տոկոսային եկամուտների զգալի մասը: Հետևաբար, վարկային ռեսուրսների ու ներդրումների, ինչպես նաև վարկային ռիսկերի կառավարումը համարվում է առևտրային բանկերի կարևորագույն խնդիրներից մեկը:

Վարկային ներդրումների կառավարման խնդիրն ավելի է սրվում կորպորատիվ հաճախորդների վարկավորման գործընթացում, հատկապես ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակներում, քանզի ճգնաժամն իր բացասական ազդեցությունն է թողնում տնտեսության ինչպես իրական, այնպես էլ՝ ֆինանսական հատվածների վրա: Հետևապես, նմանատիպ իրավիճակներում անհրաժեշտություն է առաջանում ընտրել, առաջին հերթին, կորպորատիվ հաճախորդների վարկային ռեսուրսների կառավարման այնպիսի ռազմավարություն, որը թույլ կտա արդյունավետորեն կառավարել վարկային գործառնությունները, ինչպես նաև

իրականացնել վարկային ռիսկի հետևողական կառավարում՝ միջազգային ընդունված նորմերին ու չափանիշներին համապատասխան: Հետևաբար, վարկային ռեսուրսների կառավարման ռազմավարության իրագործումը առաջին հերթին ենթադրում է նաև վարկային ռիսկի կառավարում՝ հատկապես բարձր ռիսկային գոտիներում:

Ժամանակակից պայմաններում, ելնելով ՀՀ տնտեսության իրական հատվածում առկա բազմաթիվ հիմնախնդիրներից, ՀՀ բանկերը փորձում են էապես մեծացնել վարկային ներդրումների դիվերսիֆիկացիայի շրջանակները՝ հատկապես սպառողական վարկավորման ոլորտում և որոշակի սահմանափակումներ կիրառել տարբեր ուղղություններով վարկային ներդրումների սահմանաչափերում: Դա ոչ միայն թույլ է տալիս բանկերին ընդլայնել ներդրումային գործունեության շրջանակները, այլև սահմանափակ չափաքանակով վարկային ներդրումներից ապահովել երաշխավորված եկամուտներ: Եվ ինչպես վկայում են վերլուծության արդյունքները՝ ՀՀ բանկերը նախընտրում են ընդլայնել իրենց կարճաժամկետ վարկային պորտֆելը՝ պայմանավորված վարկային և իրացվելիության ռիսկերի նվազեցման անհրաժեշտությամբ: Այս պայմաններում բանկերը հնարավորություն են ստանում նվազեցնելով վարկային ռիսկերը և մեծացնելով փոքր ծավալով կարճաժամկետ վարկային միջոցների տեղաբաշխման շրջանակները՝ նույնիսկ ճգնաժամի պայմաններում ապահովել երաշխավորված շահույթի մակարդակ, ինչպես դա կատարվեց մեր հանրապետությունում համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամի տարիներին:

Սակայն անհրաժեշտ է նկատել, որ նման վարկային քաղաքականությունը թեև ապահովագրում է վարկերին արտաքին ցնցումներից, սակայն միաժամանակ՝ նրանց շահութաբերությունը պահում է ցածր մակարդակի վրա և ավելի է խորացնում տնտեսության իրական հատված-բանկեր խզվածքը: Չէ որ կորպորատիվ հաճախորդների ներդրումային նախագծերը ֆինանսավորելու համար կարևոր և առաջնային նշանակություն ունեն հատկապես երկարաժամկետ ներդրումները: Այս առումով անհրաժեշտ է ձեռնարկել կազմակերպական բնույթի միջոցառումներ՝ բանկերի երկարաժամկետ վարկային ներդրումների պորտֆելի կայացման գործում, ինչը կնպաստի ինչպես կորպորատիվ հաճախորդների վարկավորման գործընթաց-

ների ծավալների հետագա աճին, այնպես էլ՝ կոժանդակի ՀՀ բանկերին ներդրումային գործունեության խթանման և, վերջին հաշվով, ներդրումային պորտֆելի կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ դրանցում ընդգրկելով առավելապես միջնաժամկետ և երկարաժամկետ ներդրումային ռեսուրսներ:

Մասնավորապես, երկարաժամկետ վարկային ռեսուրսներ պետք է տրամադրվեն հատկապես այն կորպորատիվ հաճախորդներին, որոնց ներդրումային նախագծերը հետագայում կարող են հանգեցնել տվյալ ճյուղի ըստ ամենայնի զարգացմանը:

Շուկայական տնտեսության ժամանակակից պայմաններում ՀՀ առևտրային բանկերը և վարկային կազմակերպությունները կորպորատիվ հաճախորդների վարկավորման ոլորտում պետք է ընտրեն զարգացման այնպիսի ռազմավարություն, որը պետք է ուղղված լինի ունիվերսալ ֆինանսավարկային կառույցի ստեղծմանը՝ օժտված ֆինանսական շուկայում ակտիվային գործառնությունների իրականացման լայն հնարավորություններով, հաճախորդների համար ֆինանսավորման գրավիչ պայմաններով, բոլոր պարտավորությունների կատարման կայուն երաշխիքներով, ինչպես նաև այս ուղղությամբ միջազգային գործառնությունների տեսակների ընդլայնմամբ:

Ի վերջո, կորպորատիվ հաճախորդների վարկային ռազմավարության իրագործման և վարկային ներդրումների կառավարման ժամանակ կարևորվում է վարկային ռիսկի հետևողական կառավարումը, ինչն անհրաժեշտ է իրականացնել՝ ընտրելով վարկային ռիսկի նվազեցման և դիվերսիֆիկացիայի ռազմավարությունները, այսինքն բացառել բարձր ռիսկային վարկային գործառնությունները, իրականացնել վարկային պորտֆելի բազմատեսակացում, կիրառել սահմանափակումների համակարգ՝ ըստ տնտեսության ճյուղերի, վարկառուների, իրականացնել վարկի հետևողական մոնիթորինգ, և այլն: Նշված ռազմավարությունների կիրառումը թույլ կտա ապահովել ռացիոնալ հարաբերակցություն՝ բանկերի եկամտաբերության և հուսալիության միջև:

Այդ ամենը պայմանավորում է առևտրային բանկերի կողմից կորպորատիվ հաճախորդների վարկավորման գործընթացների կատարելագործման անհրաժեշտությունը, ինչով էլ պայմանավորված է սույն ատենախոսության արդիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակը ՀՀ բանկային համակարգի վարկային պորտֆելի ձևավորման և վարկային ռիսկերի կառավարման արդի հիմնախնդիրների համակարգային ուսումնասիրության ու վերլուծության հիման վրա կորպորատիվ հաճախորդների վարկավորման գործընթացների կատարելագործման հիմնարար ուղիների մշակումն է: Այդ նպատակի իրականացման համար ատենախոսության հիմքում դրվել են հետևյալ խնդիրները.

- վարկավորման գործընթացի տեսամեթոդական հիմքերի ուսումնասիրություն,
- առևտրային բանկերի՝ որպես ՀՀ ֆինանսական շուկայի կարևորագույն սուբյեկտների վերլուծություն,
- կորպորատիվ հաճախորդների վարկունակության վերլուծության և գնահատման մոդելների ուսումնասիրություն,
- ՀՀ առևտրային բանկերում կորպորատիվ հաճախորդների ներդրումային պորտֆելի կառավարման նկատմամբ վերահսկողության գործընթացի կազմակերպման ուղիների մշակում,
- Վարկային ներդրումների կառավարման ռազմավարության միջազգային փորձի վերլուծություն՝ համաշխարհային ֆինանսական ճգնաժամի համատեքստում,
- ՀՀ առևտրային բանկերում վարկային ներդրումների կառավարման կատարելագործման արդի միտումների բացահայտում,
- Կորպորատիվ հաճախորդների վարկային ռիսկերի կառավարման համապատասխան մեխանիզմների մշակում և կատարելագործում,
- ՀՀ-ում տնտեսավարող սուբյեկտների վարկային պորտֆելի կառավարման արդյունավետության բարձրացման հիմնարար ուղղությունների մշակում,
- ՀՀ բանկային համակարգում կորպորատիվ հաճախորդների վարկային ռիսկերի կառավարման կատարելագործման արդի գերակայությունների բացահայտում և կառուցակարգերի մշակում:

Ուսումնասիրության առարկան և օբյեկտը: Ուսումնասիրության առարկան ՀՀ բանկային համակարգում կորպորատիվ հաճախորդների վարկավորման գործընթացների առանձնահատկությունների ու բարելավման ուղղությունների համակող-

մանի վերլուծությունն ու գնահատումն է՝ վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով:

Ուսումնասիրության օբյեկտը ՀՀ բանկային շուկայի մասնակիցներն են՝ հանձինս ՀՀ Կենտրոնական բանկի, առևտրային բանկերի և այլ ֆինանսավարկային հաստատությունների:

Ատենախոսության տեսամեթոդաբանական հիմքերը և տեղեկատվական ապահովումը: Հետազոտությունը կատարվել է կառավարման և ֆինանսների տեսության, ինչպես նաև բանկային գործունեությանը վերաբերող հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատությունների ուսումնասիրման և համակարգված վերլուծության հիման վրա: Հետազոտության համար անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվել է հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականության աղբյուրներից, վարկային և ներդրումային գործունեությունը կարգավորող ՀՀ օրենքներից և ենթաօրենսդրական ակտերից, ՀՀ ԿԲ-ի, ՀՀ ազգային վիճակագրության ծառայության պաշտոնական տեղեկագրերից, ԻՆՏԵՐՆԵՏ տեղեկատվական ցանցից:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, մաթեմատիկական և գրաֆիկական մի շարք մեթոդներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում:

1. Տնտեսավարող սուբյեկտների վարկավորման գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով հիմնավորվել է ՀՀ բանկերում կորպորատիվ հաճախորդների վարկերի տրամադրման և վարկավորման գործընթացի համապարփակ ընթացակարգը՝ բաղկացած 6 հաջորդական բաժիններից /հավանական վարկառուի և վարկավորման նպատակների ուսումնասիրություն, վարկառուի ֆինանսական վիճակի գնահատում՝ բանկ ներկայացվող փաստաթղթերի հիման վրա, վարկային ռիսկի գնահատում, ըստ վարկերի տրամադրման և մարման կարգի՝ վարկավորման ընթացակարգի կառավարում, վարկերի օգտագործման և

մարման նկատմամբ մշտադիտարկում, վարկերի ժամանակին վերադարձման ապահովում/ և 3՝ նախապատրաստական, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

2. Ժամանակակից պայմաններում ելնելով ՀՀ առևտրային բանկերում իրականացվող տեղում (օնսայթ) և հեռակա (օֆսայթ) մոնիտորինգի ընթացքում առկա թերություններից, վարկային վերահսկողության արդյունավետության բարձրացման նպատակով հիմնավորվել է կորպորատիվ հաճախորդների վարկային համապարփակ մշտադիտարկման անցկացման նպատակահարմարությունը ՀՀ բոլոր առևտրային բանկերում՝ ամբողջական և ընտրանքային ընդգրկվածության սկզբունքով:
3. Ելնելով ներկայումս բանկերի կողմից կիրառվող հաճախորդների վարկունակության գնահատման տարբեր մոտեցումներից, նպատակահարմար ենք գտնում ՀՀ առևտրային բանկերի կողմից այս գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծել կորպորատիվ հաճախորդների վարկունակության գնահատման միասնական ռեյտինգային համակարգ՝ բացարձակ, արագ, ընթացիկ, երկարատև իրացվելիության գործակիցների և թանկարժեք մետաղներով գործառնությունների նորմատիվի հաշվարկման ճանապարհով:
4. Կորպորատիվ հաճախորդների վարկային ռազմավարությունների արդյունավետության բարձրացման նպատակով և ՀՀ առևտրային բանկերի կորպորատիվ վարկերի տրամադրման SWOT վերլուծության արդյունքում՝ օգտագործելով ուժեղ կողմերն ու հնարավորությունները՝ մշակվել են կորպորատիվ հաճախորդների վարկավորման գործընթացի արդյունավետության բարձրացման հայեցակարգային և իրավիճակային մոտեցումներ՝ գնային ճկուն քաղաքականության, հաճախորդների սպասարկման որակի բարձրացման, վարկային ռիսկի կառավարման, ժամկետանց վարկերի տեսակարար կշռի նվազեցման և տնտեսավարող սուբյեկտների վարկունակության գնահատման տեսանկյունից:

Հեղադրության արդյունքների կիրառումը և գործնական նշանակությունը:

Աշխատանքում ընդհանրացված տեսական մեկնաբանումները կարող են կիրառվել կորպորատիվ հաճախորդների վարկավորման գործընթացների հետազոտմանը վերաբերվող ատենախոսություններում ու աշխատություններում: Ատենախոսության մեջ մշակված առաջարկությունները կարող են գործնական

միջոց հանդիսանալ ՀՀ առևտրային բանկերում վարկային ռիսկերի կառավարման, կորպորատիվ հաճախորդների բանկային ներդրումային գործունեության արդյունավետության բարձրացման և բանկային վարկային պորտֆելի կառավարման կատարելագործման ուղղությամբ:

Հետազոտության փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Երևանի «Գլաժոր» համալսարանում և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կազմակերպված պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ասպիրանտների գիտական նստաշրջաններում: Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական երեք հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքը շարադրված է 130 էջի վրա, ներառյալ գրականության ցանկը և հավելվածները:

Գլուխ 1. Բանկային համակարգի դերը տնտեսական համակարգում և դրա գործունակության վերլուծությունը

1.1 Բանկային համակարգի ձևավորման գործընթացը և կառուցվածքը

Ունիվերսալ և մասնագիտացված առևտրային բանկերի՝ որպես ֆինանսական ինստիտուտների, շուկայական տնտեսության մեջ ունեցած դերի (որպես ֆինանսական միջնորդ հասարակության և տնտեսության տարբեր սուբյեկտների միջև) հարցը լայնորեն մեկնաբանված է գիտական գրականության մեջ:

Ըստ որոշ տեսաբանների՝ առաջին բանկերն առաջացել են կապիտալիզմի մանուֆակտուրային ժամանակաշրջանում և կազմավորվել են Իտալիայի որոշ քաղաքներում՝ 14-15-րդ դարերում:¹ Դրանք իրականացրել են վարկային տարատեսակ գործառնություններ՝ նպաստելով կապիտալիստական ձեռնարկությունների գործունեության կազմակերպմանը և կարգավորել են դրամային շրջանառությունը: Այս տեսանկյունից բանկերը բնութագրվում են որպես կապիտալիստական տնտեսության դրսևորում, սակայն որոշ գիտնականների կարծիքով՝ բանկերի առաջացումը վերագրվում է ֆեոդալիզմի ժամանակաշրջանին:²

Բանկը մարդկության տնտեսական գործունեության և մտքի մեծագույն նվաճումներից մեկն է: Այն իրենից ներկայացնում է տնտեսության մի մասնիկը և հանդիսանում է տնտեսության կարևորագույն բաղադրիչ օղակներից մեկը, առանց որի անհնար է պատկերացնել ժամանակակից ապրանքադրամական տնտեսությունը: Առաջին բանկը, ժամանակակից ըմբռնմամբ, առաջացել է Իտալիայում 1407թ. (Banca di San Giorgio), սակայն սա չի նշանակում, թե բանկերն առաջին անգամ առաջացել են միջնադարյան Իտալիայում: «Բանկ» հասկացությունը կարելի է հավասարապես նույնացնել նաև Հին Հունաստանում փոխանակողների և նրանց սեղանների հետ, որտեղ բանկիրներին անվանում էին տրապեզիդներ (հունարեն՝ 'տրապեզա' բառից, որը նշանակում է «սեղան»), կամ Հին Հռոմում փոխանակող-

¹ Региональные банки в системе финансового посредничества. Монография / Т.Н. Зверькова – Оренбург: Издательство «ООО «Агентство Пресса», 2014, էջ 8

² Банковское и страховое дело: Учебное пособие/ Голубев А.А., Абакумова А.В., Мишура Л.Г. СПб.: СПБ ГУИТМО, 2006, էջ 12

մենսարների հետ (լատիներեն ‘mensa’ բառից, որը նշանակում է «սեղան»), ովքեր զբաղվում էին արժույթի փոխանակմամբ, ինչպես նաև այլ գործառնություններով:³

Աստիճանաբար բանկային գործը դուրս եկավ դասական հունահռոմեական քաղաքակրթության սահմաններից և ներթափանցեց հյուսիսային և արևմտյան Եվրոպա: XVI-XVII դդ. մի շարք քաղաքներում (Վենետիկ, Միլան, Ամստերդամ, Համբուրգ, Նյուրիմբերգ, Ջենովա) վաճառականները ստեղծեցին ժիրոբանկեր (իտալերեն ‘giro’ բառից, որը նշանակում է շրջապտույտ, շրջանառություն) իրենց հաճախորդ-վաճառականների միջև անկանխիկ հաշվարկներ կատարելու համար: Ժիրոբանկերն իրենց հաճախորդների միջև հաշվարկները տանում էին ազնիվ մետաղների որոշակի կշռային քանակով արտահայտված հատուկ դրամական միավորներով:⁴

Արևմտյան Եվրոպայում անցումը դեպի վարկեր տրամադրող բանկային տների և առևտրային բանկերի կատարվել է XVII դարի 2-րդ կեսին: Անգլիայում առաջին բաժնետիրական բանկը (Անգլիայի բանկը) հիմնադրվել է 1694թ., որն ակտիվորեն իրականացնում էր առևտրաարդյունաբերական շրջանառության վարկավորումը և կառավարությունից ստացավ բանկնոտներ թողարկելու իրավունք: ԱՄՆ-ում բանկային գործի պատմությունը սկսվել է XVIII դարի 2-րդ կեսից, որտեղ անհատական վարկային գրասենյակները վարկ էին տալիս հողի գրավով և շրջանառության մեջ դրամ թողարկում: ԱՄՆ-ում առաջին առևտրային բանկը, որը ստացել է բանկային գործառնություններ իրականացնելու իրավունք, եղել է Հյուսիսային Ամերիկայի բանկը, որը կազմավորվել է 1781թ. Ֆիլադելֆիայում: ԱՄՆ-ում 1800թ. արդեն գոյություն ուներ 29 առևտրային բանկ, իսկ 1820թ.-ին դրանց թիվը հասնում էր 300-ի:⁵

Այսպիսով, առաջին բանկերի ծագման ժամանակաշրջանի վերաբերյալ հարցը, չի ստացել հստակ պատասխան: Ժամանակի տատանումը կազմում է մոտ 2000 տարի: Բանկային գործունեության ծագման վերաբերյալ մասնագետների շրջանում առկա է բազմակարծություն: Մասնագետների մի խումբ փորձում է բանկային

³Палочкин Михаил. Как стать успешным банкиром: советы для начинающих. Издательство: ООО «Парфенов.ру», 2014, էջ 34

⁴Банки и банковское дело: учебник / Балабанов А. И. [и др.] – Санкт-Петербург: Питер, 2007, էջ 32

⁵Семибратова, О. В. Банковское дело / О. В. Семибратова. – Москва: Academia, 2012, էջ 84

գործունեության ծագման ակունքները հայտնաբերել հնագույն ժամանակներում՝ այն կապելով ապրանքային տնտեսության զարգացման հետ:⁶ Մասնագետների մեկ այլ խումբ բանկերի ծնունդը համարում է արդյունաբերության զարգացման նախնական փուլի հետևանք, երբ բացի փողի շրջանառության կազմակերպման և ապրանքային հարաբերությունների (առևտրի) սպասարկումից արագ զարգացող արդյունաբերական ձեռնարկությունների դրամավարկային սպասարկման անհրաժեշտություն է առաջացել:⁷ Իսկ մասնագետների մեծ մասի կարծիքով էլ, առաջին բանկերն առաջացել են Իտալիայում (Վենետիկ, Ջենովա) XIV-XV դարերում: Վերջիններիս կարծիքով սկզբնական փուլում բանկային գործունեության աշխուժացումը հատուկ էր հենց Իտալիայի քաղաքներին, որոնք ձեռք բերելով անկախ կարգավիճակ, վերածվել էին արհեստների և առևտրի աշխույժ կենտրոնների:⁸ Բանկային գործունեության աշխուժացմանը նպաստեցին նաև գործունեության կարգավորմանն ուղղված սահմանափակումները, որոնք էլ իրենց հերթին նպաստեցին հասարակության վստահության աճին:

14-րդ դարի սկզբին բանկերն արդեն ունեին իրենց հաստատուն տեղը Իտալիայի քաղաքների տնտեսության մեջ, իսկ առանձին բանկեր գործունեություն էին իրականացնում նաև երկրի սահմաններից դուրս, ինչը հիմք հանդիսացավ Արևմտյան Եվրոպայի երկրներում բանկային գործունեության խթանման ու բանկերի հիմնադրման համար: Սա էր պատճառը, որ աշխարհում տարածվեց «բանկ» բառը:

«Բանկ» հասկացությունը զարգացող երևույթ է, որը տնտեսական, իրավական և հասարակական զարգացումների յուրաքանչյուր փուլում հանդես է գալիս առանձնահատուկ տեսքով: Էականն այն է, որ ծառայություններն իրականացնում են ոչ թե անհատները, այլ հասարակայնորեն ճանաչված և իրավական նորմերին համապատասխան գործող մասնագիտական օղակները:⁹

⁶ Организация деятельности коммерческих банков учеб. / Г. И. Кравцова [и др.]; под ред. Г. И. Кравцовой. – Минск: БГЭУ, 2007, էջ 36-39

⁷ Банковское дело / Ю. Соколов и др.; под ред. Ю. Соколова, Е. Жукова. – Москва: Юрайт, 2015, էջ 65-72

⁸ Банковские операции: пособие / М. А. Коноплицкая [и др.]; под ред. М. А. Коноплицкой. – Минск: Вышэйшая школа, 2008, էջ 103

⁹ Лаврушин, О.С. Основы банковского дела /О.С. Лаврушин. – Москва: Кнорус, 2011, էջ 18

Ժամանակակից պատկերացումներով՝ բանկը յուրահատուկ ֆինանսական կազմակերպություն է, որը ավանդների տեսքով ներգրավում է միջոցներ, տրամադրում վարկեր, իրականացնում չեկերով և արտարժույթով գործառնություններ, մատուցում տարբեր տեսակի այլ ֆինանսական ծառայություններ կառավարությանը, տնտեսավարող սուբյեկտներին, քաղաքացիներին և միմյանց: Բանկերի դերը տնտեսության մեջ առաջին հերթին բնութագրվում է նրանով, որ դրանք ֆինանսական միջնորդներ են, որոնք ներգրավում են միջոցներ (ընդունում են ավանդներ) և դրանք փոխատվության տրամադրում ընկերություններին (կամ նրանցից գնում արժեթղթեր)՝ նրանց ընթացիկ ծախսերը ծածկելու համար: Ֆինանսական միջոցները բանկը հավաքագրում է հետևյալ երեք հիմնական աղբյուրներից՝ ցապահանջ և ժամկետային ավանդներից, այլ բանկերից ստացված փոխառություններից և սեփական կապիտալից:¹⁰

Բացի բանկերից, որպես ֆինանսական միջնորդներ հանդես են գալիս նաև վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, վարկային միությունները, գրավատները, կենսաթոշակային հիմնադրամները և ֆինանսական ծառայություններ մատուցող այլ կազմակերպությունները: Փաստորեն ֆինանսական միջնորդները ներգրավում են բնակչության խնայողությունները և դրանց հաշվին փոխատվություն տրամադրում կազմակերպություններին, որոնք այդ միջոցներն օգտագործում են ներդրումային նպատակով:

Փորձենք առանձնացնել բանկերի՝ որպես առանձնահատուկ ֆինանսական միջնորդների, հետևյալ էական հատկանիշները՝

- բանկերի ռեսուրսները ձևավորում են գլխավորապես ներգրավված միջոցների հաշվին, այսինքն՝ նրանց պասիվների կառուցվածքում պարտավորությունները մեծ տեսակարար կշիռ ունեն: Բավական է նշել, որ բանկերի սեփական կապիտալը հաճախ չի գերազանցում ընդհանուր պասիվների 10%-ը, ինչը նրանց կախվածության մեջ է դնում ներքին և արտաքին գործոններից:
- Բանկերը հնարավորություն ունեն բացելու և սպասարկելու բանկային հաշիվներ և թողարկելու անկանխիկ վճարամիջոցներ (այսպես կոչված՝ «բանկային փող»),

¹⁰ Печникова, А. В. Банковские операции: учеб. / А. В. Печникова [и др.]. – Москва: ФОРУМ: ИНФРА-М, 2007, էջ 52-53

դրա հիման վրա նրանք ապահովում են վճարային համակարգի գործունեությունը՝ վճարումների ժամանակ հանդես գալով որպես միջնորդ: Քանի որ ժամանակակից տնտեսությունում անկանխիկ «բանկային փողը» վճարման հիմնական միջոցն է, ինչպես նաև առաջարկի կարևորագույն բաղադրիչը, առևտրային բանկերը կարևոր դեր են խաղում երկրի վճարային համակարգի կայունության ապահովման և դրամավարկային քաղաքականության իրագործման բնագավառում՝ վերջինիս ազդակները հաղորդելով տնտեսությանը:

Բանկերին և վարկային այլ կազմակերպություններին միավորում և միաժամանակ նրանց տարբերում է տնտեսավարող մյուս սուբյեկտներից մեկ բնութագրիչ՝ մասնագիտացումը ֆինանսական շուկաներում: Սակայն գոյություն ունեն նաև հետևյալ հատկանիշները, որոնք առևտրային բանկն էականորեն տարբերում են ցանկացած վարկային այլ կազմակերպությունից՝

● Ֆինանսական շուկայում իբրև առաջնային, ելակետային և գլխավոր օղակ հանդես գալը: Բանկերի գործունեությունն էապես կանխորոշում է վարկային կազմակերպությունների գործունեության բնույթը, այն հարաբերությունների շրջանակը, որոնցում դրանք հանդես են գալիս: Վարկային կազմակերպությունները մյուս հաճախորդների հետ միասին սպասարկվում են բանկերի կողմից: Բանկերը միակ կազմակերպություններն են, որոնք իրականացնում են դրամական բոլոր գործառնությունները: Նրանք կողմնորոշված են դեպի գործունեության ունիվերսալությունը, ի տարբերություն այլ վարկային կազմակերպությունների, որոնք մասնագիտացված են առանձին ֆինանսական գործառնությունների գծով:¹¹ Սա, իհարկե, չի նշանակում, որ ցանկացած բանկ յուրաքանչյուր պահին կատարում է ֆինանսական շուկայի բոլոր գործառնությունները. բանկը պարզապես պետք է պատրաստ լինի դրան:

● Բանկային ավանդներ ներգրավելու և բանկային հաշիվներ բացելու բացառիկ, մենաշնորհային իրավունքը: Օրինակ, ըստ ՀՀ օրենսդրության՝ բանկերը տարբերվում են այլ վարկային կազմակերպություններից առաջին հերթին

¹¹ Банковский аудит: учебное пособ. / Л.С. Ефремова [и др.]; под ред. Л.С. Ефремовой. – Минск: БГЭУ, 2007, էջ 84

նրանով, որ կարող են միջոցներ ներգրավել բանկային ավանդների ձևով, ինչպես նաև բացել և վարել բանկային հաշիվներ:¹² Հենց այդ երկու գործառույթների իրականացման իրավունքի բացակայությունը ոչ բանկերին սկզբունքորեն տարբերում է բանկերից: Նշենք նաև, որ ի տարբերություն բանկերի, ոչ բանկերի նկատմամբ կիրառվում է կարգավորման ավելի մեղմ ռեժիմ, քանի որ ոչ բանկերի գործունեության մեջ բացակայում են բանկային ավանդներով և հաշիվներով պայմանավորված ռիսկերը:

Բանկերի և այլ վարկային կազմակերպությունների գործառնությունները սովորաբար կանոնակարգվում են տվյալ երկրի օրենսդրությամբ:

Այսպիսով, առևտրային բանկերն ունեն յուրահատուկ դեր տնտեսության մեջ, մի շարք հատկանիշներով տարբերվում են այլ ֆինանսական միջնորդներից և այլ կազմակերպություններից: Շուկայական տնտեսությունում բանկերն առավել կարևոր ֆինանսական կազմակերպություններն են, ինչպես վարկավորման ծավալով, այնպես էլ տնտեսական շրջանառության սպասարկման նշանակությամբ հանդիսանում են հիմնական ֆինանսական միջնորդներ, ուստի գտնվում են կարգավորման և վերահսկողության հատուկ դաշտում:

Բանկերն ավելի շուտ մոտ են առևտրային ձեռնարկությանը: Եվ դա պատահական չէ: Բանկն իրոք կարծես թե «գնում է» ռեսուրսներ, «վաճառում» դրանք, գործում է վերաբաշխման ոլորտում, նպաստում ապրանքափոխանակության և ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը:

Բանկերը հանդիսանում են մարդկության եզակի գյուտերից մեկը: Ակտիվորեն գործելով վերջին 300-400 տարիներին, նրանք օժանդակել են ոչ միայն տնտեսության զարգացմանը, այլև գիտական և տեխնոլոգիական առաջընթացին:¹³

Ռուս տնտեսագետ Ե. Ժարկովսկայան գտնում է, որ բանկային համակարգը տարբեր ազգային բանկերի և վարկային հաստատությունների ամբողջություն է, որոնք գործում են ընդհանուր ֆինանսավարկային մեխանիզմի շրջանակներում:¹⁴

¹² ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԲԱՆԿԵՐԻ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» Ընդունված է Ազգային ժողովի կողմից 30 հունիսի 1996 թ.

¹³ Белоглазова, Г. С., Кроливецкая, Л. В. Банковское дело. Организация деятельности коммерческого банка / Г. Г. С. Белоглазова, Л. В. Кроливецкая. – Москва: Юрайт, 2012, էջ 145

¹⁴ Жарковская Е.П. Банковское дело. 7-е изд., испр. и доп. - М.: 2010, էջ 24

Ամերիկացի ժամանակակից տնտեսագետ Լոուրենս Ուայթը բանկային համակարգը բնութագրում է որպես միասնական ֆինանսավարկային մեխանիզմի շրջանակներում գործող տարատեսակ բանկերի և ֆինանսական ինստիտուտների ամբողջություն:¹⁵

Սակայն, մեր կարծիքով, վերոբերյալ սահմանումները թերի են: Մեր կարծիքով, բանկային համակարգը բնութագրվում է որպես տնտեսական աճի ապահովման, գնաճի ու վճարային հաշվեկշռի կարգավորման ընթացիկ և ռազմավարական խնդիրների լուծման նպատակով ստեղծված ունիվերսալ և մասնագիտացված առևտրային բանկերի և այլ ֆինանսավարկային հաստատությունների ամբողջություն՝ տվյալ երկրի Կենտրոնական բանկի ընդհանուր վերահսկողության ներքո:

Այսպիսով, բանկային համակարգը, առաջին հերթին, դիտարկվում է որպես ֆինանսավարկային կազմակերպությունների ամբողջություն՝ կենտրոնական բանկի գլխավորությամբ, և որպես միմյանց միջև հարաբերությունների և փոխադարձ կապերի համակարգ, որոնք առաջանում են բանկային գործառնությունների իրականացման ընթացքում: Բանկային համակարգն այս կամ այն երկրում պատմականորեն ձևավորված և օրենսդրորեն ամրագրված տարբեր տեսակի փոխկապված բանկերի ու այլ վարկային կազմակերպությունների ամբողջությունն է, որոնք գործում են միասնական ֆինանսավարկային համակարգի շրջանակներում: Բանկային համակարգը երկրի ֆինանսական համակարգի բաղկացուցիչ մասն է, ֆինանսական համակարգի հանգուցային օղակը:

Բանկային համակարգը շուկայական տնտեսության զարգացման գլխավոր ֆինանսական հիմքն է: Նրա գործողության նպատակը հանգում է ապրանքների արտադրության և շրջանառության գործընթացում կապիտալի շրջապտույտի սպասարկմանը:¹⁶

Բանկային համակարգի հիմնական նպատակներն են՝ ձեռնարկությունների, կազմակերպությունների և բնակչության դրամական միջոցների հավաքագրումը, դրանց օգտագործումը տնտեսության տարբեր ճյուղերում և ոլորտներում եկամտա-

¹⁵ Джорджа Мейсона Лоуренс Уайт. Банковская система развитых стран мира. лекция в рамках проекта InLiberty. Москва, 2016

¹⁶ Банковское дело: учебное пособие / [М. А. Петров и др.]; под ред. М. А. Петрова. – Москва : Рид Групп, 2015, էջ 34

քեր նախագծերի իրականացման նպատակով:¹⁷ Բանկային համակարգի կայացման և զարգացման վրա ազդում են մի շարք գործոններ, որոնցից արժի նշել պետության իրականացրած դրամավարկային քաղաքականությունը, երկրում տիրող տնտեսական իրավիճակը, օրենսդրական դաշտը, երկրի տնտեսության մեջ բանկային համակարգի դերը և տեղը, միջբանկային մրցակցությունը, պետության հարկային քաղաքականությունը:

1.2 ՀՀ բանկային համակարգի զարգացման դինամիկան

20-րդ դարի սկզբին Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ տեղի էր ունենում կապիտալի կենտրոնացում: Երկրում իշխում էր ռուսական կապիտալը: Ռուսաստանի խոշոր բանկերը բաժիններ ունեին Անդրկովկասի մեծ քաղաքներում: Երևանում բացվեցին Ազով-Դոնի, Վոլգա-Կամսկի, Կովկասյան, Թիֆլիսի վաճառականների բանկերի բաժանմունքները, իսկ Ալեքսանդրապոլում բացվեց Հասարակական քաղաքային բանկը: 1914թ. Երևանում գործում էին շուրջ 10 բանկային հաստատություններ: Բանկերը, վարկային գործառնություններից բացի, փայտօրական ձեռնարկություններում կապիտալի ներդրման միջոցով ծավալում էին առևտրաարդյունաբերական գործունեություն: Քաղաքացիական կռիվների տարիներին ֆինանսավարկային համակարգը և դրամաշրջանառությունը կազմալուծված էին: Ֆինանսական իրավունքները տևական բնույթ էին կրում: 1918-1919թթ. երկրի ֆինանսավարկային համակարգը լիովին փլուզված էր, պետական գանձարանն ի վիճակի չէր ապահովել ընթացիկ ծախսերն ու անհրաժեշտ հատկացումները: Պետական ծախսերի կրճատման և եկամուտների ավելացման նպատակով կառավարությունը որոշում է բարձրացնել հարկային դրույքաչափերը, կրճատել դրամական նպաստները, նվազեցնել պետական ծառայողների թիվը, ստեղծել նոր աշխատատեղեր: Ընթացիկ ծախսերը

¹⁷ Рыкова, Л. М. Регулирование деятельности банков. Банковский надзор: учеб. пособ. / Л. М. Рыкова. Минск: Современная школа, 2009, էջ 75

փակելու համար Կառավարությունը ստիպված էր իրականացնել լրացուցիչ էմիսիա: Պետական աճող ծախսերը կառավարությունը հոգում էր թղթադրամներով և հսկայական չափերի է հասցնում չերաշխավորված թղթադրամների թողարկումը:

1920թ. հոկտեմբերի 26-ին ընդունվում է օրենք Պետական բանկի Երևանյան բաժանմունքը ՀՀ Պետական բանկ վերանվանելու մասին:¹⁸ Սակայն այդ օրենքի պահանջը չիրականացվեց: 1920թ. դեկտեմբերի 20-ին ընդունվեց բանկերի ազգայնացման մասին դեկրետը: Վարկային քաղաքականության շրջանակներում ՀՀ կառավարությունը միջոցներ էր ձեռնարկում արժեզրկումը կասեցնելու և Պետական բանկը գործող կառույցի վերածելու համար: ՀՀ կառավարությունը փորձում էր որոշակի փոխարժեքով հայկական չեկեր տրամադրել Բաթումում գտնվող Բրիտանական բանկին և Թիֆլիս բանկում որոշ քանակությամբ արտարժույթ պահել, որի դիմաց ՀՀ քաղաքներում հայկական չեկերով կատարել ֆունտ ստեռլինգի, ֆրանկի, վրացական և ադրբեջանական դրամների փոխանակում: Սակայն, չնայած կառավարության ջանքերին, բնակչությունը վստահություն չունեի ՀՀ թղթադրամների նկատմամբ և առևտուրն իրականացնում էին հիմնականում անդրկովկասյան բռնների միջոցով: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման նախօրեին գործում էր 6 բանկ, շրջանառում էին 340 մլն անդրկովկասյան բռն և 11 մլրդ ռուբլուց ավելի հայկական չեկ: Փողը լրիվ արժեզրկված էր: Էմիսիայից և մյուս աղբյուրներից ստացված եկամուտները հիմնականում ծառայում էին ներքին գործերի նախարարությանը և ռազմական ծախսերը հոգալուն:

1922թ. մարտի 20-ին ստեղծվում է ԽՍՀՄ պետական բանկը: 1953թ. ԽՍՀՄ պետական բանկի հայկական գրասենյակը վերանվանվում է ԽՍՀՄ պետական բանկի հայկական հանրապետական գրասենյակ: 1987թ. ԽՍՀՄ պետբանկի հայկական հանրապետական գրասենյակը վերանվանվում է ԽՍՀՄ պետական բանկի հայկական հանրապետական բանկ: Նույն թվականին ստեղծվեցին մի շարք մասնագիտացված բանկեր՝ ԽՍՀՄ Արտաքին տնտեսական բանկը, Արդշինբանկը, Բնակսոցբանկը, Ագրոարդբանկը և Խնայբանկը: 1988թ. հաստատվում է ԽՍՀՄ

¹⁸ Հայաստանի բանկային համակարգը XX դարի սկզբից մինչև 1991թ., ՀՀ ԿԲ-ի պաշտոնական կայքէջ՝ <https://www.cba.am/am/SitePages/acharmeniannotescoins.aspx>

պետական բանկի չորրորդ և վերջին կանոնադրությունը, համաձայն որի՝ պետական բանկը երկրի գլխավոր բանկն է, միասնական էմիսիոն կենտրոնը և ժողովրդական տնտեսությունում վարկային և հաշվարկային հարաբերությունների կազմակերպիչը:¹⁹

Այս շրջանում էր, որ պետական բանկերին կից ստեղծվեցին ոչ պետական բանկերը, ներմուծվեց «առևտրային բանկ» հասկացությունը: Առաջին այդպիսի բանկը ստեղծվեց 1988թ.՝ «Հայկ» կոոպերատիվ բանկը: Առաջին առևտրային բանկերի թվին են պատկանում նաև «Երևան», «Հայկական առևտրային բանկ», «Մասիս», «Պրոմթեյ» և «Անելիք» բանկերը, որոնցից վերջին երկուսը գործում են մինչ օրս: 1992-1993թթ.-ից հետո ՀՀ բանկային համակարգում տեղի ունեցան զգալի փոփոխություններ. նախ և առաջ միամակարդակ բանկային համակարգից անցում կատարվեց երկմակարդակ բանկային համակարգի, շրջանառության մեջ մտավ ՀՀ դրամը՝ փոխարինելով խորհրդային ռուբլուն, ՀՀ Պետբանկը վերանվանվեց ՀՀ կենտրոնական բանկի, ինչը սոսկ անվան փոփոխություն չէր, այն կրեց նաև զգալի որակական փոփոխություններ: 1993թ. ՀՀ Գերագույն խորհրդի կողմից ընդունվեց բանկային համակարգը ձևավորող և կարգավորող մի կարևորագույն օրենք՝ «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքը:


Չնայած տեղի ունեցած էական փոփոխություններին՝ այդ ժամանակաշրջանում ՀՀ բանկային համակարգը դեռևս վերջնականապես չէր ձևավորվել, զանազան թերություններ և բացթողումներ էին առկա ինչպես բուն բանկային համակարգում, այնպես էլ այն կարգավորող օրենսդրական դաշտում: Մեծ արգելք էր հանդիսանում նաև երկրում անընդհատ խորացող տնտեսական ճգնաժամը և մեծ չափերի հասած հիպերինֆլացիան: Կենտրոնական բանկի քայլերում գերակայում էին վարչական վճիռներն ու սահմանափակումները, կառավարման վարչակազմակերպական մեթոդները, բանկերի համար տոկոսադրույքի ներքին սահմանի հաստատումը և այլն: Այսպիսի քաղաքականությունն էլ ավելի էր խորացնում տնտեսական անկումը, պետական բյուջեի հսկայական պակասուրդը, ինչպես նաև անկառավարելի դարձնում գնաճը:

¹⁹ Հայաստանի բանկային համակարգը XX դարի սկզբից մինչև 1991թ., ՀՀ ԿԲ-ի պաշտոնական կայքէջ՝ <https://www.cba.am/am/SitePages/acharmeniannotescoins.aspx>

Եվ միայն 1995թ.-ից սկսած բանկային համակարգը հասել է որոշակի կայունության՝ իհարկե շարունակելով փոփոխվել և ճզգրտվել մինչ օրս: Դրա հիմնական պատճառը ՀՀ կառավարության և ՀՀ կենտրոնական բանկի մշակած համատեղ ծրագիրն էր, որը համահունչ էր դարձնում հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները՝ խուսափելու համար հաճախ առաջացող հակասություններից: 1995թ. հուլիսի 27-ին հիմնվեց Հայաստանի բանկերի ասոցիացիան, որի նպատակն էր պաշտպանել անդամակցող բանկերի շահերը: Ներկայումս այդ կառույցը կոչվում է Հայաստանի Բանկերի միություն:²⁰

Հետագա տարիներին շարունակվել է Հայաստանի բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման գործընթացը (տե՛ս գծանկար 1): 1995թ.-ի վերջին Հայաստանի Հանրապետության տարածքում գործում էին 35 ռեզիդենտ բանկեր՝ 182 մասնաճյուղերով: Տարվա ընթացքում անվավեր են ճանաչվել 20 բանկի և օտարերկրյա բանկերի 3 մասնաճյուղի բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիաները: Գրանցվել և լիցենզավորվել է 3 բանկ, այդ թվում՝ ամբողջությամբ օտարերկրյա կապիտալով:

Գծանկար 1. ՀՀ բանկերի քանակը 1993-2015թթ.



²⁰ Տե՛ս Հայաստանի բանկերի միության պաշտոնական կայքէջը՝ <http://www.uba.am/>

1996 թ.-ի ընթացքում գործունեությունը դադարեցրել է 8 բանկ, որոնցից երկուսը միավորվել են, մեկը միավորվել է այլ բանկի հետ և գրանցվել որպես մասնաճյուղ, մնացած հինգի բանկային գործունեության լիցենզիաները Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից անվավեր է ճանաչվել: 1996թ.-ի ընթացքում լիցենզավորվել է 5 բանկ: Արդյունքում, 01.01.97թ.-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել է 33 բանկ և մեկ ոչ ռեզիդենտ բանկի մասնաճյուղ:

1998թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել է 30 բանկ (174 մասնաճյուղով): Այդ թվականի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի հիման վրա իրենց գործունեությունն են սկսել Էկոնոմիկեստբանկը և Առէքսիմբանկը:

1999թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ-ի տարածքում գործել են 31 բանկեր (178 մասնաճյուղերով, 205 գործառնական գրասենյակներով, 19 հատուկ գործառնական գրասենյակներով, որոնցից 16-ը փակ բաժնետիրական են, 8-ը բաց բաժնետիրական, 6-ը՝ սահմանափակ պատասխանատվության ընկերություն և 1-ը՝ կոոպերատիվ բանկ): 1999թ.-ի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալի հաշվեկշռային մեծությունն ավելի էր 25 տոկոսից և տարեվերջին կազմել է 33,0 մլրդ դրամ: ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 1999թ. աճել են 19 տոկոսով և 01.01.2000 թ.-ի դրությամբ կազմել են 191.0 մլրդ դրամ: Եկամտաբեր ակտիվների ծավալը 1999թ.-ի ընթացքում ավելացել է 4.1 տոկոսով՝ կազմելով 106,4մլրդ դրամ, սակայն դրանց տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում՝ նվազելով 8 տոկոսով կազմել է 56.0 տոկոս:²¹

Բանկային համակարգը 2003 թվականին թևակոխել է զարգացման նոր փուլ, անցյալում թողնելով բանկերի նախկինում կուտակված դասական բանկերին ոչ բնորոշ խնդիրները: 2003 թվականը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի համար կարելի է բնութագրել որպես բավականին լուրջ ձեռքբերումների տարի: Սկսել են գործել վարկային կազմակերպությունները, վարկային ռիսկի նվազեցման նպատակով՝ վարկային ռեգիստրը, ավանդների

²¹ ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները 2000թ. հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ ԿԲ-ի պաշտոնական կայքէջ՝ <http://www.cba.am/>

երաշխավորման համակարգը: Այս ամենին զուգահեռ գրանցվել են բանկային համակարգի ծավալների ընդլայնման, դիսկերի կառավարման և շահութաբերության դրական միտումներ: 2003թ.-ի տարեվերջի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 20 առևտրային բանկեր (232 մասնաճյուղերով), որոնցից 19-ը գործել են ընդհանուր վերահսկողության դաշտում, իսկ 1 բանկ՝ հատուկ վերահսկողության դաշտում (ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ նշանակվել է ժամանակավոր ադմինիստրացիա): 2003թ.-ին ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվները ավելացել են 16%-ով և 31.12.03թ. դրությամբ կազմել են 282.1 մլրդ դրամ, կամ անվանական ՀՆԱ-ի 17.3%:²²

2004թ.-ին բանկային համակարգի զարգացումները վկայում են, որ մակրոտնտեսական բարենպաստ միջավայրի պարագայում մեծ է համակարգի ընդարձակման ու խոշորացման ներուժը: Բանկային համակարգը 2004թ.-ին գործել է առողջ մրցակցային միջավայրում՝ վստահության ամրապնդման և ծառայությունների ընդլայնման միջոցով գրավելով հաճախորդների ավելի լայն շերտեր: 2004թ.-ի դեկտեմբերի 31-ին դրությամբ ՀՀ տարածքում դարձյալ գործել են 20 առևտրային բանկեր (233 մասնաճյուղերով), ընդ որում բոլորն էլ գործունեություն են ծավալել ընդհանուր վերահսկողության դաշտում: Տարեվերջին համակարգի ընդհանուր ակտիվները կազմել են ՀՆԱ-ի 19.2%-ը:²³

2005թ.-ին մակրոտնտեսական միջավայրում դարձյալ շարունակվել են վերջին տարիներին ձևավորված կայուն զարգացման միտումները, որոնք բարենպաստ ազդեցություն են ունեցել նաև բանկային համակարգի զարգացումների վրա : 2005 թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր (267 մասնաճյուղերով): Տարեվերջին համակարգի ընդհանուր ակտիվները կազմել են ՀՆԱ 19.8%-ը, ինչը վկայում է, որ դարձյալ արձանագրվել են Հայաստանի Հանրապետության տնտեսությունում բանկային համակարգի մասնակցության շրջանակների ընդլայնում:²⁴

²² Տես՝ Հայաստանի բանկային համակարգը 2003թ. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը: Երևան, 2004

²³ Տես՝ Հայաստանի բանկային համակարգը 2004թ. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը: Երևան, 2005

²⁴ Տես՝ Հայաստանի բանկային համակարգը 2005. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը: Երևան, 2006

2006թ.-ը հատկանշական է այն առումով, որ հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկը ստանձնեց Հայաստանի ֆինանսական հատվածի կարգավորումն ու վերահսկողությունը: Միասնական վերահսկողական մարմնի ստեղծման հիմնական դրդապատճառը ֆինանսական շուկայում ընդհանուր ռիսկերի վերահսկումն էր: Աշխարհում ֆինանսական համակարգի զարգացումներին բնորոշ են բանկային, ապահովագրական և արժեթղթերով գործունեությունների մերձեցման միտումները, ըստ որի վերահսկողությունից պահանջվում է համալիր կերպով դիտարկել ֆինանսական շուկայի զարգացման միտումները, գնահատել ֆինանսական շուկայի տարբեր հատվածներին բնորոշ ռիսկերը, դրանց ազդեցությունը ընդհանուր ֆինանսական համակարգի զարգացումների վրա: 2006թ.-ին շարունակվել են դրսևորվել 2005թ.-ի զարգացման միտումները: 2006թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 21 առևտրային բանկեր 299 մասնաճյուղերով: Համակարգի ակտիվները տարեվերջին ՀՆԱ-ի նկատմամբ ունեցել են նույն տեսակարար կշիռը՝ 19.8%:²⁵

2007թ.-ին Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգում շարունակվել են վերջին տարիներին ձևավորված կայուն զարգացման միտումները, որոնք բարենպաստ ազդեցություն են ունեցել նաև բանկային համակարգի զարգացումների վրա: 2007թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 22 առևտրային բանկեր՝ 347 մասնաճյուղերով: 2007թ.-ին բանկային համակարգի ֆինանսական միջնորդության մակարդակը բնութագրող ցուցանիշները բավականին աճել են. մասնավորապես՝ տարեվերջին համակարգի ընդհանուր ակտիվները կազմել են ՀՆԱ-ի 24.3%-ը:²⁶

2008թ.-ին ՀՀ ֆինանսական համակարգը պահպանել է զարգացման ու աճի միտումները և տարվա վերջին ծագած դժվարությունների պայմաններում դրսևորել բարձր ճկունություն: Տարվա ընթացքում ՀՀ մակրոտնտեսական զարգացումները փոքր-ինչ տարբեր են եղել՝ առաջին 3 եռամսյակներում պահպանվել են երկնիշ տնտեսական աճի՝ նախորդ տարիների դրսևորած միտումները, իսկ չորրորդ

²⁵ Տես՝ Հայաստանի բանկային համակարգը 2006. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը: Երևան, 2007

²⁶ Տես՝ Հայաստանի բանկային համակարգը 2007. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը: Երևան, 2008

եռամսյակում տնտեսական աճը դանդաղել է: 2008թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 22 առևտրային բանկեր՝ 381 մասնաճյուղերով: Տարեվերջի դրությամբ համակարգի ընդհանուր ակտիվները կազմել են ՀՆԱ-ի 28%-ը:²⁷

2009թ.-ը ՀՀ ֆինանսական համակարգի համար լի էր ֆինանսատնտեսական ճգնաժամից բխող մարտահրավերներով: Համաշխարհային ճգնաժամի բացասական ազդակները Հայաստանի ֆինանսական համակարգ էին ներթափանցել դեռևս 2008թ.-ի չորրորդ եռամսյակից, երբ տնտեսական աճի տեմպերը զգալի նվազել էին: 2009թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 22 առևտրային բանկեր 391 մասնաճյուղերով:²⁸

2010թ.-ի ընթացքում իրականացվել է ‘Ամերիաբանկ’ ՓԲԸ և ‘Կասկադ բանկ’ ՓԲԸ վերակազմակերպում՝ միացման միջոցով, ինչի արդյունքում ‘Կասկադ բանկ’ ՓԲԸ գործունեությունը դադարեցվել է, իսկ ‘Ամերիաբանկ’ ՓԲԸ-ն պահպանել է իր գործունեությունը նաև որպես ‘Կասկադ բանկ’ ՓԲԸ-ի իրավահաջորդ: Այսպիսով, 2010թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործող բանկերը թիվը կրկին նվազել է՝ դառնալով 21՝ իրենց 434 մասնաճյուղերով:²⁹

2011-2015թթ. ՀՀ բանկային համակարգում պահպանվել են կայուն զարգացման և չափավոր աճի ռազմավարության վրա հիմնված առևտրային բանկերի գործունեության հետագա ընթացքը՝ պայմանավորված տնտեսական համակարգում գործող հարաբերական կայունությամբ և տնտեսության իրական և ֆինանսական հատվածների միջև խզվածքի որոշակի թուլացման, ինչը, թերևս, կարևոր դրական տեղաշարժ էր ՀՀ ֆինանսաբանկային համակարգի հետագա զարգացման գործում:

2016թ. հունվարի 1-ի դրությամբ ՀՀ ֆինանսական շուկայի մասնակիցներից են՝

²⁷ Տես՝ Հայաստանի բանկային համակարգը 2008. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը: Երևան, 2009

²⁸ Տես՝ Հայաստանի բանկային համակարգը 2009. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը: Երևան, 2010

²⁹ Տես՝ Հայաստանի բանկային համակարգը 2010. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը: Երևան, 2011

- 22 բանկեր, որից 21-ը՝ առևտրային՝ 497 մասնաճյուղերով, 1-ը՝ զարգացման (Համահայկական բանկ)
- 33 վարկային կազմակերպություններ՝ 137 մասնաճյուղերով,
- 9 ապահովագրական ընկերություններ և 2 ապահովագրական միջնորդներ (բրոքերներ),
- ՀՀ արժեթղթերի շուկայի մասնակիցները, որոնք են՝ 8 ներդրումային ընկերություններ, ներդրումային ֆոնդերի 4 կառավարիչներ, Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան, ՆԱՍԴԱԲ ՕԷՄԷԲՍ ԱՐՄԵՆԻԱ ԲԲԸ-ն և 21 առևտրային բանկերը,
- 138 գրավատներ,
- 203 արտարժույթի առք ու վաճառք իրականացնող փոխանակման կետեր (մասնաճյուղերը ներառված չեն),
- 6 դրամական փոխանցումներ իրականացնող ընկերություն,
- վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություն,
- 16 հաշվետու թողարկողներ:³⁰

Նույն ժամանակահատվածում բանկային համակարգի ընդհանուր ակտիվները կազմում են 3 տրլն 449 մլրդ դրամ, ընդհանուր կապիտալը կազմում է 506,57 մլրդ դրամ, ընդհանուր պարտավորությունները կազմում են 2 տրլն 943 մլրդ դրամ:

Բանկային համակարգի ակտիվների 61.1%-ը (կամ 1 տրլն 786 մլրդ դրամը) բաժին է ընկնում տնտեսությանը տրամադրած վարկերին (վարկերի 93.9%-ը բաժին է ընկնում «ստանդարտ դասի վարկերին»): Բանկերի պարտավորությունների 61.8%-ը (կամ 1 տրլն 538 մլրդ դրամը) կազմում են ֆիզիկական և իրավաբանական (բացառությամբ ֆինանսական կազմակերպությունների) անձանցից ներգրավված միջոցները: Բանկային համակարգի կապիտալի կազմում (փաստացի լրացված) կանոնադրական հիմնադրամի մեծությունը կազմում է 282.8 մլրդ դրամ: 30.06.2014 թվականի դրությամբ բանկային համակարգը ապահովել է 18.3 մլրդ դրամ զուտ շահույթ, շահութաբերությունը ըստ ակտիվների (ROA տարեկանացված) կազմել է

³⁰ ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ ԿԲ-ի պաշտոնական կայքէջ՝ <http://www.cba.am/>

1.3%, շահութաբերությունը ըստ կապիտալի (ROE տարեկանացված)՝ 8.0%: ՀՀ բանկային համակարգում կենտրոնացվածությունը գնահատվում է ցածր. կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցը ՀՀ բանկային համակարգում 30.06.2014 թվականի դրությամբ ըստ ընդհանուր ակտիվների կազմում է 0.071, ըստ ընդհանուր պարտավորությունների՝ 0.073, ըստ ընդհանուր կապիտալի՝ 0.063:³¹

Շնորհիվ ՀՀ բանկային համակարգի տնտեսություն մուտք գործեցին միջազգային ֆինանսական կազմակերպությունների կողմից երկարաժամկետ փոխառություններ, որի արդյունքում սկսվեց տնտեսության իրական հատվածին անհրաժեշտ երկարաժամկետ վարկավորման գործընթացը, կայացան մրցունակ և կայուն դրամական հոսքեր ունեցող ձեռնարկությունները: Սկսած 2000թ. տնտեսությունում կատարված վարկային ներդրումներն աճել են և գրեթե կրկնապատկվել երկարաժամկետ վարկերը:

Բացի այդ, ՀՀ բանկային համակարգում իրականացվում են ակնհայտ դրական փոփոխությունները: ՀՀ բանկային համակարգը համագործակցում է Համաշխարհային բանկի, Արժույթի Միջազգային Հիմնադրամի, Սևծովյան միջազգային առևտրային բանկի, ինչպես նաև արտասահմանյան առաջավոր երկրների որոշ բանկերի հետ:

1990-ական թթ-ին Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի մեծ մասի գործունեության հիմնական նպատակն է ներգրավել հաճախորդների միջոցները՝ ավանդների և դեպոզիտների տեսքով: Ընդ որում, տեսականու քաղաքականության կատարելագործման և առաջարկվող ծառայությունների որակի բարելավման հարցերը բանկերի կողմից գրեթե չէին դիտարկվում: Մանրաձախ բիզնեսին նման մոտեցումն ամբողջությամբ անտեսում էր շուկայագիտության ժամանակակից սկզբունքները և շուկայի պահանջները: Հետևաբար, բանկերի ընդհանուր մարքեթինգային ռազմավարությունը համապատասխանում էր շուկայագիտության արտադրական հայեցակարգին:³²

³¹ ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ ԿԲ-ի պաշտոնական կայքէջ՝ <http://www.cba.am/>

³² Жарковская, Е. И., Арендс, И.У. Банковское дело / Е.И. Жарковская, И.У. Арендс. – Москва: Омега-Л, 2010, էջ 145

Բանկային գործում պետական մենաշնորհից հրաժարվելուց հետո, ցավոք, բանկային ծառայությունների շուկայում համապատասխան ուշադրության չէր արժանանում այնպիսի անուղղակի ակտիվ, ինչպիսին բնակչության վստահությունն էր:

Բանկային ծառայությունների տեսականին ներկայացված էր շատ քիչ ծառայություններով՝ ավանդներ, սահմանափակ բնույթի փոխանցումներ, փոխարկային գործառնություններ և միայն որոշ բանկերի կողմից՝ բանկային քարտեր: Բացի այդ, ՀՀ բանկային շուկային երկար ժամանակ բնորոշ էր ծառայությունների մշակումը՝ առանց հաճախորդի շահերը հաշվի առնելու, չնայած որ ծառայությունների նշանակությունը կայանում է ոչ այնքան դրանց տիրապետելու, որքան հաճախորդի որոշակի պահանջմունքները բավարարելու հնարավորության մեջ: Այս ամենի հետ կապված՝ բանկային շուկայում արդիական խնդիր էր դառնում նպատակային շուկայի պահանջներին համապատասխան ապրանքատեսականու ձևափոխումը:³³

Բանկային ծառայությունների շուկան գրավելու և դրա հիման վրա իրենց շահույթն անցկացնելու բանկերի ձգտումը պահանջում է չսահմանափակել միայն ավանդական ծառայություններ մատուցելով: Այս ոլորտի գործնական մասնագետները խորհուրդ են տալիս ներդնելու այնպիսի նորույթներ, ինչպիսիք են անհատական պահախցիկները (ՀՀ-ում արդեն կիրառվում են որոշ բանկերի կողմից, սակայն՝ սահմանափակ հնարավորություններով), հաճախորդների ակտիվների հավատարմագրային կառավարումը՝ բանկային զանազան տրաստների ստեղծման ճանապարհով, լրացուցիչ ծառայությունների մատուցումը բանկային քարտապանների սպառողական վարկավորումը, ինտերնետ և հեռախոսային բանկինգը և այլն: Հաճախորդների կողմից ձեռք բերված ծառայություններով բավարարվածությունները կարող է ապահովել բանկի նկատմամբ լոյալության և վստահության որոշակի մակարդակով:

³³ Основы банковского дела / Коробов, Ю. А. и др.; под ред. Ю.А. Коробова, Г.Д. Коробовой. – Москва: ИНФРА-М, 2014, էջ 165-166

1.3 ՀՀ բանկային համակարգի գործունեության առանձնահատկությունները արդի փուլում

2016թ.-ի մարտի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել են 22 առևտրային բանկեր 497 մասնաճյուղերով, որոնցից 198-ը գտնվում են Երևանում, 265-ը՝ շրջաններում, 31-ը՝ ԼՂՀ-ում, և 2-ը՝ արտերկրում:

Աղյուսակ 1. ՀՀ առևտրային բանկերի մասնաճյուղային ցանցը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ

	Բանկի անվանումը	Մասնաճյուղերի քանակը	Մասնաճյուղերը ԼՂՀ-ում*	Մասնաճյուղերը արտերկրում
1.	«ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ	56	0	0
2.	«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ	13	1	0
3.	«ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ	13	0	0
4.	«ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ԳԱԶՊՐՈՍԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ» ՓԲԸ	16	0	0
5.	«ԱՐԱՐԱՏԲԱՆԿ» ԲԲԸ	51	1	0
6.	«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ	55	7	1
7.	«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ	1 /գլխ./	0	0
8.	«ԱՐՑԱԽԲԱՆԿ» ՓԲԸ	22	12	0
9.	«ԲԻԲԼՈՍ ԲԱՆԿ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ	5	0	0
10.	«ԲՏԱ ԲԱՆԿ» ՓԲԸ	5	0	0
11.	«ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» ԲԲԸ	9	1	0
12.	«HSBC ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ	7	0	0
13.	«ԻՆԵԿՈԲԱՆԿ» ՓԲԸ	27	0	0
14.	«ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» ՓԲԸ	34	1	0
	«ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԿ» ԲԲԸ	1 /գլխ./	0	0
15.	«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ	46	7	0
16.	«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ	40	1	0
17.	«ՄԵԼԼԱԹ ԲԱՆԿ» ՓԲԸ	1 /գլխ./	0	0
18.	«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ՓԲԸ	47	2	1
19.	«ՊՐՈ ԿՐԵԴԻՏ ԲԱՆԿ» ՓԲԸ	11	0	0

20.	«ՊՐՈՄԵԹԵՅ ԲԱՆԿ» ՍՊԸ	10	0	0
21.	«ՎՏԲ – ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿ» ՓԲԸ	67	0	0

* - 2016թ. հունվարի 1-ի դրությամբ Լեռնային Ղարաբաղում գործող Հայաստանի առևտրային բանկերի մասնաճյուղերի վարկային պորտֆելի համախառն ծավալը, 2015թ.-ի նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 40,6 տոկոսով և կազմել 116388,2 մլն դրամ: Ընդհանուր վարկային պորտֆելում 52,4 տոկոսը կազմում են արժույթային վարկերը: Ժամկետանց վարկերի մասնաբաժինը կազմում է 0,65 տոկոս:

Աղյուսակ 1-ում արտացոլված են 2016թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ-ում գործող բոլոր բանկերը, իրենց մասնաճյուղերով: Նշենք, որ մասնաճյուղերի քանակի մեջ ներառված են նաև գլխամասերը: Աղյուսակից երևում է, որ Հանրապետության 21 բանկերից 9-ը մասնաճյուղեր ունեն ոչ միայն ՀՀ տարածքում, այլև ԼՂՀ-ում, իսկ 2-ը՝ նաև արտերկրում (Յունիբանկը՝ Ռուսաստանի Դաշնությունում, Արդշինինվեստբանկը՝ Ֆրանսիայում): Ըստ սեփականության ձևի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող 21 առևտրային բանկերից 1-ը ՍՊԸ է, 4-ը՝ ԲԲԸ, իսկ 16-ը՝ ՓԲԸ:³⁴


Նշենք, որ 2015 թ.-ի դրությամբ ՀՀ-ում ամենախոշոր կապիտալ ունեցող բանկերն են՝ Ամերիաբանկը (60,5 մլրդ. դրամ), ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ (42,9 մլրդ. դրամ), ՎՏԲ-Հայաստան բանկը (41,7 մլրդ. դրամ): Ամենափոքր կապիտալ ունեցող բանկերն են՝ Զարգացման հայկական բանկը (8,3 մլրդ. դրամ), Բիբլոս (7,9 մլրդ. դրամ) և ԲՏԱ բանկերը (5,4 մլրդ. դրամ): Պետական բյուջե ամենամեծ ծավալի հարկեր մուծող բանկերն են եղել՝ Ամերիաբանկը, HSBC Բանկը, ՎՏԲ-Հայաստան Բանկը, Հայբիզնեսբանկը ու Արդշինբանկը:³⁵

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2015 թ.-ի ընթացքում աճել են 19.2%-ով կամ 231.8 մլրդ. դրամով, ընդ որում՝ չորրորդ եռամսյակում ակտիվներն ավելացել են մոտ 86.8 մլրդ. դրամով կամ 7.2%-ով: Նշենք, որ 2015թ.-ի ընթացքում ընդհանուր ակտիվներն ավելացել էին 29.9%-ով կամ 325.4 մլրդ. դրամով և տարեվերջին կազմել 3,449 մլրդ. դրամ (Գծանկար 2):

³⁴ ՀՀ բանկային համակարգի հիմնական հաշվեկշռային ցուցանիշները 2016թ. հունվարի 1-ի դրությամբ, ՀՀ ԿԲ-ի պաշտոնական կայքէջ՝ <http://www.cba.am/>

³⁵ Բանկային համակարգի ցուցանիշները 2015թ. www.aysor.am

Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2010-2015թթ.-ին



2006թ.-ից սկսած բանկային համակարգի ընդհանուր ակտիվները պարբերաբար աճել են և դրանց աճն ապահովվել է հիմնականում բարձր իրացվելի ակտիվների՝ կանխիկի, թղթակցային հաշիվներում մնացորդի, պետական արժեթղթերում ներդրումների և վարկային ներդրումների աճի հաշվին:

Հայաստանի առևտրային բանկերի վարկային ներդրումները 2015 թվականի մարտին տարեսկզբի համեմատ կրճատվել են 5 տոկոսով և կազմել մոտ 1 893,7 մլրդ դրամ 14.2 տոկոսանոց ժամկետանց վարկերի ֆոնին:

ԱՎԾ տվյալներով, դրամով տրամադրված վարկերը մարտին, կրճատվել են 5.1 տոկոսով՝ կազմելով ավելի քան 632.1 մլրդ դրամ: Միաժամանակ արտարժույթով նույնպես կրճատվել են 5 տոկոսով՝ մինչև 1 084,3 մլրդ դրամ:³⁶

Վարկավորման ծավալի կրճատումը հաշվետու ժամանակահատվածում կապված է 2014 թվականի դեկտեմբերին դրամի արժեզրկման, հիմնականում, Կենտրոնական բանկի կողմից որոշ նորմատիվների, մասնավորապես, պարտադիր պահուստավորման նորմատիվի բարձրացման ֆոնին: Այսպես, դրամային իրացվելիության պակասի պատճառով, որոշ հայկական բանկեր, մասնավորապես,

³⁶ Տե՛ս ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջը՝ www.armstat.am

2015 թվականի հունվարին սահմանափակել են վարկավորումը, վարկեր են տրամադրել միայն առանձին դեպքերում:


Միաժամանակ, 2015 թվականի մարտին տարեսկզբի համեմատ ավելացել են բանկերի ժամկետանց վարկերը 14.2 տոկոսով՝ կազմելով 37.13 մլրդ. դրամ, ընդ որում՝ դրանցից մոտ 25 մլրդ. դրամը բաժին է ընկնում կարճաժամկետ վարկերին:

Վիճակագրության տվյալներով, հաշվետու ժամանակահատվածում երկարացված վարկերն աճել են 6 տոկոսով՝ մինչև 130.8 մլրդ. դրամ:

Այսպես, 2015 թ.-ին առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերը կազմել են 2 տրլն. 119 մլրդ. դրամ, որը նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ նվազել է 69 մլրդ. դրամով, իսկ ավանդները կազմել են 1 տրլն. 951 մլրդ. դրամ, որտեղ աճը կազմել է 194 մլրդ. դրամով:

Գծանկար 3


2016 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ վարկերի կառուցվածքը՝ ըստ տնտեսության ճյուղերի (մլրդ. դրամ)*



* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճագրական Ծառայություն, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016

ՀՀ բանկային համակարգում վարկային ներդրումների փոփոխության դինամիկան ներկայացնենք հետևյալ գծապատկերի տեսքով.

2016 թ.-ի հունվարի 1-ի դրությամբ վարկային ներդրումների փոփոխության դինամիկան ՀՀ բանկային համակարգում*




* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճագրական Ծառայություն, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016

Թեև դրական է, որ բանկային համակարգի ակտիվները և ընդհանուր կապիտալը աճ են գրանցել, սակայն բանկային համակարգը տարին եզրափակել է վնասով, որը կազմել է 20,57 մլրդ. դրամ: Իհարկե, ոչ բոլոր բանկերն են տարին փակել վնասով: Նշենք, որ 2014 թ.-ին բանկային համակարգի ընթացիկ չբաշխված շահույթը կազմել է 122,38 մլրդ. դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում շահույթի տեմպերի նվազեցումը հիմնականում պայմանավորված է եղել վարկային ծավալների անկման արդյունքում եկամուտների նվազմամբ, ինչպես նաև ավանդների աճով, որի արդյունքում աճել են տոկոսային ծախսերը:

Վարկերի ծավալների անկումը պայմանավորված է եղել առևտրային բանկերի կողմից իրականացվող զգուշավոր քաղաքականությամբ, ինչպես նաև բարձր վարկային տոկոսադրույքների պատճառով և բիզնեսի կողմից վարկերի նկատմամբ պահանջարկի նվազմամբ: Որոշակի դեր են խաղացել նաև չաշխատող և ռիսկային վարկերի չհետվերադարձման արդյունքում առաջացող վնասները, ինչպես նաև ոչ տոկոսային ծախսերի և այլ ծախսերի աճը:

2016թ.-ի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների ծավալը կազմել է մոտ 2,943 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նույն ժամկետի համեմատ աճել է 16.8%-ով: Վերոնշյալ ցուցանիշը հաշվետու տարվա չորրորդ եռամսյակում աճել է 9.0%-ով կամ 102.6 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարի այդ ցուցանիշը կազմել է 2447.6 մլրդ դրամ: 2016թ.-ի տարեվերջին ընդհանուր պարտավորությունները 2013 և 2014թթ.-ի համեմատ աճել են համապատասխանաբար՝ 452.5 և 648.1 մլրդ դրամով, իսկ 2012թ.-ի համեմատ՝ 836.7 մլրդ դրամով (Գծանկար 5):


Գծանկար 5. ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2011-2015թթ.*



* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճագրական Ծառայություն, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016

Ընդհանուր պարտավորությունների կազմում ֆիզիկական անձանց համախառն ավանդները (ցպահանջ և ժամկետային) հաշվետու տարվա ընթացքում աճել են 20.1%-ով կամ 68.3 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 0.7 %-ով կամ 2.6 մլրդ դրամով և տարեվերջին համապատասխանաբար կազմել 407.8 և 369.5 մլրդ դրամ, ընդ որում՝ ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների տարեկան աճը կազմել է 22.3 % կամ 55.4 մլրդ դրամ, իսկ իրավաբանական անձանց ժամկետային ավանդների նվազումը՝ 2.1% կամ մոտ 3.8 մլրդ դրամ (Գծանկար 6):

ՀՀ բանկային համակարգի ցապահանջ և ժամկետային ավանդների կառուցվածքը 2015թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ (մլրդ. դրամ)*




Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016, www.cba.am

Տեղին է նշել, որ վերոնշյալ ցուցանիշների աճ է գրանցվել նաև 2015թ. չորրորդ եռամսյակի ընթացքում. այսպես, ֆիզիկական անձանց համախառն ավանդներն (ցապահանջ և ժամկետային) աճել են 10.6 %-ով կամ 38.9 մլրդ. դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 12.4%-ով կամ 33.5 մլրդ. դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 7.1%-ով կամ 24.6 մլրդ. դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 15.4%-ով կամ 23.9 մլրդ. դրամով: Համադրելիության համար նշենք, որ 2014թ.-ի ընթացքում ֆիզիկական անձանց համախառն ավանդներն աճել էին 44.8%-ով կամ 105.0 մլրդ. դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 45.3%-ով կամ 77.6 մլրդ. դրամով, իսկ իրավաբանական անձանց համախառն ավանդները՝ 66.5 %-ով կամ 146.5 մլրդ. դրամով, այդ թվում՝ ժամկետային ավանդները՝ 105.4 %-ով կամ 94.0 մլրդ. դրամով (Գծանկար 7):

Գծանկար 7.

ՀՀ բանկային համակարգի ժամկետային ավանդների փոփոխության դինամիկան 2015թ.*




* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016, www.cba.am

Այստեղից կարելի է եզրակացնել, որ 2015թ. չորրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդները աճել են 5.5 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց ցպահանջ ավանդները՝ 0.7 մլրդ դրամով: Համեմատության համար նշենք, որ 2014թ.-ի չորրորդ եռամսյակի ընթացքում ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդները նվազել են 0.9 մլրդ դրամով, իսկ իրավաբանական անձանց ցպահանջ ավանդները աճել են 26.3 մլրդ դրամով (Գծանկար 8):

Ասվածին միայն ավելացնենք, որ ներգրավված ավանդների (ֆիզիկական և իրավաբանական անձանց) ծավալը հաշվետու տարվա վերջում կազմել է ընդհանուր պարտավորությունների 62.8 %-ը:

ՀՀ բանկային համակարգի ցյախանշ ավանդների փոփոխության դինամիկան 2015թ.*



* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016, www.cba.am


Աճի միտում է դրսևորվել նաև ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր կապիտալում: ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալը 2015թ. ընթացքում աճել է 15.2 %-ով կամ 43.5 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 506.57 մլրդ դրամ, որը հիմնականում ապահովվել է կանոնադրական կապիտալի և եկամուտների պահուստի ավելացման հաշվին: Ինչպես երևում է գծանկար 9-ից, 2014 թ.-ին բանկերի ընդհանուր կապիտալը կազմել է 498.4 մլրդ դրամ, որը նախորդ տարվա համեմատ աճել է 27.2 մլրդ դրամով:

Ընդ որում՝ ընդհանուր կապիտալը 2015թ. չորրորդ եռամսյակում ավելացել է 4.0%-ով կամ 12.6 մլրդ դրամով: Տեղին է նշել, որ ընդհանուր կապիտալը նախորդ տարվա ընթացքում ավելացել էր 1.64%-ով կամ 8.17 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի բաղկացուցիչներից չբաշխված շահույթի (եկամուտների պահուստը) ցուցանիշը չորրորդ եռամսյակում աճել է 17.3 %-ով կամ 19.1 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 129.2 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 39.1%-ը, ընդ որում՝ վերոնշյալ ցուցանիշը տարվա կտրվածքով աճել է 43.1%-ով կամ 38.9 մլրդ դրամով: Ընդհանուր կապիտալի մյուս կարևոր բաղկացուցիչ մասը՝

կանոնադրական կապիտալը, հաշվետու տարվա ընթացքում աճել է 8.0%-ով կամ 24 մլրդ դրամով և տարեվերջին կազմել 203.8 մլրդ դրամ կամ ընդհանուր կապիտալի 61.7%-ը:

Գծանկար 9


Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի դինամիկան 2006-2010 թթ.-ին*



*Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016, www.cba.am

Հարկ է նշել, որ կանոնադրական կապիտալի աճ չի գրանցվել հաշվետու տարվա չորրորդ եռամսյակում (Գծանկար 10): Մինչույն ժամանակ արձանագրենք, որ 2014թ.-ի ընթացքում կանոնադրական կապիտալն ավելացել էր 23.7 %-ով կամ 36.2 մլրդ դրամով:

Բանկային համակարգի կապիտալի և չբաշխված շահույթի դինամիկան 2015թ.*




*Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016, www.cba.am

2014թ.-ին առևտրային բանկերի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 22.6 մլրդ դրամով, իսկ ծախսերը 37.7 մլրդ դրամով, 2013թ.-ի և 2012թ.-ի համեմատ եկամուտները աճել են 68.3 և 93.3 մլրդ դրամով, իսկ ծախսերը՝ 74.16 և 93.7 մլրդ դրամով, տարեվերջին կազմելով համապատասխանաբար՝ 186.2 և 165.2 մլրդ դրամ:

2015թ. ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր եկամուտները նախորդ տարվա համեմատ աճել են 13.8 %-ով կամ 25.7 մլրդ դրամով, իսկ ծախսերը՝ 2.2%-ով կամ 3.6 մլրդ դրամով՝ տարեվերջին կազմելով համապատասխանաբար 212.0 և 168.9 մլրդ դրամ, ընդ որում՝ չորրորդ եռամսյակի ընթացքում ընդհանուր եկամուտների աճը կազմել է 39.4% կամ 59.9 մլրդ դրամ, իսկ ծախսերինը՝ 37.8 % կամ 46.4 մլրդ դրամ (Գծանկար 11):

Բանկային համակարգի ընդհանուր եկամուտների և ընդհանուր ծախսերի
դինամիկան 2011-2015 թթ.-ին*



* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճագրական Ծառայություն, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016

Գլուխ 2. Կորպորատիվ հաճախորդների վարկավորման գործընթացի առանձնահատկությունները և վարկային ներդրումների դինամիկան ՀՀ բանկային համակարգում

2.1. Վարկավորման գործընթացի առանձնահատկությունները և կորպորատիվ հաճախորդների վարկունակության գնահատումը

Վարկային քաղաքականության իրագործման մեթոդական ապահովման կարևոր բաղադրամաս է վարկերի տրամադրման կարգը, որով սահմանվում է բանկի կողմից իրավաբանական անձանց, անհատ ձեռներեցների և քաղաքացիների վարկավորման ընթացակարգերը: Տարբեր բանկերում կիրառվում են տարատեսակ վարկերի տրամադրման տարբեր ընթացակարգեր, որոնք կախված են մի շարք հանգամանքներից, այդ թվում՝ հավանական վարկառուի ձեռնարկատիրական գործունեության առանձնահատկություններից, վերլուծության և գնահատման մեթոդիկայից, վարկերի տեսակներից, ապահովվածությունից, վարկի գումարից և այլն: Այսպես, օրինակ, սպառողական վարկերի տրամադրման և սպասարկման գործընթացը արմատապես տարբերվում է գյուղատնտեսական գործունեության համար պահանջվող վարկերի համանման գործընթացներից: Մասնավորապես, ոսկու գրավադրմամբ վարկավորման դեպքում սովորաբար չկա վարկառուի վարկունակության, գործարար շրջանակներում նրա ունեցած համբավի, նրա հետ փոխկապակցված անձանց և այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման անհրաժեշտություն: Եվ ընդհակառակը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին վարկ տրամադրելու դեպքում նմանատիպ գործոնների դերի թերագնահատումը կարող է ծանր հետևանքներ ունենալ վարկատուի համար:³⁷

Ժամանակակից պայմաններում յուրաքանչյուր առևտրային բանկ ունի մշակված վարկերի տրամադրման սեփական կարգը, որն էլ հաճախ սխալմամբ անվանում են վարկավորման գործընթաց: Դա է պատճառը, որ վարկերի տրամադրման ընթացակարգը ՀՀ բանկերում արմատապես տարբերվում է մեկը մյուսից,

³⁷ Пол Х. Аллен. Реинжиниринг банка: программа выживания и успеха. Альпина Паблишер. Год издания: 2015, էջ 75

ինչը ողջունելի չէ: Դա է պատճառը, որ ատենախոսության շրջանակներում փորձելու ենք առաջարկել վարկերի տրամադրման և վարկավորման գործընթացի համապարփակ կարգ: Այսպես՝

Կորպորատիվ հաճախորդներին վարկերի տրամադրման կարգը ՀՀ բանկերում պետք է բաղկացած լինի հետևյալ բաժիններից և հաջորդականությամբ՝

- ✚ հավանական վարկառուի և վարկավորման նպատակների ուսումնասիրություն,
- ✚ վարկառուի ֆինանսական վիճակի գնահատում՝ բանկ ներկայացվող փաստաթղթերի հիման վրա,
- ✚ վարկային ռիսկի գնահատում,
- ✚ ըստ վարկերի տրամադրման և մարման կարգի՝ վարկավորման ընթացակարգի կառավարում,
- ✚ վարկերի օգտագործման և մարման նկատմամբ մշտադիտարկում,
- ✚ վարկերի ժամանակին վերադարձման ապահովում:

Վարկավորման գործընթացը նախատեսում է որոշակի հաջորդական փուլեր, որոնք, կախված վարկերի տեսակներից, պայմանականորեն կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- ✚ նախապատրաստական փուլ. դիմում-հայտի ընդունում, ընդհանուր տեղեկատվական բնույթի հարցաթերթիկների լրացում և այլն,
- ✚ միջանկյալ փուլ, որը վարկի տրամադրման գործընթացի ամենաառանցքային փուլն է այն իմաստով, որը ներառում է վարկի տրամադրման նպատակահարմարության քննարկման և որոշման կայացման գործընթացները,
- ✚ եզրափակիչ փուլ, որը կախված է վարկային պայմանագրով ամրագրված վարկի մարման ժամկետից: Այն բնութագրվում է վարկառուի կողմից վարկային պարտավորությունների կատարման ավարտով կամ դրանց չկատարման (ոչ պատշաճ կատարման) համար բանկի կողմից ձեռնարկվող միջոցառումների իրականացմամբ:

ՀՀ առևտրային բանկերում ներկայումս վարկերի տրամադրման մասին որոշման կայացումը կատարվում է երկու եղանակով: Կախված վարկի տեսակից, չափից, ապահովվածության մակարդակից, ռիսկայնության աստիճանից և այլ

գործոններից՝ բանկերը կարող են լիազորել վարկային ստորաբաժանմանը ինքնուրույն որոշումներ ընդունել որոշակի տեսակի վարկերի տրամադրման վերաբերյալ: Այս դեպքում վարկային բաժնի աշխատակիցներին տրվում են տարբեր չափաքանակներով վարկերի տրամադրման իրավասություններ: Երկրորդ եղանակը նախատեսում է վարկի տրամադրման որոշման կայացում կոլեգիալ մարմնի՝ վարկային կոմիտեի կողմից, որի կազմում ընդգրկվում են բանկի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարները: Առանձնահատուկ դեպքերում՝ ընթացիկ վարկային քաղաքականությամբ չնախատեսված կամ առավել խոշոր գումարներով վարկերի տրամադրման նպատակահարմարության քննարկումն ու որոշման կայացումն իրականացնում է բանկի խորհուրդը:³⁸

Օրինակ, ըստ «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ» ՓԲԸ-ի վարկային քաղաքականության՝ վարկի տրամադրման կամ տրամադրումը մերժելու որոշումներ ընդունելու իրավասություն ունեն՝ Բանկի մասնաճյուղի կառավարիչները, Բանկի մասնաճյուղերի վարկային կոմիտեները, Բանկի կորպորատիվ բիզնեսի (մանրածախ բիզնեսի զարգացման) դեպարտամենտի տնօրենը, Բանկի վարչության նախագահը, Բանկի վարկային կոմիտեն, Բանկի վարչությունը, Բանկի խորհուրդը՝ յուրաքանչյուրը նրանց համար վարկային քաղաքականությամբ հաստատված սահմանաչափերի սահմաններում:³⁹

Անկախ վարկի տրամադրման մասին որոշման կայացման եղանակից՝ վարկային մասնագետը միջանկյալ փուլում պետք է պարզի որոշակի հարցերի շրջանակ և վարկի համապատասխանությունը բանկի վարկային քաղաքականությամբ ընդունված նորմերին: Վարկային մասնագետը հարցազրույց է անցկացնում հաճախորդի հետ, ինչը նրան հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմել հաճախորդի, վարկի նպատակի, վարկային ռեսուրսի անհրաժեշտության առաջացման և տվյալ գործունեության հաջողության հասնելու հավանականության մասին: Վարկային մասնագետը պետք է հնարավորինս շատ տեղեկատվություն ձեռք բերի հավանական վարկառուի ֆինանսական կայունության և վճարունակության վերաբերյալ:

³⁸ Банковское дело. под ред. Г.Г. Коробовой. Издательство: Экономистъ. М., Год издания: 2006, էջ 155

³⁹ <https://www.acba.am/hy/business/get-a-loan/Fixed-rate-loans>

Թե՛ այս, թե՛ սպասարկման փուլում կարևորվում է մոնիտորինգի դերը:

Ըստ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի «Փոխառուի մոնիթորինգի իրականացման կարգի» մոնիթորինգի նպատակն է փոխառուի ֆինանսատնտեսական գործունեության պարբերաբար ուսումնասիրությունների միջոցով գնահատել և կառավարել փոխառուի հետ կապված վարկային ռիսկը: Ըստ այս կարգի՝ մոնիտորինգի իրականացման եղանակներն են.

" տեղում (օնսայթ) մոնիթորինգ, այսինքն փոխառուի մոնիտորինգ նրա գործունեության վայրում, կամ այն վայրում, որտեղ օգտագործվել և/կամ օգտագործվում են բանկի կողմից տրված վարկային միջոցները՝ անմիջական ուսումնասիրությունների և գույքագրումների միջոցով,

" հեռակա (օֆսայթ) մոնիթորինգ, այսինքն փոխառուի մոնիտորինգ բանկի տարածքում առանց վերջինիս գործունեության վայր այցելելու:⁴⁰

Փոխառուի մոնիտորինգն իրականացնող անձը (բանկի ռիսկերի կառավարման դեպարտամենտի համապատասխան ստորաբաժանում, ստորաբաժանման աշխատակից և մոնիտորինգի իրականացման աշխատանքում ներգրավված բանկի աշխատակից հանդիսացող կամ չհանդիսացող անձ) չի կարող ուղղակիորեն ներգրավված լինել և մասնակցություն ունենալ տվյալ փոխառուի գծով վարկի տրամադրման և /կամ վարկի տրամադրման որոշման ընդունման գործում:

Ըստ այս կարգի՝ մոնիթորինգի իրականացման նպատակներն են.

1. վարկի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողությունը,
2. փոխառուի (երաշխավորի) ֆինանսական վիճակի պարբերական ուսումնասիրությունը, գնահատումը և դրա հետ կապված հիմնախնդիրների բացահայտումը,
3. գրավի փաստացի առկայության, դրա վիճակի և պահպանության ստուգումը,
4. վարկի սպասարկման պայմանների փոփոխության հետ կապված համապատասխան եզրահանգումների կատարումը:

Սակայն վերոհիշյալ երկու օրինակներն էլ օժտված են որոշակի թերություններով, ինչը, իր հերթին, բացասաբար է անդրադառնում բանկի կողմից իրականաց-

⁴⁰ ^Տե՛ս Արդշինբանկ ՓԲԸ-ի «Փոխառուի մոնիտորինգի իրականացման կարգ», Երևան, 2015թ., էջ 6

վող վարկային քաղաքականության արդյունավետության վրա: Այս տեսանկյունից, ելնելով ՀՀ առևտրային բանկերում իրականացվող վարկային գործընթացների առանձնահատկություններից, նպատակահարմար ենք գտնում առաջարկել կորպորատիվ հաճախորդների վարկային համապարփակ մշտադիտարկման անցկացումը ՀՀ բոլոր առևտրային բանկերում ամբողջական և ընտրանքային ընդգրկվածության սկզբունքով: Ամբողջական ընդգրկվածության սկզբունքը ենթադրում է տվյալ խմբում ներառված յուրաքանչյուր փոխառուի պարտադիր մշտադիտարկում, իսկ ընտրանքային ընդգրկվածության սկզբունքը՝ ընտրանքի խմբում ընդգրկված փոխառուների առնվազն 10%-ի ուսումնասիրություն:

Կորպորատիվ հաճախորդների ամբողջական ընդգրկվածության սկզբունքով մշտադիտարկումն անհրաժեշտ է իրականացնել՝

1. Բանկերի ներքին իրավական ակտերի պահանջների շեղումներով վարկ ստացած փոխառուների գծով՝ անկախ վարկի գումարի մնացորդից,
2. 14 օր և ավելի ժամկետանց վարկային պարտավորություններ ունեցող փոխառուների գծով՝ անկախ վարկային պարտավորության գումարի մնացորդից,
3. այն փոխառուների գծով, որոնց տրամադրված վարկերի պայմանները վերանայվել են,
4. առևտրային վարկերի գծով 6 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ և ավելի վարկային պարտավորության մնացորդային գումար ունեցող փոխառուների գծով,
5. Կազմակերպության ֆիզիկական անձ փոխառուների գծով 3 մլն ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթ և ավելի վարկային պարտավորության մնացորդային գումար ունեցող փոխառուների գծով:

Ընտրանքային ընդգրկվածության սկզբունքով մշտադիտարկումն անհրաժեշտ է իրականացնել՝

1. 1-3 մլն ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի վարկային պարտավորության մնացորդային գումար ունեցող կազմակերպության ֆիզիկական անձ փոխառուների գծով,

2. Առևտրային վարկերի գծով մինչև 6 մլն ՀՀ դրամի կամ համարժեք արտարժույթի վարկային պարտավորության մնացորդային գումար ունեցող փոխառուների գծով:

Ամբողջական ընդգրկվածության սկզբունքով մշտադիտարկման ենթակա փոխառուների գծով հեռակա մոնիտորինգն անհրաժեշտ է իրականացնել վարկի տրամադրման օրվանից սկսած առնվազն 6 ամիսը մեկ պարբերականությամբ, իսկ տեղում մշտադիտարկումը՝ տարին մեկ անգամ պարբերականությամբ:

Հեռակա մշտադիտարկումը ՀՀ առևտրային բանկերում իրականացվում է փոխառուից ստացված փաստաթղթերի, հաշվետվությունների և այլ տվյալների ուսումնասիրության միջոցով, ստացված փաստաթղթերի հիման վրա հնարավորինս ստուգվում են վարկի նպատակային օգտագործման գործընթացը: Տեղում մշտադիտարկման իրականացման ընթացքում պարտադիր ստուգվում են հեռակա մոնիտորինգի ընթացքում ստացված հաշվետվությունների արժանահավատությունը, վարկի նպատակային օգտագործման գործընթացը, իրականացվում է փոխառուի ֆինանսական վիճակի վերլուծություն՝ այդ թվում արտաքին տնտեսական միջավայրի փոփոխություններով պայմանավորված, հիմնադիրների, մասնակիցների և գործադիր մարմնի կազմում տեղի ունեցած փոփոխությունների ուսումնասիրություն, ինչպես նաև իրականացվում է գրավի փաստացի առկայության և դրա վիճակի ստուգումը: Տեղում փոխառուի յուրաքանչյուր հաջորդ մոնիտորինգի իրականացման ընթացքում պարտադիր համեմատվում են նախորդ մոնիտորինգի արդյունքները և բացահայտվում փոխառուի վիճակի փոփոխության միտումները:

Հեռակա և տեղում մշտադիտարկման իրականացման արդյունքում կազմվում է հաշվետվություն: Մոնիտորինգի արդյունքներով ի հայտ եկած խնդիրների դեպքում մշտադիտարկում իրականացնող անձը իր հաշվետվության արդյունքում ներկայացնում է առաջարկություն.

- ✚ վարկի պայմանների վերանայման անհրաժեշտության վերաբերյալ,
- ✚ տվյալ փոխառուի վարկի գծով հատուկ պահուստին ուղղվող մասհանման չափերի փոփոխության վերաբերյալ,
- ✚ տվյալ փոխառուի վարկի ապահովվածություն հանդիսացող գրավը բանկի կողմից ընդունելի մեկ այլ գրավով ավելացնելու կամ փոփոխելու վերաբերյալ,

- ✚ վարկի վաղաժամկետ մարման պահանջ փոխառուին ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ,
- ✚ գրավի առավել մասնագիտական ուսումնասիրության և կրկնակի գնահատման անհրաժեշտության վերաբերյալ,
- ✚ հիմնավոր այլ առաջարկություններ, որոնք կնպաստեն փոխառուի վարկային ռիսկի առավել արդյունավետ կառավարմանը:

Բանկի մասնաճյուղերը մշտադիտարկման հաշվետվությունները ներկայացնում են բանկի ռիսկերի կառավարման դեպարտամենտին:

Մշտադիտարկման արդյունավետ իրականացման դեպքում բանկը կարող է ճշտել ռիսկայնության աստիճանը և որոշել իր հետագա գործելակերպը:

Կորպորատիվ հաճախորդի (վարկառուի) վարկունակությունը իրենից ներկայացնում է հաճախորդի՝ վարկ ստանալու, այն մարելու և դրա դիմաց հաշվարկվող տոկոսները վճարելու իրավական և ֆինանսական հնարավորությունների ամբողջությունը: Վարկունակությունը վարկային գործարքի ռիսկայնության գնահատականն է, որը տրվում է բանկի կողմից մինչև վարկի տրամադրման վերաբերյալ որոշում կայացնելը և հնարավորություն է տալիս կանխատեսել վարկի ժամանակին վերադարձը և արդյունավետ օգտագործումը:⁴¹

Հաճախորդի վարկունակության գնահատման եղանակներից ներկայումս առավելապես անհրաժեշտ է կարևորել՝

- գործարար ռիսկի գնահատումը,
- մենեջմենթի արդյունավետության գնահատումը,
- ֆինանսական գործակիցների հիման վրա հաճախորդի ֆինանսական կայունության գնահատումը,
- դրամական հոսքերի վերլուծությունը,
- հաճախորդի մասին տեղեկությունների հավաքագրումը:

Միջազգային պրակտիկայում առանձնացվում են մի քանի առանցքային գործոններ, որոնց միջոցով գնահատվում է հավանական վարկառուի հուսալիությունը, հետևաբար՝ վարկային գործարքի հետ կապված ռիսկի

⁴¹ Т.М. Костерина. Банковское дело. Издательство: Юрайт Год издания: 2014, էջ 66

աստիճանը: Օրինակ, ԱՄՆ-ում սովորաբար կիրառվում է 6 'C'-երի կանոնը՝ հաճախորդի վարկունակության վեց հիմնական չափանիշները.

1. Character – վարկառուի վարկարժանությունը, բնավորությունը՝ վարկառուի անձը, նրա հեղինակությունը գործարար աշխարհում,
2. Capacity – վարկառուի կարողությունը, վարկի մարման իրավական և ֆինանսական հնարավորությունները,
3. Cash – վարկառուի կանխիկ դրամական միջոցների վիճակը,
4. Collateral - ապահովվածությունը՝ գրավի տեսակը և արժեքը, երաշխիք կամ երաշխավորություն տրամադրող անձը և երաշխիքի գումարը,
5. Conditions – ընդհանուր պայմանները՝ ընդհանուր տնտեսական իրավիճակը և այլ գործոններ, որոնք կարող են ազդել վարկառուի վրա,
6. Control – վերահսկողությունը՝ վարկի վերահսկողության համար անհրաժեշտ պայմանների առկայությունը:⁴²

Անգլիայում կիրառվում է 'PARSER' մեթոդը.

1. Person – պոտենցիալ վարկառուի, նրա հեղինակության մասին տեղեկություններ,
2. Amount – վարկի գումարի հիմնավորում,
3. Repayment – մարման հնարավորությունն ու պայմանները,
4. Security - ապահովվածության գնահատում,
5. Expediency– վարկի նպատակահարմարությունը,
6. Remuneration – վարկի տրամադրման դիսկի դիմաց պարգևատրում բանկին (տոկոսադրույք):⁴³

Համաշխարհային բանկը կիրառում է 'CAMELS' մեթոդը.

- 1.Capital adequacy - սեփական կապիտալի բավարար քանակություն,
2. Asset quality – ընկերության ակտիվների որակը,
3. Management competence – ղեկավարների պրոֆեսիոնալիզմը, մենեջմենթի որակը,
4. Earnings – ընկերության շահութաբերությունը,

⁴² Балабанов И.Т.. Банки и банковское дело. Издательство: Питер. Год издания: 2003, էջ 57

⁴³ Совершенствование механизма кредитования на современном этапе, Маслова В.В. Журнал: Экономика, управление, 2014. № 2, էջ 14

5. Liquidity - իրացվելիությունը,

6. Sensitivity to market risk - զգայունությունը շուկայական ռիսկի նկատմամբ:⁴⁴

Վարկային մասնագետը պետք է համոզված լինի, որ հաճախորդը հստակ է ներկայացնում վարկի ստացման նպատակը, պատասխանատու կերպով է վերաբերվում փոխառու միջոցների վերադարձմանը, բանկի հարցերին տալիս է ճշմարիտ պատասխաններ, ներդնում է ամբողջ ուժերը սեփական պարտավորությունների մարման համար և ունակ է մարելու վարկը: Վարկի նպատակը պետք է համահունչ լինի բանկի ընթացիկ վարկային քաղաքականությանը: Պատասխանատվությունը, ճշմարտացիությունը և պարտավորության մարմանը լրջորեն տրամադրվածությունը կազմում են վարկառուի վարկարժանությունը:

Ցանկացած վարկային հայտի առանցքային կետը վարկառուի կանխիկի հոսքի ստուգումն է, որը բավարար կլինի վարկը մարելու և տոկոսները վճարելու համար (թեև գործարարության ոլորտի որոշ վարկեր այս առումով ունեն մի շարք բնորոշ առանձնահատկություններ): Վարկառուն, որի մոտ մեծ տեսակարար կշիռ են կազմում կրեդիտորական պարտավորությունները, ունի ապրանքահումքային պաշարների կամ չվճառված ապրանքների մեծ կուտակում, դեբիտորական պարտքերի ստացման դժվարություններ, ամենայն հավանականությամբ, բանկի համար կդառնա խնդրահարույց հաճախորդ: Վարկային մասնագետի կողմից վարկառուի դրամական միջոցները գնահատելիս ենթադրվում է ստանալ այնպիսի հարցերի պատասխան, ինչպիսիք են՝

- դիտվել է նախկինում շահույթի հաստատուն աճ, կամ վաճառքի ծավալների մեծացում,
- գոյություն ունի բավարար հավանականություն նման աճի շարունակման համար նաև վարկային պայմանագրի գործողության ընթացքում,
- վարկառուն տիրապետում է բավարար կապիտալի կամ որակյալ ակտիվների՝ վարկի անհրաժեշտ ապահովման համար:⁴⁵

⁴⁴ Управление кредитными рисками и регулирование рисков кредитной деятельности коммерческих банков. Журнал: современные научные исследования, 2013. № 17 (2)., էջ 14

⁴⁵ Организация межбанковского кредитования: понятие, механизм особенности проведения в России. Селезнева Ю.В. Вестник Российского экономического университета им. Г.В. Плеханова. Вступление. Путь в науку, 2012. № 1., էջ 12

Վարկային մասնագետը ուշադրություն պետք է դարձնի այնպիսի բնութագրիչների վրա, ինչպիսիք են վարկառուի ակտիվների ծառայության ժամկետը, վիճակը և կառուցվածքը:

Վարկային մասնագետը պետք է տեղյակ լինի վարկառուի գործունեության վերջին միտումներին, և թե ինչպես կարող է տնտեսական պայմանների փոփոխությունը ազդել վարկի մարման գործընթացի վրա:

Այժմ դիտարկենք կորպորատիվ հաճախորդների վարկունակության գնահատման մի քանի մոդելներ, որոնք ներկայումս կիրառվում են ՀՀ առևտրային բանկերի կողմից:

Վարկունակության գնահատման ամերիկյան մոդելի կիրառման դեպքում բանկերը օգտագործում են ցուցանիշների 4 խումբ.

1. կորպորատիվ հաճախորդի իրացվելիության ցուցանիշները,
2. կապիտալի շրջանառելիությունը բնութագրող ցուցանիշները,
3. միջոցների ներգրավման ցուցանիշները,
4. շահութաբերության ցուցանիշները:⁴⁶

Առաջին խմբին են վերաբերում իրացվելիության «առավել իրացվելի ակտիվներ/երկարաժամկետ պարտավորություններ» և ծածկման «շրջանառու կապիտալ/կարճաժամկետ պարտավորություններ» գործակիցները: Որքան բարձր է իրացվելիությունը, այնքան բարձր է վարկունակությունը: Ծածկման գործակիցը ցույց է տալիս վարկավորման սահմանը, հաճախորդի բոլոր միջոցների բավարարությունը՝ պարտքը մարելու համար: Եթե այս գործակիցը փոքր է 1-ից, ապա հաճախորդին չի կարելի վարկ տալ:

Երկրորդ խմբի ցուցանիշները արտացոլում են շրջանառու ակտիվների որակը և կարող են օգտագործվել ծածկման գործակցի աճի գնահատման համար: Օրինակ, եթե ծածկման գործակցի նշանակությունը մեծանում է պաշարների աճի և միաժամանակ դրանց շրջանառության դանդաղեցման հաշվին, ապա դրա հիման վրա չի կարելի հաճախորդի վարկունակության աճի վերաբերյալ եզրակացություն անել:

⁴⁶ Тавасиес А. М. Банковское дело. Управление кредитной организацией. Издательство: "Издательский дом Дашков и К". Год издания: 2007, էջ 184

Երրորդ խմբի ցուցանիշները հաշվարկվում են որպես բոլոր պարտավորությունների հարաբերություն ակտիվների ծավալին կամ հիմնական կապիտալին, և ցույց են տալիս ընկերության կախվածությունը փոխառու միջոցներից: Ինչքան բարձր է այս ցուցանիշը, այնքան հաճախորդի վարկունակությունը ցածր է:

Երրորդ խմբի հետ կապված են չորրորդ խմբի ցուցանիշները, որոնք բնութագրում են ընկերության շահութաբերությունը: Դրանց են վերաբերում՝ շահույթի մասնաբաժինը եկամուտներում, շահույթի նորման ըստ ակտիվների, ըստ բաժնետոմսերի: Այս ցուցանիշների հաշվարկի համար անհրաժեշտ է ունենալ ընկերության ֆինանսական դրությունը բնութագրող տեղեկատվություն:

Վարկունակության գնահատման ֆրանսիական մոդելի կիրառման դեպքում կորպորատիվ հաճախորդի վարկունակությունը գնահատում են 3 մասով.

1. ընկերության ընդհանուր ֆինանսատնտեսական գնահատում, որի ժամանակ բանկին հետաքրքրում է հետևյալ հարցերը՝ ընկերության գործունեության բնույթը, գործունեության երկարատևությունը, արտադրության գործոնները, ֆինանսական ռեսուրսները և այլն,
2. առանձին առևտրային բանկերի կողմից ընդունված մեթոդների հիման վրա հաճախորդների վարկունակության գնահատում՝ հիմնվելով նրանց հաշվապահական հաշվեկշռի և եկամուտների և ծախսերի հաշվետվությունների վրա:⁴⁷

Հայաստանի պայմաններում վարկային ռիսկի կառավարման խնդիրները լուծելու ուղղությամբ տեղական բանկերին մեթոդական օգնություն ցուցաբերելու նպատակով, ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը հաստատել է «Բանկերի վարկային ռիսկի կառավարման մեթոդական ուղեցույց», որը հիմք ընդունելով և հաշվի առնելով միջազգային փորձը, մի շարք հայաստանյան բանկեր մշակել են վարկունակության գնահատման սեփական մոդելները:

Վարկունակության գնահատման նպատակով հայաստանյան բանկերի կողմից հիմք ընդունված գործոնները ընդհանուր առմամբ կարելի է ներկայացնել հետևյալ խմբերի տեսքով.

☀ գործունակություն՝ իրավական կարգավիճակը, սեփականատերերը,

⁴⁷ Тавасиев А.М., Арсланбеков А.А., Бычков В.П. и др. Банковское дело: дополнительные операции для клиентов. Издательство: Финансы и статистика. Год издания: 2005, էջ 39-40

- ✱ գործունեության և վարկային պատմություն՝ գործունեության ոլորտը և ժամանակահատվածը, արտադրական հնարավորությունները, վարկերի վերադարձի պատմությունը, տվյալ վարկատուի հետ հարաբերությունների պատմությունը,
- ✱ գործաձար շուկա՝ դիրքը, մրցակցությունը, գործընկերները, գործարքներում վճարումների մեխանիզմը, ապրանքի /ծառայությունների/ իրացվելիությունը, գները,
- ✱ ֆինանսական վիճակ՝ ֆինանսական տվյալների վերլուծությունը, ներդրումային ծրագրում վարկառուի սեփական մասնակցության չափը,
- ✱ կառավարում՝ ղեկավարների որակավորումը, պաշարների և դեբիտորական պարտքերի շրջանառությունը, գործարար ծրագրի որակը,
- ✱ ապահովվածություն՝ երաշխիքը, երաշխավորությունը, բարձր իրացվելի ակտիվները, անշարժ գույքը և այլն,
- ✱ արտաքին ազդակներ՝ քաղաքական, իրավական, տնտեսական իրավիճակը, օրենսդրական փոփոխությունները:
- ✱ վարկունակության վերլուծության համար օգտագործվում են տարբեր աղբյուրներից ստացված տեղեկություններ.
- ✱ հաճախորդից ստացված տեղեկություններ՝ հիմնադիր փաստաթղթեր, ֆինանսական, վիճակագրական հաշվետվություններ, պայմանագրեր և այլն,
- ✱ հաճախորդի վերաբերյալ բանկի արխիվում առկա տեղեկություններ՝ հաշիվների շրջանառության վերաբերյալ, նախկինում տրամադրված վարկերի պատմություն և այլն,
- ✱ պետական կամ մասնավոր վարկային ռեգիստրի գործակալություններից ստացված տեղեկություններ,
- ✱ այլ աղբյուրներից ստացված տեղեկություններ՝ այլ բանկեր, գնորդներ, մատակարարներ և այլն:⁴⁸

ՀՀ առևտրային բանկերին հաճախորդների վերաբերյալ տեղեկություններ ստանալու առումով զգալի աջակցություն է ցուցաբերում ՀՀ Կենտրոնական բանկում ստեղծված «Փոխառուների վարկարժանության տեղեկատվական համակարգը»

⁴⁸ Տե՛ս Վարդումյան Է. Ֆինանսական ռիսկերի կառավարման մեթոդներ, /ուսումնական ձեռնարկ/, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015թ.

«վարկային ռեգիստրը», որի միջոցով բանկերը կարող են լիարժեք տեղեկություններ ստանալ հաճախորդի՝ այլ բանկերում ունեցած վարկային պատմության վերաբերյալ:

«ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» ՓԲԸ-ն, որը Հայաստանում առաջին մասնավոր վարկային բյուրոն է, հիմնադրվել է 2004թ.-ի հունվարին, և արդեն բազմաթիվ պայմանագրեր է ստորագրել ՀՀ-ում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների հետ: ԱՔՌԱ վարկային բյուրոյի հիմնական նպատակն է՝ այդ կազմակերպություններից տեղեկատվության հավաքագրումը, մշակումը, պարբերաբար թարմացումն ու տրամադրումը լիազորված կառույցներին: Բացի այդ, վարկային բյուրոյի շնորհիվ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ հնարավորություն է ստանում կառուցել և օգտագործել իր վարկային պատմությունը:

ԱՔՌԱ վարկային բյուրոյի հաճախորդներն են՝ Հայաստանում գործող բանկերը, վարկային կազմակերպությունները, միկրո ֆինանսական հաստատությունները, հետաձգված վճարումով աշխատող առևտրային կազմակերպությունները՝ ներառյալ կենցաղային սպասարկման ծառայությունները, ապահովագրական ընկերությունները, միջազգային դոնոր կազմակերպությունները և այլն:

Վարկային բյուրոն գործում է գաղտնիության բացարձակ ապահովման պայմանով: Տեղեկատվությունը կարող է տրամադրվել միայն այն դեպքում, եթե իրավաբանական կամ ֆիզիկական անձը համաձայնություն է տալիս՝ իր վարկային պատմությունը ստուգելու համար: Տվյալ մեխանիզմը թույլ է տալիս բացառել տեղեկատվության ոչ իրավաչափ օգտագործումը:

Ըստ «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի վարկային քաղաքականության՝ փոքր և միջին ձեռնարկատիրության ֆինանսական վերլուծությունը պետք է առնվազն ներառի հետևյալ տեղեկատվությունը.

1. շահառուի մասին տեղեկատվություն՝ կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ անունը, տնտեսական գործունեության ոլորտը, տվյալ գործունեությամբ զբաղված լինելու ժամանակահատվածը, և այլ անհրաժեշտ տեղեկատվություն,
2. պահանջվող վարկի նպատակը, օգտագործման ուղղությունները և սպասվող ազդեցությունը շահառուի բիզնեսի վրա,
3. պահանջվող գումարը,
4. վարկային մասնագետի կողմից առաջարկվող գումարը, տոկոսադրույքը,

5. առաջարկվող գրավի նկարագրություն՝ անվանումը, սեփականատերը, սեփականությունը հիմնավորող փաստաթղթերը, ձեռք բերման կամ արտադրության ամսաթիվը, չափը, գնահատված արժեքը և այլն,
6. բոլոր վարկերի համար պետք է կազմվի վերլուծության պահի դրությամբ հաշվեկշիռ, որն իր մեջ պետք է պարունակի շահառուի բոլոր միջոցները և դրանց առաջացման աղբյուրները՝ խմբավորված ըստ համապատասխան տեսակների,
7. վարկերի գծով պետք է կազմվի եկամուտների և ծախսերի հաշվետվություն՝ շահառուի տնտեսական գործունեության վերջին 12 ամիսների արդյունքների վերլուծության հիման վրա: Վերջինս իր մեջ պետք է ներառի շահառուի բոլոր տեսակների եկամուտներն ու ծախսերը՝ խմբավորված ըստ համապատասխան տեսակների,
8. հաշվեկշիռը և եկամուտների ու ծախսերի մասին հաշվետվությունը պետք է կազմված լինի պահպանողական սկզբունքով,
9. 20 մլն ՀՀ դրամը գերազանցող բոլոր վարկերի գծով վարկային մասնագետի կողմից պետք է կազմվի նաև դրամական հոսքերի մասին հաշվետվություն շահառուի տնտեսական գործունեության վերջին 12 ամիսների արդյունքների վերլուծության հիման վրա, ինչպես նաև կազմվի դրամական հոսքերի մասին հաշվետվության կանխատեսում՝ մինչև վարկի ժամկետի ավարտը:⁴⁹

Հաշվապահական հաշվեկշիռը կազմվում է սկզբնական փաստաթղթերի ուսումնասիրության և գնահատման հիման վրա՝ հայտի ներկայացման օրվա դրությամբ, ընդ որում հաշվեկշռի մեջ ներառվում է նաև ակնկալվող վարկի գումարը՝ ակտիվային մասում՝ «Դրամական միջոցներ», պասիվային մասում՝ «Կարճաժամկետ բանկային վարկեր» կամ «Երկարաժամկետ բանկային վարկեր» հոդվածների մնացորդներին: Այնուհետև կատարվում է հաճախորդի հաշվապահական հաշվեկշռի վերլուծություն և իրացվելիության գնահատում՝ ակտիվների և պարտավորությունների խմբավորման և համադրման միջոցով՝ ըստ իրացվելիության աստիճանի և ժամկետայնության:

⁴⁹ http://www.ameriabank.am/Content.aspx?id=Loan+Secured+by+Property&page=98&itm=RB_1&lang=33

Ելնելով ներկայումս բանկերի կողմից կիրառվող հաճախորդների վարկունակության գնահատման տարբեր մոտեցումներից, նպատակահարմար ենք գտնում ՀՀ առևտրային բանկերի կողմից այս գործընթացի արդյունավետության բարձրացման նպատակով ստեղծել կորպորատիվ հաճախորդների վարկունակության գնահատման միասնական ռեյտինգային համակարգ՝ վարկունակության վերլուծությունն ընդհանրացնող եզրակացություն:

Ռեյտինգային գնահատականը որոշելու համար նպատակահարմար ենք գտնում օգտվել հետևյալ գործակիցներից.

1. Բացարձակ իրացվելիության գործակից՝

$Գ_{բ.ի.}$ = առավել բարձր իրացվելի ակտիվներ/կարճաժամկետ պարտավորություններ,

2. Արագ իրացվելիության գործակից՝

$Գ_{ա.ի.}$ = (ընթացիկ ակտիվներ - առավել հուսալի դեբիտորական պարտքեր - առավել բարձր իրացվելի արժեթղթեր) / ցպահանջ պարտավորություններ,

3. Ընթացիկ իրացվելիության գործակից՝

$Գ_{ը.ի.}$ = ընթացիկ ակտիվներ / կարճաժամկետ պարտավորություններ,

4. Երկարատև իրացվելիության գործակից՝

$Գ_{ե.ի.}$ = 1 տարուց ավելի մարման ժամկետ ունեցող վարկերի, արժեթղթերի, դեպոզիտների, ինչպես նաև մեկ տարուց ավել ժամկետով տրված երաշխիքների 50%-ի գումարի հարաբերությունը մարման նույն ժամկետ ունեցող բանկի պարտավորությունների և բանկի սեփական միջոցների գումարներին:

5. Թանկարժեք մետաղներով գործառնությունների նորմատիվ՝

$Գ_{թ.մ.}$ = թանկարժեք մետաղների ձևով բանկի բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը թանկարժեք մետաղներով բանկի ցպահանջ և մինչև 30 օր մարման ժամկետ ունեցող պարտավորություններին:

Կախված այս գործակիցների մեծությունից՝ հաջորդ քայլով անհրաժեշտ կլինի որոշել վարկունակության ներքոբերյալ 3 դասերը.

Աղյուսակ 2. Կորպորատիվ փոխառուների դասակարգումն ըստ վարկունակության մակարդակի

Գործակիցներ	Առաջին դաս	Երկրորդ դաս	Երրորդ դաս	Մասնաբաժինը /%/
Գ _{μ.Շ.}	0.2 և բարձր	0.15-0.20	0.15-ից ցածր	20
Գ _{3.Շ.}	1 և բարձր	0.5-1.0	0.5-ից ցածր	20
Գ _{4.Շ.}	2 և բարձր	1.0-2.0	1-ից ցածր	20
Գ _{3.}	0.7 և բարձր	0.5-0.7	0.5-ից ցածր	20
Գ _{ե.ի..}	1.5 և բարձր	1.0-1.5	1-ից ցածր	10
Գ _{թ.մ}	0.5 և բարձր	0.3-0.5	0.3-ից ցածր	10

Ռեյտինգը որոշվում է բալերով: Բալերի գումարը որոշվում է յուրաքանչյուր գործակցի դասը բազմապատկելով յուրաքանչյուրի տեսակարար կշռին ամբողջի մեջ՝ $Գ_{բ.ի.} \times 20 + Գ_{ա.ի.} \times 20 + Գ_{ը.ի.} \times 20 + Գ_{ա.} \times 20 + Գ_{ե.ի.} \times 10 + Գ_{թ.մ} \times 10$:

Առաջին դասին են վերաբերում 100-150 բալ ունեցող փոխառուները, երկրորդին՝ 151-250 և երրորդին՝ 251-300 բալ ունեցողները: Առաջնակարգ վարկունակություն ունեցող հաճախորդներին կարելի է տրամադրել վարկային գծեր, բլանկային վարկեր, և ավելի ցածր տոկոսադրույքներով, քան մյուս հաճախորդներին: Վարկունակության երկրորդային կարգ ունեցող հաճախորդներին բանկերը վարկավորում են գրավի առկայության դեպքում, իսկ տոկոսադրույքը կախված է գրավի տեսակից: Երրորդ կարգի վարկունակություն ունեցողներին վարկավորելը բարձր ռիսկային է: Նման հաճախորդներին սովորաբար վարկեր չեն տրամադրում, կամ եթե տրամադրում են, ապա վարկի գումարը չպետք է գերազանցի կանոնադրական կապիտալի չափը, իսկ տոկոսադրույքը սահմանվում է բարձր:

2.2. Վարկային ներդրումների կառավարման ռազմավարության միջազգային փորձի վերլուծությունը համաշխարհային ֆինանսական ճգնաժամի համատեքստում

Համաշխարհային ֆինանսատնտեսական վերջին ճգնաժամը դրսևորվեց ֆինանսական ակտիվների կտրուկ վատթարացմամբ, իրացվելի միջոցների, ֆինանսական հաստատությունների կապիտալիզացիայի մակարդակի նվազմամբ: Զարգացած երկրներում հարյուրավոր խոշորագույն ընկերությունների սնանկացումը, ֆինանսական շուկաների աշխատանքի խաթարումը էապես փոխեցին շուկայի մասնակիցների վարքագիծը: Հիմնական գլոբալ խաղացող՝ Միացյալ Նահանգների տնտեսության մեջ առաջին անգամ նկատվեց ներդրումների զուտ ներհոսք՝ արձանագրելով դոլարային էքսպանսիայի ավարտը: Սա իր հերթին հանգեցրեց ճգնաժամի խորացմանը՝ աշխարհի գրեթե բոլոր զարգացած ֆինանսական շուկաներում և զարգացող երկրներին զրկելով օտարերկրյա կարճաժամկետ ֆինանսական միջոցներից:⁵⁰ Հիփոթեքային շուկայում ձևավորված ֆինանսական փուչիկները, որոնք սնուցվում էին անկատար, արհեստականորեն բարդացված ֆինանսական համակարգից, պայթեցին՝ բացահայտելով ֆինանսական և իրական հատվածի միջև էական շեղվածությունը: Ֆինանսական հատվածը արժեթղթերի շուկայի միջոցով պարտադրեց համապատասխան ճշգրտումներ կատարել իրական (կորպորատիվ) հատվածում: Սա էլ հանդիսացավ ֆինանսական ճգնաժամի հիմնական բարուրը՝ պայթեցնելով իրական հատվածը: Միևնույն ժամանակ բացահայտվեց գլոբալ ֆինանսական և տնտեսական համակարգերի կառավարման, կարգավորման և վերահսկողության անկատարությունը: Դեռևս մենք ականատես ենք կարճաժամկետ միջոցառումների և միջամտությունների, որոնց նպատակն է հանգցնել կրակը: Այսօր G-7, G-8, G-20-ը, Արժույթի միջազգային հիմնադրամը, Համաշխարհային Բանկը և այլ գլոբալ սուբյեկտները տարբեր ֆորմատներով շարունակում են քննարկել նոր ձևավորվող

⁵⁰ Financial Crises: Explanations, Types, and Implications. IMF Working Paper Research Department Prepared by Stijn Claessens and M. Ayhan Kose 1 January 2013

աշխարհին համահունչ կառավարման նոր ինստիտուտների և նոր մեխանիզմների ստեղծման հարցը:⁵¹

Մինչև 2016թ. վերջը ամերիկացի փորձագետների կարծիքով՝ ԱՄՆ-ում կանանկանա ևս 50-100 բանկ, որոնք դեռևս չեն սթափվել և կազդուրվել ճգնաժամի հարվածներից հետո:⁵²

Ըստ ԱՄՀ-ի՝ համաշխարհային ՀՆԱ-ի աճը 2007թ. 5%-ից կրճատվել է մինչև 3% 2009թ.-ին: Ըստ ԱՄՀ-ի՝ 2018թ. համաշխարհային տնտեսության աճը կկազմի 3.9%, իսկ 2019թ.՝ 4.3%:⁵³

2009թ. ընթացքում ԱՄՆ-ի, Եվրոգոտու և Ճապոնիայի կենտրոնական բանկերը իրականացնում էին փափուկ դրամավարկային քաղաքականություն, ինչը պայմանավորված էր համաշխարհային տնտեսության զարգացման բացասական միտումներով, այդ թվում՝ վարկավորման կրճատմամբ, արտադրական հատվածում առկա խնդիրներով և գործազրկության աճող ծավալներով: Ընդ որում, միայն Եվրոպական կենտրոնական բանկը (ԵԿԲ) նվազեցրեց բազային տոկոսադրույքը 2009թ. առաջին կիսամյակում, այն դեպքում երբ ԱՄՆ ԴՊՀ-ը և Ճապոնիայի բանկը տոկոսադրույքները պահում էին ցածր մակարդակի վրա:⁵⁴ ԱՄՆ-ի, Եվրոգոտու 16 երկրների և Ճապոնիայի ֆինանսական իշխանությունները, ձգտելով իրականացնել տնտեսության աշխուժացում, շարունակեցին ապահովել երկրների ֆինանսական համակարգերի իրացվելիությունը՝ վարկավորման խթանման և տնտեսությունները ռեցեսիայից դուրս բերելու հույսով: Հակաճգնաժամային քաղաքականության ևս մեկ կարևոր տարր հանդիսացավ ֆինանսական շուկաների կարգավորման ավելի կատարելագործված կառույցի ձևավորումը, որի անհամապատասխանությունն էլ հենց հանգեցրեց ԱՄՆ-ում հիփոթեքային ճգնաժամի սկիզբը, որի հետևանքն էլ եղավ համաշխարհային ֆինանսական ճգնաժամը:

⁵¹ <http://www.gov.am/files/docs/1525.pdf>

⁵² Financial Crisis, US Unconventional Monetary Policy and International Spillovers. Prepared by Qianying Chen, Andrew Filardo, Dong He, and Feng Zhu2 Authorized for distribution by Bas Bakker April 2015

⁵³ The Corporate Saving Glut in the Aftermath of the Global Financial Crisis Joseph W. Gruber – Deputy Associate Director, Division of International Finance, Board of Governors of the Federal Reserve System Steven B. Kamin* – Director, Division of International Finance, Board of Governors of the Federal Reserve System: June 2015

⁵⁴ Committee on the Global Financial System CGFS Papers No 41 Long-term issues in international banking Report submitted by a Study Group established by the Committee on the Global Financial System This Study Group was chaired by Hans-Helmut Kotz of the Deutsche Bundesbank July 2010

ԱՄՆ-ի Դաշնային պահուստային համակարգի (ԴՊՀ) խթանող դրամավարկային քաղաքականությունը (ԴՎՔ) 2000թ. սկզբից խթանում էր բանկերին վարկեր տալ: 2000թ. տրամադրված հիփոթեքային վարկերի ծավալը 238 մլրդ դոլարից 2003թ. հասավ 1199 մլրդ դոլարի, այնուհետև անմիջապես նվազեց և 2008թ. կազմեց 415 մլրդ դոլար:⁵⁵ Ընթացիկ ճգնաժամի զարգացման գլխավոր դերը խաղաց տեղեկատվության անհամաչափությունը: Ֆինանսական գործիքների կառուցվածքը դարձավ այնքան բարդ, որ ֆինանսական պորտֆելների իրական արժեքը գնահատելն անհնար էր: Վարկային շուկան այլևս չէր կարող արդյունավետորեն բացահայտել պոտենցիալ ոչ վճարունակ փոխառուներին: Եվ դեռ 2007թ. դեկտեմբերից ԱՄՆ-ում սկսվեց ռեցեսիան: Աստիճանաբար ԱՄՆ-ի ֆինանսական ճգնաժամը սկսեց տարածվել ամբողջ աշխարհում: Ամերիկյան կորպորացիաները սկսեցին արագ վաճառել ակտիվները և դուրս բերել փողերը այլ երկրներից: Անգլիայի բանկի գնահատականներով՝ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և ԵՄ-ի ընդհանուր կորուստը ճգնաժամից կազմել է ավելի քան 2.8 տրլն դոլար: 2008թ. ԱՄՆ-ի ՀՆԱ-ն ընկավ մինչև 0.5%, ամերիկյան տնտեսությունը կորցրեց շուրջ 8 մլն աշխատատեղ:⁵⁶ ԱՄՆ-ի տնտեսության բացասական երևույթները ազդեցին նաև զարգացող և զարգացած երկրների ֆոնդային շուկաների վրա, նվազեցին բորսայական ինդեքսները:

ԴՊՀ-ը հակաճգնաժամային միջոցառումների շրջանակներում ամբողջ տարվա ընթացքում բազային տոկոսադրույքը պահեց ռեկորդային ցածր մակարդակի վրա՝ 0.25% տարեկան: ԴՊՀ-ը սկսեց նվազեցնել տոկոսադրույքը 2007թ.-ի կեսերից (5.25%-ից), երբ երկրում հիփոթեքային շուկայում արդեն ճգնաժամ էր սկսվել: 2008թ. դեկտեմբերին տոկոսադրույքը 1%-ից իջեցվեց ռեկորդային ցածր մակարդակի՝ 0-0.25% տարեկան:⁵⁷ Սակայն 2009թ. հունվարին ֆինանսական իշխանությունները եկան այն եզրակացության, որ ԱՄՆ-ին ռեցեսիայից դուրս բերելու համար ֆինանսական խթանների միայն այս գործիքը անբավարար է, և անհրաժեշտ են լրացուցիչ քայլեր բանկային համակարգի պաշտպանության համար:

⁵⁵ Research on global financial stability: the use of BIS international banking and financial statistics Joint BIS – CGFS Workshop on 7 May 2016 http://www.bis.org/events/cgfs_ibfsws_cfp.pdf

⁵⁶ International Banking System: Risk Analysis. The Learning Village(Pty)Ltd. May 16, 2015

⁵⁷ Social Science research Network. Identifying Risks in the International Banking System. Kamal Sagdar Khan. September 14, 2012

ԴՊՀ-ի ռեկորդային ցածր տոկոսադրույքի հետ մեկտեղ առաջարկվեցին հետևյալ միջոցառումները՝ «խնդրահարույց» ակտիվների գնում, երաշխիքների տրամադրում ակտիվների գծով կամ, այսպես կոչված, «վատ բանկի» ստեղծում ֆինանսավարկային կազմակերպություններից ակտիվների գնման համար՝ դրամական միջոցների և արժեթղթերի փոխանակմամբ: Մեկ ամիս անց որոշվեց ընդունել ֆինանսական կայունության պլան 2 տրլն դոլար ընդհանուր գումարով, որի նպատակն էր՝ մաքրել ԱՄՆ-ի ֆինանսական համակարգը անորակ ակտիվներից: 2009թ. գարնանը ԴՊՀ-ը հայտարարեց պետական պարտքի շուկայում 300 մլրդ դոլարի ներդրում անելու մտադրության մասին, որպեսզի նվազեցնի պետական արժեթղթերի եկամտաբերությունը, ինչպես նաև մեծացնի խնդրահարույց ակտիվների գնման ծրագիրը:⁵⁸

2009թ. ամռանը Բ. Օբաման նշանավորեց ֆինանսական վերահսկողության ոլորտում արմատական ռեֆորմների հիմնական դրույթները, որը կոչված է խթանելու նորամուծությունները ֆինանսական շուկայում, և միևնույն ժամանակ կանխելու բանկային հատվածի կողմից չարաշահումները: Երկրի տնտեսության հարաբերական կայունության պայմաններում երկրի իշխանությունները առ այսօր քայլեր են մշակում բազային տոկոսադրույքի բարձրացման ուղղությամբ, որոնք իրականացվեցին 2010թ. երկրորդ կիսամյակից:⁵⁹ Հոկտեմբերին ԴՊՀ-ը հայտարարեց, որ համաշխարհային տնտեսության վերականգնման պայմաններում ԱՄՆ-ն իր գործողությունները կկենտրոնացնի բյուջետային դեֆիցիտի նվազեցման վրա, ինչը 2009թ. ֆինանսական տարվա տվյալներով հասել էր 1.42 տրլն դոլարի: Միևնույն ժամանակ կոնգրեսը պետք է ընդուներ ֆինանսական կարգավորիչների համակարգի վերաձևավորման օրենքների փաթեթ՝ ԱՄՆ-ի տնտեսությանը ճգնաժամի կրկնվելու վտանգից պաշտպանելու համար:⁶⁰

ԴՊՀ-ը որոշել է բանկային համակարգի վերահսկողության ավելի արդյունավետ մեխանիզմ ձևավորել և փաստորեն ընդունել է, որ չի կարողացել բացահայտել ճգնաժամի որոշ սկզբնական երևույթներ:

⁵⁸ Board of Governors of the Federal Reserve System International Finance Discussion Papers Number 1064 November 2012 Foreign Banks in the U.S.: A primer William Goulding and Daniel E. Nolle

⁵⁹ OECD (2012), “Financial Contagion in the Era of Globalised Banking?”, OECD Economics Department Policy Notes, No. 14, June.

⁶⁰ Calibrating the Single-Counterparty Credit Limit between Systemically Important Financial Institutions March 4, 2016

ԴՊՀ-ը անհրաժեշտ է համարում բազային տոկոսադրույքը պահել ցածր՝ 0.25%-ի վրա, ինչի առիթով տարվա վերջին անհանգստություն ցուցաբերեցին մասնագետները: Նրանց կարծիքով ԴՊՀ-ի քաղաքականությունը կարող է լրջորեն վնասել ԱՄՆ-ի տնտեսությանը և առաջ բերել նոր համաշխարհային ճգնաժամ՝ սպեկուլյատիվ կապիտալի հոսքերի մեծացման միջոցով: Նրանց կարծիքով հաջորդ ճգնաժամը կարող է լինել 2018թ., և դա պայմանավորված կլինի տոկոսադրույքի ցածր մակարդակով, ինչը կբերի ակտիվների գնի անհամապատասխան աճ և հետևաբար գնաճի աննախադեպ բարձր տեմպերի:⁶¹

Որոշ տնտեսագետների կարծիքով՝ ԱՄՆ-ի ֆինանսատնտեսական կարգավորիչները 2009թ. ճգնաժամի դեմ պայքարում ուղղել են 23.7 տրլն դոլար: Այս թիվը համարյա երկու անգամ գերազանցում է ԱՄՆ-ի պետական պարտքը, որն իր հերթին կազմում է ԱՄՆ-ի ՀՆԱ-ի մոտ 90%-ը:⁶²

2009թ. Եվրոպական ԿԲ-ի (ԵԿԲ) տոկոսադրույքը 2.5% էր, սակայն ճգնաժամային երևույթների տարածումը ԱՄՆ-ի տնտեսությունից այլ երկրներ, ԵԿԲ-ին ստիպեց հունվարին նվազեցնել բազային տոկոսադրույքը 0.5%-ով՝ մինչև 2%, մարտին տոկոսադրույքը նվազեցվեց մինչև 1.5%, ապրիլին՝ մինչև 1.25%, մայիսին՝ մինչև 1%, և առ այսօր այն 1% է կազմում:⁶³

ԵԿԲ-ի ղեկավարները 2009թ. սկզբին հայտարարեցին տնտեսության օգնության համար ոչ ստանդարտ ֆինանսական միջոցառումների իրականացման մտադրության մասին, որոնք հայտնի են որպես «արտարժույթային խթանում», ինչը իր մեջ ներառում է ԿԲ-ի կողմից բոլոր հնարավոր ֆինանսական ակտիվների ձեռքբերման միջոցով շուկան իրացվելությամբ լցնելու (ներարկելու) միջոցառումները: 2009թ. մայիսին ԵԿԲ-ն հայտարարեց հիփոթեքային վարկերի միավորումներով ապահովված պարտատոմսերի ձեռքբերման մտադրության մասին

⁶¹ Federal Reserve Bank of New York Staff Reports International Banking and Liquidity Risk Transmission: Lessons from across Countries Claudia M. Buch Linda S. Goldberg Staff Report No. 675 May 2014

⁶² Financial Crises and Reform of the International Financial System. Stanley Fischer. NBER Working Paper No. 9297 Issued in October 2015

⁶³ Crisis Management and Resolution for a European Banking System. Fonteyne, Wim; Bossu, Wouter; Cortavarria, Luis; Giustiniani, Alessandro; Gullo, Alessandro; Hardy, Daniel C. L.; Kerr, Sean. March 01, 2010. <http://www.imf.org/external/pubs/cat/longres.aspx?sk=23721>

60 մլրդ. եվրոյի գումարով, նշելով, որ եվրոգոտու տնտեսությունը դրսևորում է կայունացման նշաններ:⁶⁴

Տնտեսության իրադրության աստիճանաբար լավացումը եվրոգոտու 16 երկրներում թույլ տվեց ԵԿԲ-ին սեպտեմբերին հայտարարել, որ տնտեսական ակտիվության էական կրճատումը ավարտվում է և սկսվում է կայունացման ու աստիճանաբար վերականգնման շրջան:

Եվրոկոմիտեն սահմանեց ԵՄ-ում ֆինանսական շուկաների վերահսկողության մարմնի ստեղծման սահմանագծերը, որը պետք է ներառի բանկային հատվածի, արժեթղթերի շուկայի, ապահովագրության և կենսաթոշակային ապահովության կարգավորումը:

Տարվա վերջին ԵՄ-ի անդամ երկրների ֆինանսների նախարարները եկան փոխգլխման՝ ֆինանսական շուկաների վերահսկողության նոր մարմինների ստեղծման հարցում: Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ ԵՄ-ում կստեղծվի ֆինանսական շուկաների վերահսկողության 2 նոր մարմին, որոնցից մեկը կգրառվի ֆինանսական համակարգի ամբողջ մակրոպրոդենցիալ վերլուծությամբ, իսկ մյուս մարմինը բաղկացած կլինի 3 խմբից, որոնք կուսումնասիրեն ռիսկերը որոշակի ոլորտներում՝ բանկային, ապահովագրական, կենսաթոշակային և արժեթղթերի շուկայում: Պլանավորվում է, որ այս երեք խմբերը պետք է պատասխանատու լինեն ֆինանսական շուկաների կարգավորման ազգային ընթացակարգերի ներդաշնակեցման համար, ինչպես նաև հնարավորություն կունենան լուծել վեճեր երկրների միջև և կոորդինացնել կարգավորող մարմինների գործողությունները ճգնաժամային իրավիճակներում:⁶⁵

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամը չշրջանցեց նաև ասիական տարածաշրջանի ամենազարգացած տնտեսություններից մեկին՝ Ճապոնիային: 2008թ. երկրի ԿԲ-ի վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցվեց 0.5%-ից 0.3%, իսկ հետո մինչև 0.1%: Այս մակարդակը պահպանվեց ամբողջ 2009թ. ընթացքում:⁶⁶

⁶⁴ Changing Banking Supervision in the Euro zone: the ECB as a Policy Entrepreneur Stefaan De Rynck. Bruges Political Research Papers 38 / 2014

⁶⁵ Europe's banking union in the global financial system: constructing open and inclusive institutions Alexander Lehmann and Lars Nyberg. Working Paper No. 175 Prepared in October 2014

⁶⁶ ADBI Working Paper Series Why was Japan Hit So Hard by the Global Financial Crisis? Masahiro Kawai and Shinji Takagi No. 153 October 2013.

Հունվարին երկրի ֆինանսական իշխանությունները հայտարարեցին ճգնաժամի հետևանքների թեթևացման նպատակով 3 տրլն իենի (33.7 մլրդ դոլար) կարճաժամկետ կորպորատիվ պարտքային պարտավորությունների գնման մտադրության մասին: Ճապոնիայի բանկի մասնագետների կարծիքով այս քայլը կօգներ ընկերություններին թեթևացնել վարկերի ստացումը: Սակայն Ճապոնիայում տնտեսական դրության վատացումը ԿԲ-ին ստիպեց փետրվարին հայտարարել բանկերի պարտատոմսերի և արժեթղթերի գնման նպատակով 2 տրլն իեն ծախսելու մտադրության մասին, ինչպես նաև շարունակել ֆինանսական հատվածի առևտրային թղթերի գնումը մինչև 2009թ. սեպտեմբերը: Մարտին ֆինանսական իշխանությունները ընդլայնեցին տնտեսության օգնության ծրագիրը 10.2 մլրդ դոլարով, իսկ ապրիլին ևս 100 մլրդ դոլարով: Արդեն հոկտեմբերին Ճապոնիայի ԿԲ-ն նշեց տնտեսության աստիճանաբար առողջացման մասին և հայտարարեց դեկտեմբերին կորպորատիվ արժեթղթերի գնման հակաճգնաժամային ծրագրի դադարեցման մասին, որը սկսվել էր 2008թ. հոկտեմբերին՝ տնտեսական անկման պայմաններում վարկավորման խթանման նպատակով: Այս ծրագրի համար ծախսվել էր 219 մլրդ դոլար:⁶⁷

Միևնույն ժամանակ երկրի ֆինանսական իշխանությունները հայտարարեցին, որ ընկերությունների վարկավորումը ցածր տոկոսադրույքներով կշարունակվի մինչև 2010թ. մարտը: Քանի որ տնտեսության կայունացման տեմպերը դանդաղ են, Ճապոնիայի ԿԲ-ն անհրաժեշտ համարեց պահպանել խթանիչ ֆինանսական քաղաքականությունը և իրականացնել ակտիվ ու վճռական գործողություններ՝ ֆինանսական հատվածում իրադրության վատացման դեպքում: Միևնույն ժամանակ Ճապոնիայի և Չինաստանի ֆինանսական իշխանությունները մտահոգություն հայտնեցին, որ ԱՄՆ-ի ԴՊՀ-ի քաղաքականությունը բազային տոկոսադրույքի հարցում կարող է մեծացնել սպեկուլյատիվ կապիտալի ծավալը, ինչը իր հերթին կարող է բերել նոր «տնտեսական փուլիկների» առաջացմանը և խզել տնտեսության վերականգնումը:⁶⁸

⁶⁷ Sorting Out Japan's Financial Crisis. Anil K. Kashyap. NBER Working Paper No. 9384. Issued in December 2002

⁶⁸ The financial crisis in Japan during the 1990s: how the Bank of Japan responded and the lessons learnt. BIS Papers No 6. October 2001

Ճապոնիային ԿԲ-ն 2009թ.-ը ավարտեց վերաֆինանսավորման դրույքի 0.1% մակարդակով: ԿԲ-ն նաև որոշեց մեծացնել Ճապոնիայի ֆոնդային շուկաներում իրացվելիության առաջարկը՝ 116 մլրդ դոլարի պարտատոմսեր և այլ արժեթղթեր գնելու միջոցով: Այս քայլերը անցկացվում են ճապոնական կառավարության հակաճգնաժամային քաղաքականության շրջանակներում, ինչը ներառում է միջոցառումներ՝ դեֆլյացիայի և դոլարի համեմատ իենի կուրսի թանկացման դեմ պայքարի համար:

Ճգնաժամի նախօրեին Ռուսաստանի տնտեսությունը ուներ շատ լավ մակրոտնտեսական ցուցանիշներ՝ բյուջեի հավելուրդ, ոսկու պահուստների արագ աճ: Դրա հետ մեկտեղ վերջին տարիներին իրականացվում էր փափուկ դրամավարկային քաղաքականություն, ձևավորվել էին ցածր տոկոսադրույքներ, ինչը մեծացրել էր վարկավորման ծավալները: 2005-2007թթ. ոչ պետական հատվածի արտաքին պարտքը մեծացավ 4 անգամ: 2005թ.-ի սկզբին այն 108 մլրդ դոլար էր, իսկ 2007թ.-ի վերջում՝ 417.2 մլրդ:⁶⁹ Այս ամենը ռուսական տնտեսությունը դարձնում էր գլոբալ ճգնաժամի ազդեցությունից կախված: Նավթի գների անկումը և արտաքին շուկայում փոխառությունների անկումը առաջացրեցին վճարային հաշվեկշռի զգալի թուլացում 2008թ. երկրորդ կիսամյակում: 2007թ. 83 մլրդ դոլարի կապիտալի մաքուր ներհոսքը 2008թ. վերածվեց 130 մլրդ դոլար զուտ արտա-հոսքի:⁷⁰

Ռուսաստանի Դաշնության կառավարությունը մշակեց հակաճգնաժամային քաղաքականություն (2045-2145 մլրդ ռուբլի արժողությամբ, ինչը կազմում էր ՀՆԱ-ի 5.2-5.4%-ը): Դվք-ի շրջանակներում մեծ նշանակություն ունի ԿԲ-ի կողմից առևտրային բանկերին առանց ապահովվածության վարկեր տալը, որն ընդգրկում է բանկերի լայն շրջանակ, որոնք միջազգային ռեյտինգային կազմակերպությունների կողմից վարկային ռեյտինգներ ունեն: 2009թ. հունվարի 19-ի դրությամբ դրանց ծավալը գնահատվեց 1.7 տրլն ռուբլի:

⁶⁹ Экономический кризис в России: прогнозы. Воеводскова Елена Евгеньевна. Журнал Проблемы современной науки и образования. Выпуск № 6 (36) / 2015.

<http://cyberleninka.ru/article/n/ekonomicheskij-krizis-v-rossii-prognozy#ixzz433iwho4i>

⁷⁰ Об особенностях современного мирового финансового кризиса и его последствий для России А. Г. Аганбегян, академик РАН, заведующий кафедрой Академии народного хозяйства при Правительстве Российской Федерации. <http://www.cbr.ru/publ/MoneyAndCredit/aganbegyan.pdf>

ՌԴ-ի ԿԲ-ը վերաֆինանսավորման տոկոսադրույքը փոփոխեց հետևյալ կերպ՝ մինչև 2008թ. հունիսը այն 10.5% էր, հետո աստիճանաբար բարձրացվեց՝ 2009թ. ապրիլին հասնելով մինչև 13%, այնուհետև կրկին նվազեցվեց և 2009թ. դեկտեմբերի 28-ին սահմանվեց 8.75%, իսկ 2010թ. փետրվարի 24-ին այն նվազեցվեց մինչև 8.5%: Ըստ ԿԲ-ի՝ վերաֆինանսավորման տոկոսադրույքը պետք է ինֆլյացիայից բարձր լինի, սակայն երբ ԱՄՆ-ում վերաֆինանսավորման տոկոսադրույքը իջեցվեց 1.75%, ինֆլյացիան երկրում 3%-ց շատ էր: Բնականաբար սա շատ բարձր դրույք է առևտրային բանկերի համար, և ճգնաժամի պայմաններում այն պետք է նվազեցնել մինչև 5-6%, ինչը պարտադիր պահուստավորման ցածր տոկոսադրույքի (2.5%) հետ միասին վարկային շուկա նոր աշխուժացում կմտցնի:

ՌԴ-ի ԿԲ-ը 2008թ. հունվարից մինչև 2009թ. մարտը առևտրային բանկերից գնել է պարտատոմսեր 3968 մլն ռուբլի արժողությամբ և այդ ժամանակաշրջանում վաճառել է պարտատոմսեր 26340 մլն ռուբլի արժողությամբ: Այս թվերը ցույց են տալիս վարկային համակարգի աճող 'քաղցը' իրացվելիության նկատմամբ: Այսինքն ԿԲ-ն ֆինանսական համակարգի վարկային պահանջները բավարարելու փոխարեն բարձրացրել է դրույքները: Արդյունքում ստացվում է, որ ԿԲ-ն խթանել է վարկային համակարգը միայն պարտադիր պահուստավորման նորմատիվի նվազեցման միջոցով, մյուս երկու գործիքների դրույքները բարձր պահելով, որի հիմնական պատճառաբանությունը ինֆլյացիայի աճ թույլ չտալն է: Սակայն ճգնաժամի պայմաններում տնտեսությունը ստագֆլյացիայի մեջ է՝ չունենալով բանկային համակարգի վարկային աջակցությունը, ինչից տուժում է փոքր ու միջին բիզնեսը և ամբողջ տնտեսությունը:

Ըստ ռուսական «ՖԲԿ» աուդիտորական-վերլուծական ընկերության՝ Ռուսաստանը իր հակաճգնաժամային միջոցառումների մեջ զիջում է Մեծ Բրիտանիային, Կանադային, Գերմանիային, ԱՄՆ-ին, Ֆրանսիային, Ղազախստանին: Նրանք հակաճգնաժամային միջոցառումները գնահատել են ինդեքսներով՝ հիմնված ՀՆԱ-ի, ներդրումների, ինֆլյացիայի, ֆոնդային ինդեքսների, գործազրկության մակարդակի, իրական աշխատավարձի մասին տվյալների վրա: Այսպես, Մեծ Բրիտանիայի ինդեքսը կազմել է 0.898,

Ֆրանսիայինը՝ 0.295, Ղազախստանինը՝ (-0.696), Ուկրաինայինը՝ (-0.819), Ռուսաստանինը՝ (-1.048):⁷¹

Այժմ դիտարկենք հետխորհրդային մի քանի երկրների հակաճգնաժամային միջոցառումները, որոնք իրենց ծրագրերը իրականացնում են ԱՄՀ-ի տրամադրած վարկերի միջոցով:

Ղազախստանը, ըստ 2008թ. ընդունված հակաճգնաժամային ծրագրի, տրամադրել է 1 մլրդ դոլար բանկերին, 3 մլրդ դոլար՝ տնտեսության և բիզնեսի վարկավորման համար: Ղազախստանում ընթանում է տնտեսության ազգայնացման պրոցես, արդեն ազգայնացվել են 4 խոշոր բանկեր: Ղազախստանում վերաֆինանսավորման տոկոսադրույքը այժմ 7% է (որն իջեցվել է 2008թ. 11%-ից): Ընդ որում, ռուսական վերլուծաբանների կարծիքով Ղազախստանի հակաճգնաժամային ծրագիրը լավագույնն է ԱՊՀ-ում:⁷²

Վրաստանում ճգնաժամի հետևանքները վերացնելու համար ծրագրով նախատեսվել է ծախսել 3.5 մլրդ դոլար, որի մի մասը ծախսվել է 2009թ. մյուս մասը կծախսվի 2010-2011թթ.: Իջեցվել են վարկային տոկոսադրույքները, հարկերը, պետությունը քայլեր է ձեռնարկում տնտեսության վերականգնման համար, տրամադրվում են էժան վարկեր ձեռնարկատերերին: Վրաստանի ԿԲ-ն վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանել է 5%, 2010թ. փետրվարին տարեկան գնաճի ցուցանիշը կազմել է 5.6%, իսկ ըստ 2010-2012թթ. դվբ-ի ծրագրի, գնաճային թիրախը կանխատեսված է 6%:⁷³

Բելոռուսում կրճատվել են պետական ծախսերը 18%-ով, իրականացվել է բելառուսական ռուբլու դեալվացիա 20%-ով դոլարի և եվրոյի համեմատ: Բելոռուսը վերաֆինանսավորման բազային տոկոսադրույքը 2009թ. դեկտեմբերի 1-ից սահմանել է 13.5%: 2007թ. սկզբին այն 11% էր, այնուհետև իջեցվեց մինչև 10% հոկտեմբերին, հետո բարձրացվեց մինչև 12% 2008թ. դեկտեմբերին, իսկ 2009թ. հունվարից 14% էր: Բելոռուսում 2009թ. ընթացքում նվազել են նաև առևտրային

⁷¹ С. Михайлов. Мировой финансово-экономический кризис в России. Тенденции и перспективы. М. 2013

⁷² Казахстан тоже переживает кризис ипотечного кредитования. время публикации: 23 августа 2007. Каталог NEWSru.com: Информационные интернет-ресурсы

⁷³ Павлиашвили Соломон. Мировой экономический кризис и Грузия. Журнал Кавказ и глобализация. Выпуск № 3-4 / том 5 / 2011

բանկերի կողմից ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքները:⁷⁴

Ճգնաժամը չի շրջանցել նաև Մերձբալթյան երկրներին, որոնք Եվրոմիության անդամ են, ինչն էլ նրանց օգնել է դիմակայել ճգնաժամին: Մինչև 2011թ. Լատվիան Եվրոկոմիտեից, ԱՄՀ-ից, ՀԲ-ից կստանա 7.5 մլրդ եվրո, Լիտվիան՝ մոտ 14 մլրդ եվրո: Լատվիայում ՊԲ-ի ծախսերը նվազել են 40%-ով: Իսկ Էստոնիան շատ չտուժեց ճգնաժամից, քանի որ Էստոնական բանկերը ավելի շուտ ձեռք էին բերվել սկանդինավյան խոշոր ֆինանսական խմբերի կողմից: Լատվիայի ԿԲ-ն վերաֆինանսավորման դրույքը սահմանել է 3.5% (որն աստիճանաբար իջեցվել է 2007թ. 6%-ից):⁷⁵

Համաշխարհային տնտեսական ճգնաժամը ստեղծում է Հայաստանի համար հետևյալ հիմնական ռիսկերը՝

- ✳ մասնավոր ուղղակի ներդրումների նվազում և հետաձգում,
- ✳ մասնավոր տրասնֆերտների կրճատում,
- ✳ հանքահումքային արդյունաբերության ժամանակավոր սառեցում՝ մինչև հումքի գների բարձրացումը,
- ✳ շինարարության ոլորտում որոշ ներդրումային ծրագրերի հետաձգում և ներդրումների կրճատում:⁷⁶

Որպես հետևանք կարող է ի հայտ գալ՝ սպառման ծավալների կրճատում, վճարային հաշվեկշռի վատթարացում, վարկատուների բացասական սպասումների ձևավորում: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ այս պայմաններում ի հայտ է գալիս մի նոր երևույթ. շուկայի մասնակիցների մոտ ժամանակավոր դժվարությունները ինքնուրույնաբար հաղթահարելու ցանկությունը հանգեցնում է ստվերի խորացման հնարավորությունների և կոռուպցիոն ռիսկերի ավելացմանը: Հասկանալի է, որ թվարկված բոլոր ռիսկերը ուղղակիորեն առնչվում են ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությանը: Այս իրավիճակում կառավարության ջանքերն ուղղված են լինելու.

⁷⁴ Восточно-Европейская редакция ИА REGNUM. Белоруссия: Социальный кризис в стране «рыночного социализма».

⁷⁵ Крупнейший банк Прибалтики снизил прогнозы экономического роста Эстонии за 2012 год. <http://regnum.ru/news/economy/1576914.html>

⁷⁶ <http://www.gov.am/files/docs/1525.pdf>

- ա. մակրոտնտեսական կայունության ապահովմանը,
- բ. ֆինանսական հատվածի կայունության ապահովմանը,
- գ. ծրագրավորված տնտեսական աճը ապահովելու համար՝ լրացուցիչ խթանների բացահայտմանը և ներդրմանը, որոնք
 - ✱ կընդլայնեն սպառումը,
 - ✱ կխթանեն տեղական արդյունաբերությունը,
 - ✱ կտրուկ կավելացնեն արտահանումը,
 - ✱ կբարելավեն վճարային հաշվեկշիռը:⁷⁷

2.3. Վարկային ներդրումների կառավարման կատարելագործման արդի միտումները ՀՀ բանկերում

Հայաստանի Հանրապետության առևտրային բանկերի ներդրումային պորտֆելի վերլուծությունն իրականացնենք երեք ուղղությամբ՝ վերլուծելով առևտրային բանկերի իրական ներդրումների, վարկային ներդրումների և ներդրումային արժեթղթերի պորտֆելները:

ՀՀ բանկերի ներդրումային պորտֆելը ձևավորվում է բանկի ներդրումային քաղաքականության հիման վրա և կոչված է ապահովելու վերջինիս հիմնական նպատակները:

Տնտեսավարման ժամանակակից պրակտիկայում որպես ներդրումային քաղաքականության հիմնական նպատակներ բանկերի կողմից պետք է սահմանվեն.

- ✱ բանկի ռազմավարական նպատակների իրագործում և հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված հիմնական ցուցանիշների ապահովում,
- ✱ ընթացիկ ժամանակաշրջանում ներդրումային եկամտի ապահովում,
- ✱ ֆինանսական ներդրումների հետ կապված ռիսկերի նվազեցում,

⁷⁷ ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանի ելույթը ՀՀ Ազգային ժողովում ՀՀ 2009թ.-ի պետական բյուջեի նախագծի ներկայացման կապակցությամբ՝ <http://www.gov.am/files/docs/1525.pdf>

- ✳ ներդրումային պորտֆելի իրացվելիության անհրաժեշտ մակարդակի ապահովում,
- ✳ բանկի ավելցուկային դրամական միջոցների արդյունավետ կառավարում,
- ✳ եկամտաբերության և իրացվելիության հարաբերակցության օպտիմալ մակարդակի ապահովում,
- ✳ ընդունելի ռիսկերի պայմաններում ներդրումներից համապատասխան եկամտաբերության ապահովումը,
- ✳ ներդրումային գործիքներով գործառնությունների արդյունքում հանրապետության ներդրումային միջավայրի զարգացման գործընթացին աջակցություն,
- ✳ ռիսկերի նվազեցման նպատակով՝ միջոցների տեղաբաշխման բազմազանեցման (դիվերսիֆիկացման) ապահովում,
- ✳ ոչ եկամտաբեր ակտիվների նվազեցումը կարճաժամկետ ներդրումների հաշվին,
- ✳ ներդրումային գործառնությունների ծավալով ՀՀ բանկային համակարգում առաջատար դիրքերի ապահովում և այլն:

ՀՀ առևտրային բանկերի ներդրումային պորտֆելի վերլուծության ժամանակ առաջնահերթ կարևորություն է ստանում իրական ներդրումների պորտֆելի վերլուծությունը՝ կարևորելով վերջինիս դերը բանկի ներդրումային պորտֆելի մյուս ուղղությունների արդյունավետ գործունեությունն ապահովելու գործում: Բանկերի իրական ներդրումների պորտֆելն ուղղված է բանկերի հետագա զարգացմանը և նրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը: Բանկերի իրական ներդրումների պորտֆելի վերլուծության նպատակով պետք է առանձնացնել բանկերի հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների պորտֆելները:

Այսպես, իրական ներդրումների պորտֆելի կառուցվածքն, ըստ հիմնական միջոցների, ներկայացնենք ՀՀ 4 խոշորագույն առևտրային բանկերի օրինակով՝ հետևյալ աղյուսակով.

Աղյուսակ 3. Արդշինբանկ ՓԲԸ-ի, Ամերիաբանկ ՓԲԸ-ի, Ակգա Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ-ի և Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի իրական ներդրումների պորտֆելի կառուցվածքն՝ ըստ հիմնական միջոցների /հազ.դրամ/*

		Հող և շանքեր	Սարքավորումներ	Տնտեսական գույք	Փոխարդ. միջոցներ	Ամսական շահարարություն	Վարձակալված գույքի բարելավում	Ոչ նյութական ակտիվներ
Սկզբնական / վերագնահատված արժեք/ Մնացորդը 01.01.2015	Արդշինբանկ	6,653,728	2,114,440	1,565,212	272,595	13,23	468,317	622,6
	Ամերիաբանկ	1,504,229	2,302,955	462,518	177,848	11.84	327,558	784,702
	ԱԿԲԱ բանկ	13,186,889	3,351,786	584,224	358,934	3,392	1,519,941	1,325,668
	Հայբիզնեսբանկ	7,934,014	448,244	477,820	470,838	-	28,996	936,844
Կուտակված մաշվածություն 01.01.2015	Արդշինբանկ	1,009,603	1,650,705	1,256,750	244,635	-	228,108	355,074
	Ամերիաբանկ	406,326	1,294,932	207,634	149,802	-	219,445	2,337,967
	ԱԿԲԱ բանկ	1,329,238	1,155,024	234,668	198,705	-	414, 225	534,033
	Հայբիզնեսբանկ	687,347	232,468	206,844	160,902	-	18,106	987,664
Մնացորդային արժեք 01.01.2015	Արդշինբանկ	7,551,899	450,536	436,260	25,028	117,392	205,987	251,667
	Ամերիաբանկ	603,492	1,628,538	309,686	157,815	206,441	184,219	3,059,129
	ԱԿԲԱ բանկ	11,836,230	2,509,431	341,885	115,437	284,336	533,622	892,906
	Հայբիզնեսբանկ	7,284,413	124,002	305,111	163,429	-	98,385	1,128,997

* Աղբյուրը՝ Արդշինբանկ ՓԲԸ-ի, Ամերիաբանկ ՓԲԸ-ի, ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ-ի և Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի տարեկան ֆինանսական հաշվետվություններ /2014-2015թթ./

Բանկերի հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ, իսկ շենքերը ներկայացված են իրական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ:

ՀՀ առևտրային բանկերի իրական ներդրումային պորտֆելի վերլուծության ժամանակ կարևոր է ներկայացնել նաև բանկի ամորտիզացիոն քաղաքականությունը: Այսպես, վերոհիշյալ բանկերի ներքին իրավական ակտերով սահմանված են մաշվածության հաշվարկումը գծային մեթոդով՝ ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

Աղյուսակ 4. Արդշինբանկ ՓԲԸ-ի, Ամերիաբանկ ՓԲԸ-ի, Ակգա Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ-ի և Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի իրական ակտիվների մաշվածության հաշվարկի տարեկան դրույքաչափերը*

Ակտիվներ	Բանկեր	Օգտակար ծառայության ժամկետը	%
Շենքեր և շինություններ	Արդշինբանկ	20	5
	Ամերիաբանկ	20	5
	ԱԿԲԱ բանկ	20	5
	Հայբիզնեսբանկ	30	3.33
Համակարգիչներ և կապի միջոցներ	Արդշինբանկ	1	100
	Ամերիաբանկ	3	33
	ԱԿԲԱ բանկ	3	33
	Հայբիզնեսբանկ	3	33.3
Տրանսպորտային միջոցներ	Արդշինբանկ	5	20
	Ամերիաբանկ	5	20
	ԱԿԲԱ բանկ	5	20
	Հայբիզնեսբանկ	5	20
Այլ հիմնական միջոցներ	Արդշինբանկ	5	20
	Ամերիաբանկ	5	20
	ԱԿԲԱ բանկ	5	20
	Հայբիզնեսբանկ	2	20
Ոչ նյութական ակտիվներ	Արդշինբանկ	10	10
	Ամերիաբանկ	4	15
	ԱԿԲԱ բանկ	5	20
	Հայբիզնեսբանկ	5	20

* Աղբյուրը՝ Արդշինբանկ ՓԲԸ-ի, Ամերիաբանկ ՓԲԸ-ի, ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ բանկ ՓԲԸ-ի և Հայբիզնեսբանկ ՓԲԸ-ի տարեկան ֆինանսական հաշվետվություններ /2014-2015թթ./

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

Բանկի իրական ներդրումային գործիքներում ներդրումների իրականացման արդյունավետության գնահատման համար օգտագործվում են տարբեր ցուցանիշներ: Գնահատման համար առավել նպատակահարմար է դիտարկել բանկի զուտ շահույթի և հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումների հարաբերակցությունը, որը ցույց կտա հիմնական միջոցներում կատարված միավոր

ներդրման արդյունքում ապահովված զուտ շահույթի մեծությունը: Ինչքան մեծ է այս ցուցանիշը, նշանակում է ներդրումների արդյունավետությունը մեծ է: Օրինակ, հիմք ընդունելով Արդշինինվեստբանկի 2015 թվականի տարեկան հաշվետվության և 2014 թվականի ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում առկա տվյալները՝ բանկի հիմնական միջոցների շահութաբերության ցուցանիշը 2014թ. կազմել է 0.536 հզ. դրամ (հաշվարկման ժամանակ տվյալ տարվա զուտ շահույթը բաժանվել է հիմնական միջոցներում ներդրման գումարին), իսկ 2015թ.՝ 0.216 հզ. դրամ:⁷⁸

ՀՀ բանկերի ներդրումային պորտֆելի հաջորդ կարևոր ուղղությունը և հիմնականը բանկի ներդրումային գործունեության իրականացման տեսանկյունից հանդիսանում է բանկի վարկային - ներդրումների պորտֆելը: Վերջինս ձևավորվում է բանկի վարկային քաղաքականության նպատակների իրագործման համար:

Որպես կանոն, բանկերի վարկային քաղաքականության հիմնական նպատակներն են.

- ✳ բանկի իրացվելիության բավարար մակարդակի ապահովման և ռիսկերի արդյունավետ կառավարման պայմաններում բարձրորակ և եկամտաբեր վարկային ակտիվների ձևավորումը,
- ✳ հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված հիմնական ցուցանիշների ապահովումը,
- ✳ առաջարկվող վարկատեսակների հետագա ընդլայնումը և մրցունակության ապահովումը,
- ✳ տնտեսության հեռանկարային և շահութաբեր ոլորտներում ակտիվ տնտեսական գործունեություն ծավալող հաճախորդների ներգրավումը,
- ✳ վարկավորման գործընթացի արդյունավետ կառավարման ապահովումը,
- ✳ վարկերի տրամադրման հետ կապված իրավունքների և պարտավորությունների որոշումը և տարանջատումը,

⁷⁸ Արդշինբանկ ՓԲԸ-ի տարեկան ֆինանսական հաշվետվություններ /2014-2015թթ./

☀ կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջներին համապատասխանության ապահովումը և այլն:⁷⁹

Վարկային քաղաքականության իրագործման ժամանակ բանկն առաջնորդվում է որոշակի սկզբունքներով: Դրանք են

1. վարկավորման գործընթացի իրականացում՝ գործող օրենսդրությանը համապատասխան,
2. վարկավորման գործընթացի հստակ կանոնակարգում և ստանդարտացում,
3. վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի բավարար մակարդակի ապահովում,
4. կառավարելիություն,
5. վարկավորման գործընթացում կենտրոնացված և ապակենտրոնացված կարգով որոշումների ընդունման կանոնակարգում,
6. բանկի վարկային ակտիվների և պարտավորությունների փոխհամաձայնեցված կառավարման ապահովում,
7. վարկային ռիսկերի հաշվեկշռված մակարդակի պահպանում,
8. վարկավորման և վարկային ռիսկերի կառավարման գործընթացում բանկի ստորաբաժանումների կողմից անկախության և անաչառության սկզբունքների պահպանում:

ՀՀ առևտրային բանկերի զարգացման ռազմավարությանը համապատասխան՝ բանկի վարկային քաղաքականությունը պետք է ուղղված լինի հետևյալ խնդիրների լուծմանը.

- կորպորատիվ վարկավորման շուկայում ձեռք բերված դիրքերի պահպանում և աճ,
- ՓՄՁ վարկավորման մեջ բանկի մասնակցության մեծացում,
- մանրածախ վարկավորման ոլորտում առաջատար դիրքերի պահպանում,

⁷⁹ Տե՛ս Լупанов В. В. Формирование кредитной политики коммерческого банка. Журнал Известия Тульского государственного университета. Экономические и юридические науки. Выпуск № 1-2 / 2010, էջ 11, Абалкина Т.В., Абалкин А.А. Цели и приоритеты кредитной политики при формировании стратегии развития коммерческих банков. Интернет-журнал Науковедение, 3(22)/2014, էջ 8-9

- վարկերի ուղղում առավելապես դեպի տնտեսության առաջնային կամ շահութաբեր ճյուղեր,
- ռիսկերի կառավարում՝ որակյալ վարկային պորտֆել ապահովելու համար,
- վարկային գործառնությունների եկամտաբերության կայուն աճի ապահովում՝ սահմանված ռիսկերի շրջանակներում և գործող իրավական ակտերին համապատասխան,
- վարկային ռիսկերի դիվերսիֆիկացիա,
- ակտիվների և կապիտալի աճի, կառուցվածքի բարելավման ապահովում,
- վարկավորման կանոնակարգում և սպասարկման որակի անընդհատ բարելավում:

2015թ. չորրորդ եռամսյակի ընթացքում ՀՀ բանկերի վարկային ներդրումներն ավելացել են 3.8 %-ով կամ 68.1 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 26.6 %-ով կամ 46.7 մլրդ դրամով և եռամսյակի վերջում կազմել համապատասխանաբար 1,854.2 և 222.2 մլրդ դրամ, ընդ որում՝ հաշվետու տարվա երրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էր 0.6 %-ով կամ 10.9 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում նվազել 1.3 %-ով կամ 2.4 մլրդ դրամով: Վերոնշյալին նաև ավելացնենք, որ նախորդ տարվա չորրորդ եռամսյակում վարկային ներդրումներն աճել էր 3.5 %-ով կամ 55.1 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 9.1 %-ով կամ 14.1 մլրդ դրամով: Միևնույն ժամանակ նշենք, որ 2015թ. ընթացքում վարկային ներդրումներն ավելացել են 14.4 %-ով կամ 233.8 մլրդ դրամով, իսկ ներդրումներն արժեթղթերում՝ 31.7 %-ով կամ 53.5 մլրդ դրամով, ընդ որում՝ հաշվետու տարվան նախորդող տարվա ընթացքում վերոնշյալ ցուցանիշները ավելացել էին համապատասխանաբար՝ 21.2 %-ով կամ 283.1 մլրդ դրամով և 25.6 %-ով կամ 34.3 մլրդ դրամով: 2013-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ համակարգի վարկային ներդրումները կազմել են ընդհանուր ակտիվների 63.0 %-ը, ընդ որում՝ տնտեսությանը տրված վարկերի բաժնեմասը կազմել է ընդհանուր վարկային ներդրումների 64.3 %-ը կամ 1,192.8 մլրդ դրամ, և վերոնշյալ ցուցանիշը չորրորդ եռամսյակի ընթացքում աճել է 4.7 %-ով կամ 53.8 մլրդ դրամով՝ նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի 2.8 %-ի կամ 29.0 մլրդ դրամի դիմաց: Հաշվետու տարում տնտեսությանը տրված վարկերն ավելացել են 13.8 %-ով կամ 144.6 մլրդ


դրամով, իսկ նախորդ տարվա ընթացքում ավելացել էին 19.0 %-ով կամ 167.3 մլրդ դրամով:⁸⁰

ՀՀ բանկերի վարկային ներդրումների պորտֆելի վերլուծության նպատակով ներկայացնենք վարկային քաղաքականությամբ սահմանված վարկավորման օբյեկտները՝ առանձնացնելով նպատակային խմբերը և առաջնայնությունները: Այդպիսով, բանկերի վարկային ներդրումների պորտֆելը վերլուծվում է՝ ըստ հետևյալ ենթախմբերի՝

- հաճախորդների հիմնական խմբերի,
- տնտեսության ճյուղերի,
- աշխարհագրական տեղաբաշման:

Որպես կանոն, բանկերը տարբերակում են հաճախորդների նպատակային խմբերը՝ բանկի ռազմավարական նպատակներին և տնտեսության ընթացիկ իրավիճակին համապատասխան: Բանկերն իրենց հաճախորդներին խմբավորում են մասնավոր հատվածի, տնային տնտեսությունների, շահույթ չհետապնդող կազմակերպությունների, այլ ֆինանսական կազմակերպությունների և պետական ձեռնարկությունների խմբերում:

Գծանկար 12. Վարկերի կառուցվածքն՝ ըստ հաճախորդների հիմնական խմբերի 2016թ. հունվարի 1-ի դրությամբ*



* Աղբյուրը՝ KPMG. Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրությունը /2015թ. արդյունքներ/, 2016թ. փետրվար, Երևան

⁸⁰ ՀՀ բանկային համակարգի 2015 թ-ի տարեկան, այդ թվում՝ չորրորդ եռամսյակի գործունեության ամփոփում, Հայաստանի բանկերի միություն <http://www.uba.am/upload/9079.pdf>.

2016թ. հունվարի 1-ի դրությամբ առաջատար (ըստ վարկերի) հինգ բանկերը կազմել են ընդհանուր վարկային պորտֆելի 52.5% -ը: Վարկերի ընդհանուր գումարի մեծ մասը (95.6%) տրամադրվել է ռեզիդենտներին, որից 56.5%-ը տրամադրվել է ընկերություններին (այս գումարի միայն 1.8%-ը տրամադրվել է պետական ընկերություններին), 38.8%-ը՝ տնային տնտեսություններին, և միայն փոքր մասն է տրամադրվել շահույթ չհետապնդող ընկերություններին ու այլ ֆինանսական կառույցներին: Նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի համեմատությամբ վարկերի ընդհանուր ծավալում տնային տնտեսություններին տրամադրված վարկի բաժինը աճել է 0.4 տոկոսային կետով, իսկ ընկերությունների բաժինը 0.3% տոկոսային կետով նվազել է: Ամենամեծ վարկային պորտֆելը պատկանում է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ին՝ 300.4 միլիարդ ՀՀ դրամ, որն հաշվետու ամբողջ ժամանակահատվածի համար կազմել է ընդհանուր բանկային համակարգի 13.9%-ը:⁸¹

Ինչ վերաբերում է վարկերի տրամադրման արժույթին, ապա անհրաժեշտ է նշել, որ տնային տնտեսություններին և այլ ֆինանսական կառույցներին տրամադրվել են վարկեր հիմնականում ՀՀ դրամով (ընդհանուր վարկերից համապատասխանաբար՝ 62.3% և 75.3%)՝ ի տարբերություն ընկերությունների և շահույթ չհետապնդող ընկերությունների, որոնք նախընտրում են արտարժույթային վարկեր (ընդհանուր վարկերից համապատասխանաբար՝ 84.8% և 88.6%):

Ինչ վերաբերում է ՀՀ բանկերի կողմից իրականացված վարկային ներդրումների ճյուղային կառուցվածքին, ապա պետք է նշել, որ տնտեսության ճյուղերի վարկավորման ռազմավարություն իրականացնելիս հաշվի է առնվում տնտեսության զարգացման ցիկլիկ բնույթը, տնտեսության պետական կարգավորման ուղղությունները, բանկերի վարկային պորտֆելի որակական և կառուցվածքային փոփոխությունները՝ հաշվի առնելով այս կամ այն ճյուղին պատկանող հաճախորդի փաստացի կորուստները, ճյուղային /ոլորտային/ ռիսկի աստիճանը՝ մակրո և միկրո մակարդակներում:

⁸¹ KPMG. Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրությունը /2015թ. արդյունքներ/, 2016թ. փետրվար, Երևան, էջ 28


Վերլուծության ընթացքում բանկերն անհրաժեշտության դեպքում վերանայում և ճշգրտում են տնտեսության առաջնային ճյուղերի վարկավորման ռազմավարությունը: Բանկերն իրենց վարկային գործունեությունը ծավալում են հետևյալ ուղղություններով՝ արդյունաբերություն, շինարարություն, էներգետիկա, առևտուր, գյուղատնտեսություն, տրանսպորտ և կապ, հանրային սնունդ և սպասարկում, ֆինանսական հատված և այլ ոլորտներ:

Ընդ որում, ռիսկերի կենտրոնացվածությունից խուսափելու համար ներկայումս առանձին բանկերի կողմից սահմանվում են ձեռնարկատիրական նպատակով տրամադրվող վարկերի սահմանաչափ՝ ընդհանուր վարկային պորտֆելի առավելագույնը 70%-ի չափով, իսկ վարկերի առավելագույն չափն ըստ տնտեսության ճյուղերի չի կարող գերազանցել ընդհանուր ձեռնարկատիրական վարկերի հետևյալ սահմանաչափերը՝

- | | |
|---------------------------|-------------------------------------|
| - արդյունաբերություն՝ 40% | - տրանսպորտ և կապ՝ 20% |
| - առևտուր՝ 30% | - գյուղատնտեսություն՝ 10% |
| - շինարարություն՝ 35% | - ֆինանսական հատված՝ 15% |
| - էներգետիկա՝ 25% | - հանրային սնունդ և սպասարկում՝ 15% |
| - այլ ճյուղեր՝ 15% | |

- ոչ ռեզիդենտներին տնտեսության տարբեր ճյուղերով տրամադրված վարկեր՝ 15%:

Գծանկար 13. ՀՀ բանկերի վարկային ներդրումների պորտֆելի կառուցվածքն՝ ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի, % /2016թ. հունվարի 1-ի դրությամբ/*




* * Աղբյուրը՝ KPMG. Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրությունը /2015թ. արդյունքներ/, 2016թ. փետրվար, Երևան

Ինչպես վկայում են 13-րդ գծանկարում բերված տվյալները՝ սպառողական վարկերը, արդյունաբերության, առևտրի ոլորտին տրված վարկերը ավանդաբար կազմում են բանկերի ընդհանուր վարկերի գերակշիռ մասը՝ ուսումնասիրության ժամանակահատվածի համար կազմելով համապատասխանաբար՝ 22.5%, 21.3% և 19.2%: Վարկավորման ամենամեծ աճը գրանցվել է սպասարկման ոլորտին տրամադրված վարկերի ծավալում, 2014թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ վարկերի ծավալն աճել է 45.7% -ով:

Բանկերի վարկային ներդրումների պորտֆելի վերլուծության մյուս ուղղությունը հանդիսանում է պորտֆելի աշխարհագրական կառուցվածքի ուսումնասիրությունը: ՀՀ առևտրային բանկերը հիմնականում վարկային գործունեություն են ծավալում ՀՀ մարզերում և ԼՂՀ տարածքում: Նշված տարածքներից դուրս վարկավորումը թույլատրվում է միայն բարձր իրացվելի ակտիվների ապահովվածության առկայության կամ լիարժեք մշտադիտարկման իրականացման հնարավորության դեպքում: Միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող վարկային ծրագրերին բանկի մասնակցության դեպքում վարկավորման աշխարհագրական սահմանները, ոլորտները և այլ պայմանները որոշվում են այդ ծրագրերով սահմանված պահանջներին համապատասխան:

Նշենք, որ ՀՀ կառավարության կողմից ներկայումս մեծ ուշադրության է արժանացել տարածքային համաչափ զարգացման քաղաքականությունը, ինչի իրագործմամբ, կարծում ենք, մոտ ապագայում հնարավոր է փոփոխվի բանկերի վարկային ներդրումների աշխարհագրական տեղաբաշխման կառուցվածքը: Դա հնարավորություն կտա ՀՀ բոլոր մարզերում տնտեսավարող սուբյեկտների ներդրումային պահանջարկը հավասարաչափ բավարարել:

Գծանկար 14. Վարկային ներդրումների աշխարհագրական կառուցվածքը 2010-2015թթ. /հազար դրամ/*



* Աղբյուր՝ «ՀՀ եւ ԼՂՀ տարածքներում գործող առևտրային բանկերի եւ վարկային կազմակերպությունների վարկային ներդրումների եւ ներգրավված միջոցների կազմն ու կառուցվածքն ըստ մարզերի»/2003-2015թթ./,

2015թ. Երևանում վարկային ներդրումներն աճել են 6.3%-ով (77.8 մլրդ դրամով), իսկ ՀՀ մյուս մարզերում և ԼՂՀ-ում ընդհանուր վարկային ներդրումներն աճել են 14.3%-ով (89.9 մլրդ դրամով):


Այսպիսով, ընդհանուր վարկային ներդրումներում Երևանին հատկացված վարկերի տեսակարար կշիռը նվազել է 1.6 տոկոսային կետով՝ կազմելով 64.8%:

Վարկային ներդրումների առավել բարձր աճ է գրանցվել Արագածոտնի մարզում և ԼՂՀ-ում: Վայոց Ձորում և Սյունիքում վարկային ներդրումների ծավալը կազմել է համապատասխանաբար 29,9, 25, 21,8 և 21,2 տոկոս:

Երևանում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտների, ինչպես նաև սպառողական և առևտրի ճյուղի վարկավորման աճով: Վերոնշյալ ճյուղերի վարկավորումը ավելացել է համապատասխանաբար 37.2%-ով (կամ 32.4 մլրդ դրամով) 10.7%-ով (կամ 23.4 մլրդ դրամով) և 8.2%-ով (կամ 22.6 մլրդ դրամով):

ՀՀ մյուս 10 մարզերում և ԼՂՀ-ում վարկերի աճը հիմնականում պայմանավորված է արդյունաբերության (հիմնականում հանքագործության) և գյուղատնտեսության վարկերի աճով: Նշված ճյուղերի վարկավորումը (առանց Երևանի) ավելացել է համապատասխանաբար 19.5%-ով (կամ 27.1 մլրդ դրամով) և 21.4%-ով (կամ 21.1 մլրդ դրամով): Արդյունաբերության վարկերի առավել խոշոր աճ է արձանագրվել ԼՂՀ-ում (6.6 մլրդ դրամ), Շիրակի (3.5 մլրդ դրամ) և Արարատի մարզերում (2.0 մլրդ դրամ), գյուղատնտեսության վարկերի խոշոր աճ՝ Կոտայքի (6.3 մլրդ դրամ), Արարատի (3.3 մլրդ դրամ) և Արագածոտնի (3.0 մլրդ դրամ) մարզերում:

Գծանկար 15. Վարկային ներդրումների աշխարհագրական կառուցվածքը՝ ըստ վարկերի տեսակարար կշիռների 2010-2015թթ. /հազար դրամ/



* Աղբյուրը՝ «ՀՀ եւ ԼՂՀ տարածքներում գործող առևտրային բանկերի եւ վարկային կազմակերպությունների վարկային ներդրումների եւ ներգրավված միջոցների կազմն ու կառուցվածքն ըստ մարզերի»/2003-2015թթ./,

2015թ. փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի ծավալները գրեթե չեն փոփոխվել և կազմել են 507.3 մլրդ դրամ: Ընդհանուր վարկային ներդրումների

կազմում փոքր և միջին բիզնեսին տրամադրված վարկերի տեսակարար կշիռը նվազել է 2.2 տոկոսային կետով և 2015 թ.-ի հունիսի 30-ի դրությամբ կազմել 24.9%:

Վերլուծության տվյալներով՝ Հայաստանի բանկային համակարգի համախառն վարկային ներդրումները, այդ թվում՝ ԼՂՀ-ում, 2014 թ.-ի հունիսից 2015 թ.-ի հունիսն ընկած ժամանակահատվածում կազմել են 2 տրիլիոն 40 մլրդ դրամ՝ ավելանալով 9 տոկոսով (1 դոլարը – 484,43 դրամ):⁸²

Վերլուծելով ՀՀ առևտրային բանկերի զարգացման ռազմավարության հիման վրա կորպորատիվ հաճախորդների վարկային քաղաքականությամբ սահմանված ռազմավարական խնդիրներն ու նպատակները՝ կարել է փաստել, որ բանկերի գերակշիռ մեծամասնությունն իրենց համար սահմանել են այնպիսի վարկային ռազմավարություն, որն ուղղված է թվով շատ հաճախորդների ներգրավմանը, վարկերի տրամադրման ծավալների աճին, նոր ծառայությունների ստեղծմանը և արդեն գոյություն ունեցողների կատարելագործմանը, վարկային պորտֆելի բազմա-տեսակացմանը և այլն:

Հաշվի առնելով շրջակա միջավայրի անընդհատ փոփոխությունները, յուրաքանչյուր բանկ պետք է մշտապես ճշգրտի իր ռազմավարությունը՝ դիտելով այն որպես արտաքին շուկայական այլընտրանքների և ներքին գործոնների արդյունք:⁸³

Վարկային ռեսուրսների կառավարման ռազմավարության իրագործման հնարավորությունները պարզելու համար իրականացրել ենք SWOT վերլուծություն՝ գործոնների ընտրության և դրանց ազդեցության նշանակելիության գնահատման ժամանակ: Առանձնացրել ենք մի շարք գործոններ, որոնք բնութագրում են ՀՀ բանկերի վարկային բաժինների ուժեղ և թույլ կողմերը, արտաքին միջավայրի սպառնալիքներն ու հնարավորությունները:

Ուժեղ կողմեր

1. Ֆինանսական ռեսուրսների առկայություն – 5 «մասնակի ցուցանիշը՝ $5/5=1$ »

⁸² «ՀՀ եւ ԼՂՀ տարածքներում գործող առևտրային բանկերի եւ վարկային կազմակերպությունների վարկային ներդրումների եւ ներգրավված միջոցների կազմն ու կառուցվածքն ըստ մարզերի»/2003-2015թթ./,

⁸³ Калистратов Н.В., Кузнецов В.А., Пухов А.В. Банковский розничный бизнес. Издательская группа "БДИ-пресс". М., 2014, էջ 244

2. Ֆինանսական ծառայությունների հասանելիության միջոցով մրցակցային դիրքերն ամրապնդելու՝ ֆինանսական ինստիտուտների հետաքրքրվածությունը – 4 «մասնակի ցուցանիշը՝ 0.8»
3. Հանրությանը մատուցվող ֆինանսաբանկային ծառայությունների որակի կատարելագործումը – 4 «մասնակի ցուցանիշը՝ 0.8»
4. հաճախորդների թվաքանակի ավելացումը - 4 «մասնակի ցուցանիշը՝ 0.8»
5. աշխատողների բարձր պրոֆեսիոնալ մակարդակ – 4 «մասնակի ցուցանիշը՝ 0.8»
6. շուկայական փոփոխություններին դինամիկ արձագանք – 4 «մասնակի ցուցանիշը՝ 0.8»
7. արդյունավետ մարքեթինգային քաղաքականություն – 5 «մասնակի ցուցանիշը՝ 1»:

Թույլ կողմեր

1. Ֆինանսական արդյունքների և ծառայությունների բարձր արժեքը, դրանց սահմանափակ տեսականին և ֆիզիկական հասանելիության խոչընդոտները՝ - 4 «մասնակի ցուցանիշը՝ 0.8»
2. Ֆինանսական միջնորդության ցածր մակարդակը – 2 «մասնակի ցուցանիշը՝ 0.4»
3. Ֆինանսական ծառայությունների հասանելիության բարձրացման գործում պետական և մասնավոր հատվածների փոխգործակցության ցածր մակարդակ – 6 «մասնակի ցուցանիշը՝ 1»
4. Հաճախորդների վստահության երաշխավորման համար անհրաժեշտ ինստիտուցիոնալ միջավայրի անբավարար մակարդակը - 1 «մասնակի ցուցանիշը՝ 0.2»
5. շարքային աշխատողների ցածր հետաքրքրվածություն բանկի զարգացման մեջ – 4 «մասնակի ցուցանիշը՝ 0.8»
6. Ֆինանսական ծառայությունների վերաբերյալ բնակչության իրազեկվածության ցածր մակարդակը - 4 «մասնակի ցուցանիշը՝ 0.8»
7. Թերզարգացած ոչ բանկային ֆինանսական հատվածի առկայությունը – 1 «մասնակի ցուցանիշը՝ 0.2»

Հնարավորություններ

1. Ֆիզիկական և իրավաբանական անձանց վարկավորման ընդլայնում – 5 «մասնակի ցուցանիշը՝ 1»
2. Տեղեկատվական տեխնոլոգիաների արդի հնարավորությունների օգտագործումը ֆինանսական հասանելիության ընդլայնման, ինտերնետ-բանկինգի, հեռահար բանկի մոդելների զարգացման, հաճախորդամետ մոտեցումների ներդրման նպատակով – 3 «մասնակի ցուցանիշը՝ 0.6»
3. Նոր շուկաներ «շուկայական նոր հատվածներ» դուրս գալու հնարավորություն – 5 «մասնակի ցուցանիշը՝ 1»
4. Հեռահար բանկային և ֆինանսական սպասարկման և ծառայությունների մատուցման մեխանիզմների ներդրումը՝ բջջային և ինտերնետ-բանկինգի կատարելագործման շնորհիվ – 5 «մասնակի ցուցանիշը՝ 1»
5. մրցակիցների դիրքերի վատացում – 2 «մասնակի ցուցանիշը՝ 0.4»
6. բանկի վարկային ծառայությունների նկատմամբ պահանջարկի աճ - 2 «մասնակի ցուցանիշը՝ 0.4»
7. պետության բարենպաստ քաղաքականություն - 2 «մասնակի ցուցանիշը՝ 0.4»

Սպառնալիքներ

1. Բնակչության ֆինանսական անվտանգության արդյունավետ մեխանիզմների սակավությունը - 1 «մասնակի ցուցանիշը՝ 0.2»
2. գոյություն ունեցող մրցակիցների միջև ուժեղ պայքար, մրցակցության ճնշման բարձրացում - 2 «մասնակի ցուցանիշը՝ 0.4»
3. կորպորատիվ վարկավորման գործառնությունների բարձր ռիսկայնություն - 3 «մասնակի ցուցանիշը՝ 0.6»
4. Ֆինանսական ծառայությունների անբարեխիղճ մատակարարներից հաճախորդների իրավունքների պաշտպանության մեխանիզմների անկատարությունը - 3 «մասնակի ցուցանիշը՝ 0.6»
5. Առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի ավելացման վերաբերյալ ԿԲ-ի 2014 թվականի դեկտեմբերի 30-ի որոշումը - 5 «մասնակի ցուցանիշը՝ 1»
6. բնակչության եկամուտների վատթարացում – 5 «մասնակի ցուցանիշը՝ 1»

7. փոքր և միջին ձեռնարկատիրության շահութաբերության անկում - 5 «մասնակի ցուցանիշը՝ 1» /հավելված 1 և 2/:

Այժմ հաշվարկենք ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների հանրագումարային ցուցանիշները:

Ուժեղ կողմերը բնութագրող հանրագումարային ցուցանիշը կլինի՝ $4.8/7=0.69$:
Թույլ կողմերը բնութագրող հանրագումարային ցուցանիշը կլինի՝ $4.2/7=0.6$,
հնարավորությունները բնութագրող հանրագումարային ցուցանիշը՝ $4.8/7=0.69$,
սպառնալիքները բնութագրող հանրագումարային ցուցանիշը՝ $4.8/7=0.69$:

$$(0.69+0.69) / (0.6+0.69) = 1.1:$$

Այս գործակիցը ցույց է տալիս, որ բանկերն իրենց վարկային ռազմավարությունն իրականացնելու համար ունեն իրական հնարավորություններ, և միևնույն ժամանակ, օգտագործելով ուժեղ կողմերը և հնարավորությունները՝ պետք է ռազմավարական քայլեր ձեռնարկեն թույլ կողմերի և սպառնալիքների ազդեցությունը թուլացնելու նպատակով /տես հավելված 1/:

Բանկի ուժեղ և թույլ կողմերը համադրվել են նաև ըստ ազդեցության աստիճանի: Առաջնային լուծում և կիրառում պետք է գտնեն ուժեղ ազդեցություն ունեցող կողմերը, այնուհետև՝ միջին և թույլ /հավելված 2/:

ՀՀ բանկերի սոցիալ-քաղաքական զարգացման հնարավորությունների և վտանգների վերլուծության ժամանակ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել դրանց առաջացման հավանականությանը և ազդեցության աստիճանին: Առաջնային կիրառում և լուծում պետք է ստանան հավանականության և ազդեցության բարձր աստիճան ունեցող գործոնները:

Ելնելով առաջացման հավանականության և ազդեցության աստիճանից, ուժեղ ու թույլ և հնարավորություններ ու վտանգներ գործոններից, ընտրվում են առավել կարևորագույնները: Ընտրված գործոնների հիման վրա ձևավորվում են այլընտրանքային ռազմավարությունները և ռազմավարական զարգացման ուղղությունները: ՀՀ առևտրային բանկերի զարգացման ռազմավարական այլընտրանքները ներկայացված են SWOT վերլուծության մատրիցայի S-O, W-O, S-T, W-T դաշտերում /հավելված 3/:

Այսպիսով, ընդհանրացնելով վերը նշվածը, կարող ենք նշել, որ բանկերն իրենց վարկային ռազմավարությունը հաջող իրականացնելու համար պետք է՝ օգտագործելով իր ուժեղ կողմերը և հնարավորությունները՝ քայլեր ձեռնարկեն իրենց թույլ կողմերը վերացնելու և սպառնալիքները չեզոքացնելու ուղղությամբ: Մասնավորապես, ՀՀ բանկերում վարկային ներդրումների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ քայլերը՝

1. փոփոխություններ կատարել ծառայությունների գների մեջ, առաջարկելով մրցակիցների համեմատ առավել ցածր և ճկուն գներ,
2. բարձրացնել սպասարկման որակը և կրճատել մեկ հաճախորդի սպասարկման տևողությունը,
3. բարձրացնել աշխատողների հետաքրքրվածությունը բանկի զարգացման մեջ՝ կիրառելով մոտիվացիայի ժամանակակից ձևերն ու կառուցակարգերը,
4. բարձրացնել վարկային ռիսկի կառավարման մակարդակը, ինչը հատկապես ավելի է կարևորվում ճգնաժամային և հետճգնաժամային իրավիճակներում, և ռիսկերի կառավարման եղանակներն ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել արտաքին տնտեսական գործոնների ազդեցությունը ու իրականացնել ռիսկերի նվազեցման և դիվերսիֆիկացիայի ռազմավարությունները,
5. ժամկետանց վարկերի վերադարձն ապահովելու նպատակով շարունակել վարկառուների մոնիթորինգի անընդհատ իրականացումը (մասնավորապես տեղում՝ օնսայթ մոնիթորինգի), և եթե նկատվում են վարկի մարման մեծ դժվարություններ՝ փոփոխել, վերանայել վարկի պայմանները, ժամկետները, տոկոսադրույքը, մարման կարգը, իսկ որպես ծայրահեղ միջոց դիմել գրավի իրացմանը՝ վարկի վերադարձն ապահովելու նպատակով,
6. հաշվի առնելով ճգնաժամի հետևանքով բնակչության եկամուտների և ձեռնարկությունների շահութաբերության մակարդակի զգալի անկումը՝ նրանց վարկավորման ժամանակ իրականացնել վարկունակության ավելի խորը և օբյեկտիվ գնահատում (կիրառելով վարկունակության գնահատման ժամանակ հաշվարկվող ֆինանսական ցուցանիշները, ինչպես նաև իրականացնելով դրամական հոսքերի, գործարար ռիսկի վերլուծություն՝ ձեռնարկատիրական վարկերի տրամադրման ժամանակ):

Գլուխ 3. Կորպորատիվ հաճախորդների վարկային ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման արդի գերակայությունները ՀՀ առևտրային բանկերում

3.1. Տնտեսավարող սուբյեկտների վարկային ռիսկերի կառավարման հիմնարար ուղղությունները առևտրային բանկերում

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը (վարկատուն) վարկային պայմանագրով պարտավորվում է պայմանագրով սահմանված չափերով և պայմաններով դրամական միջոցներ (վարկ) տրամադրել վարկառուին, իսկ վարկառուն պարտավորվում է վերադարձնել ստացված գումարը և տոկոսներ վճարել,⁸⁴ հետևապես՝ վարկային ռիսկը առաջանում է, երբ փոխառուների կողմից հիմնական պարտքը և դրա գծով վճարվող տոկոսները վարկային պայմանագրով նշված պայմաններին և ժամկետներին համապատասխան չեն վճարվում: Ընդ որում, վարկային ռիսկը սերտորեն կապված է վարկային պորտֆելի որակի հետ:

Առկա են վարկային ռիսկի տարբեր սահմանումներ, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև:

Վարկային ռիսկն այն ներկա կամ ապագա հավանականությունն է, որ բանկի վարկառուն կամ այլ պարտապանը կխախտի բանկի հետ կնքած պայմանագրի պայմանները, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և/կամ կապիտալի վրա⁸⁵:

Մեկ այլ սահմանմամբ՝ վարկային ռիսկը վարկի, հաշվարկված տոկոսի կամ դրանց մի մասի պայմանագրով սահմանված ժամկետներից ուշացման կամ անվերադարձելիության հնարավոր վտանգն է՝ պայմանավորված վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացմամբ, գրավի արժեզրկմամբ և նման այլ պատճառներով⁸⁶:

⁸⁴ ՀՀ քաղաքացիական օրենսգրք, հոդված 887

⁸⁵ Костюченко Н.С. Анализ кредитных рисков / Н.С. Костюченко - СПб.: ИТД «Скифия», 2010, էջ 57

⁸⁶ Мирошниченко О.С. Кредитный риск и собственный капитал банка // Финансы и кредит. - 2011. - №1, էջ 4

Վարկային ռիսկը վարկառուների կողմից պայմանագրի պայմաններին համապատասխան ֆինանսական պարտավորությունների չկատարման կամ ոչ ժամանակին կամ ոչ լրիվ կատարման հետևանքով վարկային կազմակերպության մոտ կորուստների առաջացման ռիսկն է:⁸⁷ Վարկային ռիսկի պոտենցիալ վտանգավոր հետևանքների պատճառով կարևոր է իրականացնել բանկի հնարավորությունների բազմակողմանի վերլուծություն՝ ուղղված վարկերի, ավանդների, երաշխիքների և այլ վարկավորման գործիքների մշակման, գնահատման, կառավարման, դիտարկման, վերահսկողության իրականացմանը և դրանց վերադարձման ապահովմանը: Վարկային գործառնությունների ռիսկի աստիճանի արտահայտումը հանդիսանում է վարկային բնույթ ունեցող գործառնության առավել բարձր տոկոսային դրույքը՝ համեմատած այլ ակտիվների հետ, օրինակ վարկեր, ֆակտորինգ, հաշվարկված զեղչեր, երաշխիքների տրամանդրում: Վարկային դրույքը պետք է փոխհատուցի բանկին ժամանակավոր տրամադրված միջոցների արժեքը, ապահովման արժեքի փոփոխությունը և վարկառուի կողմից պարտավորությունների չկատարումը:

Ընդհանրացնելով կարելի է ասել, որ վարկային ռիսկը բանկի պոտենցիալ կորստի ռիսկն է, որի հետ բանկը կարող է բախվել, եթե փոխառուն, ում նաև կոնտրագենտ են անվանում, չի ցանկանում կամ ի վիճակի չի լինում ապահովել իր պարտավորությունների լրիվ կամ մասնակի կատարումը:⁸⁸ Վարկային ռիսկի գոյությունը, որպես այդպիսին, անհրաժեշտաբար մտահոգության պատճառ չէ: Ռիսկի գնահատման համար վերահսկողը պետք է որոշի, թե ռիսկը, որին գնում է բանկը, արդարացված է, թե ոչ: Ընդհանրապես ռիսկերն արդարացված են, երբ նրանք հասկանալի, չափելի, վերասկելի են և կազմակերպությունը կարող է հեշտորեն հակազդել դրանց բացասական ազդեցությանը: Չարդարացված ռիսկերի գնալու դեպքում վերահսկողները պետք է հորդորեն բանկի ղեկավարությանը մեղմացնելու կամ վերացնելու չարդարացված ռիսկերը: Բանկի կողմից համարժեք գործողությունները կարող են ներառել ռիսկի ազդեցության նվազեցումը, կապիտալի մեծացումը կամ ռիսկի կառավարման գործընթացի ամրապնդումը:

⁸⁷ Максютлов А.А. Банковский менеджмент: учебно-практическое пособие.- М.: "Альфа-Пресс", 2009., էջ 63

⁸⁸ Грюнинг Х. ван, Брайович Братанович С. Анализ банковских рисков. Система оценки корпоративного управления и управления финансовым риском / Грюнинг Х. ван, Брайович Братанович С. - М.: Издательство «Весь Мир», 2007, էջ 304

Վարկային ռիսկի բնութագրային առանձնահատկություն է հանդիսանում այն, որ վարկային ռիսկը առաջանում է ոչ միայն վարկի տրամադրման և տոկոսների ստացման գործընթացում, այլև այլ հաշվեկշռային և արտահաշվեկշռային պարտավորություններով պայմանավորված (երաշխիք, ակցեպտ, ներդրումներ արժեթղթերում), ինչպես նաև վարկային ռիսկին ուղեկցող ռիսկերի հետևանքով՝ արժույթային, տոկոսային և իրացվելության ռիսկեր⁸⁹: Այդ ռիսկերը անուղղակի կապված են վարկային ռիսկի հետ և հանդես են գալիս որպես վարկային ռիսկի աստիճանի և չափի վրա ազդող: Վարկային ռիսկի առաջացման վտանգը առկա է հետևյալ դեպքերում⁹⁰.

- Վարկի տրամադրում և ստացում,
- Ներգրավված և տեղաբաշխված դեպոզիտներ,
- Տեղաբաշխված այլ միջոցներ, ներառյալ՝ արժեթղթեր, բաժնետոմսեր և վարկային պայմանագրով նախատեսված մուրհակներ,
- Ֆակտորինգի ֆինանսավորման գործարքներ,
- Գործարքով ձեռքբերված իրավունքներ,
- Երկրորդային շուկայում ձեռքբերված գրավ,
- Ֆինանսական ակտիվների վաճառք/առք,
- Ակրեդիտիվների վճարում,
- Պայմանագրով նախատեսված դրամական միջոցներ, արժեթղթերի կամ այլ ֆինանսական ակտիվների ձեռքբերում/օտարում,
- Ֆինանսական վարձակալություն (լիզինգ):

Բանկային վարկային ռիսկի կառավարումը ունի իր առանձնահատուկ նպատակներն, որոնցից հիմնականներն են՝ ⁹¹

- Վարկային գծով ֆինանսական կորուստների նվազեցումը,
- Բանկի սահմանափակ վարկային ռեսուրսների օգտագործման լրացումը,
- Անհիմն բարձր ռիսկային վարկային գործողությունների մասշտաբի և քանակի սահմանափակումը,

⁸⁹ Лаврушин О.И. Банковские риски: учебное пособие / под ред. д-ра экон. наук, проф. О.И. Лаврушина и д-ра экон. наук, проф. Н.И. Валенцевой. -М.: КНОРУС, 2007, էջ 232

⁹⁰ Костюченко Н.С. Анализ кредитных рисков / Н.С. Костюченко - СПб.: ИТД «Скифия», 2010, էջ 58

⁹¹ Корнилов Ю.А. Некоторые вопросы управления кредитным риском в кризисных условиях//Деньги и кредит. – 2009. - №5, էջ 25

- Վարկային գործողությունների կատարման պլանավորված շահույթի ստացումը,
- Բանկի ֆինանսական և կազմակերպչա-կառուցվածքային կայունության բարձրացումը և դրա զարգացման ապահովումը,
- Բանկի գործունեությունում նվազագույն ծախսերով ռիսկի և անորոշության հաղթահարումը:

Այս ամենի հետ մեկտեղ բանկի վարկային ռիսկի կառավարման հիմնական նպատակը կարող է դիտարկվել որպես երկակի գործընթաց, որն ուղղված է մի կողմից փոխառության միջոցների վերադարձման ապահովմանը, մյուս կողմից վարկերի ներդրումից բանկի եկամուտի ստացման ապահովմանը: Վարկային ռիսկի կառավարման համակարգը պետք է համապատասխանի սահմանված պահանջներին, որոնց թվին են պատկանում՝ ամբողջականությունը, կայունությունը, նպատակասլացությունը, ճկունությունը, միօրինակությունը, գործնականությունը, հուսալիությունը, լավատեսությունը, խնայողությունը:⁹²

Վարկային ռիսկի կառավարման հիմքում պետք է դրված լինեն որոշակի սկզբունքներ: Բազելյան կոմիտեի կողմից սահմանված են արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքներ, որոնց պետք է հետևեն բանկերը: Արդյունավետ բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի վերանայված 29 հիմնարար սկզբունքներից 17-րդը նվիրված է վարկային ռիսկին, այն է՝ վարկերի տրամադրում, ներդրումների իրականացում, վարկային և ներդրումային քաղաքականության անկախ գնահատումը:

Տնտեսավարման ժամանակակից պրակտիկայում բանկային ռիսկի կառավարումը պետք է իրականացվի հետևյալ սկզբունքներով.⁹³

- Հնարավոր կորուստների առաջացման աղբյուրների կամ իրավիճակների կանխատեսում, որոնք կարող են առաջացնել կորուստներ և դրանց քանակական չափում,
- Ռիսկերի ֆինանսավորում, դրանց նվազեցման տնտեսական աջակցություն,

⁹² Жариков В.В. Управление кредитными рисками: учебное пособие / В.В. Жариков, М.В. Жарикова, А.И. Евсейчев. – Тамбов: Изд-во Тамб. гос. техн. ун-та, 2009, էջ 244

⁹³ Колесников В.И., Кроливецкая Л.П. Банковское дело. – М.: Финансы и статистика, 2008, էջ 93

- Ռիսկերի կառավարման համակարգի քաղաքականության և մեխանիզմի հստակություն,
- Ռիսկերի վերահսկողության կոորդինացում բանկի բոլոր ստորաբաժանումներում և ծառայություններում, ռիսկի կառավարման գործընթացի արդյունավետության նկատմամբ հետևողականություն:

Վարկային ռիսկի մակարդակի վրա ազդում են հետևյալ գործոնները.

- ✱ Երկրի և տարածաշրջանի տնտեսական և քաղաքական իրավիճակը, այսինքն մակրոտնտեսական և միկրոտնտեսական գործոնները, անցումային տնտեսության ճգնաժամային իրավիճակը, բանկային համակարգի ձևավորման անավարտությունը և այլն,
- ✱ Առանձին ճյուղերում վարկային գործունեության կենտրոնացման և տնտեսության փոփոխության նկատմամբ զգայության մակարդակը,
- ✱ Վարկառուի վարկունակությունը, համբավը և վարկառուի տեսակն ըստ իրավունքի ձևի, սեփականությունը և նրանց փոխհարաբերությունները մատակարարների և այլ վարկառուների հետ,
- ✱ Դժվարիրացվելի կամ արագ արժեզրկվող ակտիվների ընդունումը որպես գրավ կամ վարկի համար համապատասխան ապահովվածություն ձեռքբերելու անկարողությունը,
- ✱ Վարկային պորտֆելի տարատեսականացումը, վարկային գործարքի և առևտրային կամ ներդրումային ծրագիրը հիմնավորող տեխնիկա-տնտեսագիտական ճշտությունը,
- ✱ Վարկերի տրամադրման և վարկային ու արժեթղթերի պորտֆելի ձևավորման բանկի քաղաքականության հաճախակի կամ էական փոփոխությունը,
- ✱ Տրված վարկերի տեսակները, ձևերը, չափերը և դրանց ապահովվածությունը,
- ✱ Կարճ ժամանակահատվածում չափից շատ քանակի նոր ծառայությունների գործնական ներդրումը (այդ դեպքում բանկը հաճախ է ենթարկվում բացասական կամ զրոյական պոտենցիալ պահանջարկի՝ ըստ մարքեթինգի տեսության):⁹⁴

⁹⁴ Макеев С.Р. Денежно-кредитная политика: теория и практика. М.: Экономистъ, 2007, էջ 85

Վարկային ռիսկի կառավարման գործընթացը ՀՀ բանկերում կատարվում է մի քանի փուլերով: Նախևառաջ, բանկը պետք է ձևավորի իր վարկային քաղաքականությունը, այսինքն՝

1. Ընտրի շուկայի այն հատվածը, որը բանկը նախընտրում է ֆինանսավորել,
2. Որոշել վարկերի միջին ժամկետայնությունը և տոկոսադրույքները,
3. Սահմանի վարկի ապահովվածության՝ իր կողմից ընդունելի գրավների ցանկը,
4. Որոշի ռիսկի այն մակարդակը, որը բանկը պարտավոր է ստանձնել:

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է հենց առաջին՝ բանկի վարկային քաղաքականության մշակման և ռիսկի ոլորտում ռազմավարության որոշման փուլերով: Այս փուլում բանկը իր նպատակներն է սահմանում, որոնց պլանավորում է հասնել վարկային քաղաքականության իրագործման շնորհիվ: Ցանկացած բանկի հաջողության կարևորագույն նախադրյալներից մեկը հիմնավորված և խելամիտ վարկային քաղաքականության մշակումն ու դրա հետևողական իրագործումն է:⁹⁵

Վարկային քաղաքականությունը բանկի խորհրդի կողմից հաստատված և բանկի գործադիր մարմիններին, ստորաբաժանումների ղեկավարներին և համապատասխան աշխատակցներին առաջադրվող հրահանգների համալիր է, գործունեության ուղեցույց, որը նպատակաուղղված է բանկի վարկային պորտֆելի կառավարման արդյունավետության բարձրացմանը:⁹⁶ Այն ներառում է բանկի կողմից վարկերի ստացման և տրամադրման գործընթացների ռազմավարությունը և մարտավարությունը: Վարկային քաղաքականության մշակմանը, որպես կանոն, մասնակցում են բանկի կառավարման բոլոր մակարդակների մասնագետները:

Վարկային քաղաքականությունը սահմանում է բանկի վարկային գործունեության հիմնական նպատակները, խնդիրները և նախապատվությունները, դրանց իրագործման միջոցներն ու մեթոդներն, ինչպես նաև վարկավորման գործընթացի կազմակերպման սկզբունքները:⁹⁷ Այն մշակվում է բանկի ընդհանուր

⁹⁵ Банковские риски : учебник / под ред. О. И. Лаврушина, Н. И. Валенцовой. – 3-е изд., перераб. и доп. – М. : КНОРУС, 2013, էջ 50

⁹⁶ Горелая, Н. В. Организация кредитования в коммерческом банке : учеб. пособие / Н. В. Горелая. – М. : Форум : ИНФРА-М, 2012, էջ 118

⁹⁷ Тавасиев, А. М. Банковское дело: управление кредитной организацией : учеб. пособие / А. М. Тавасиев. – 2-е изд., перераб. и доп. – М. : Дашков и К, 2011, էջ 85

նազմավարությանը համապատասխան և անհրաժեշտ պայման է վարկավորման գործընթացը կանոնակարգող ներքին այլ փաստաթղթերի մշակման համար: Յուրաքանչյուր բանկ ինքն է ձևավորում իր վարկային քաղաքականությունը՝ հաշվի առնելով քաղաքական, տնտեսական, կազմակերպական և այլ գործոնները: Որպես կանոն վարկային քաղաքականություն մշակելիս բանկը ելնում է այն հանգամանքից, որ վարկային գործառնություններից ստացվող եկամուտը կազմում է բանկի հիմնական մասը: Վարկային քաղաքականության մշակման, հաստատման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան փոփոխությունների կատարման, վերահսկողության և մոնիթորինգի համար պատասխանատվություն է կրում բանկի խորհուրդը: Վերջինս պարբերաբար տեղեկատվություն է ստանում բանկի կողմից տրամադրված վարկերի վերաբերյալ՝ վարկային քաղաքականության համապատասխանության մոնիթորինգի նպատակով:⁹⁸

Բանկի վարկային քաղաքականությամբ սահմանվում են նաև վարկի գնահատման ընդհանուր չափանիշները, որոնք վերաբերում են վարկային շուկայի ուսումնասիրությանը, վարկերի նպատակին, մարման աղբյուրներին, վարկերի տոկոսադրույքի որոշմանը, վարկառուի վարկունակությանը, նրա վերաբերյալ ֆինանսական տեղեկատվությանը և փաստաթղթերին ներկայացվող պահանջերին: Վարկային քաղաքականությունը պետք է լինի ճկուն, որպեսզի ժամանակին հաշվի առնի քաղաքական, տնտեսական, իրավական և շուկայական իրադրության հնարավոր փոփոխությունները: Վարկային քաղաքականությունից շեղումները պետք է հասցվեն նվազագույնի, իսկ բացառությունների դեպքում այն ամբողջությամբ պետք է հիմնավորված լինի: Բանկի վարկային քաղաքականությունը պետք է սահմանվի գրավոր կերպով և հաստատվի բանկի խորհրդի կողմից: Այն պետք է վերանայվի տարին առնվազն մեկ անգամ՝ շուկայում տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես նաև վարկային գործընթացում ձեռք բերված փորձը արտացոլելու նպատակով:⁹⁹

Միջազգային բանկային պրակտիկայում ընդունված է կարծել, որ ռիսկը ավելանում է, եթե բանկը

⁹⁸ Костерина, Т. М. Банковское дело : учеб. для бакалавров / Т. М. Костерина ; Моск. гос. ун-т экономики, статистики и информатики. – 2-е изд., перераб. и доп. – М. : Юрайт, 2013, էջ 188

⁹⁹ Киреев, В. Л. Банковское дело : учебник / В. Л. Киреев, О. Л. Козлова. – М: КНОРУС, 2012, էջ 86-87

- ☀ Զունի սեփական վարկային քաղաքականություն
- ☀ Զի տեղեկացրել բոլոր աշխատողներին վարկային քաղաքականության բովանդակությունը
- ☀ Սահմանված քաղաքականությանը հակասական քաղաքականություն է իրականացնում:¹⁰⁰

Վարկային քաղաքականություն ընտրելուց և հաստատելուց հետո բանկը պետք է մշակի վարկային ռիսկի կառավարման իր ռազմավարությունը: Վարկային ռիսկը բաղկացած է երկու տիպի ռիսկերից՝ գործարքի ռիսկ և վարկային պորտֆելի ռիսկ:

Վարկային պորտֆելի ռիսկը իր հերթին բաժանվում է

- Ներհատուկ (intrinsic) ռիսկի,
- Կենտրոնացման ռիսկի:¹⁰¹

Ներհատուկ ռիսկը կապված է առանձին վարկառուի գործունեության և ֆինանսական վիճակի հետ, իսկ կենտրոնացման ռիսկը պայմանավորված է տնտեսության միևնույն ճյուղում կամ միևնույն տարածաշրջանում գործող ձեռնարկություններին տրամադրված ընդհանուր վարկերի տեսակարար կշռով բանկի վարկային պորտֆելի մեջ:

Գործարքի ռիսկը կապված է վարկերի տրամադրումը կարգավորող ընթացակարգերի արդյունավետության հետ:¹⁰²

Վարկային ռիսկի կառավարման գործընթացը հանդիսանում է բանկային գործունեության անբաժանելի մասը և իր մեջ ներառում է այնպիսի իրականացման շարունակական փուլեր, ինչպիսիք են՝ վարկունակության գնահատումը և փոխառուի դեֆոլտի հավանականությունը, փոխառուի ներքին վարկային ռեյտինգի յուրացումը և դեֆոլտի դեպքում փոխատվության կորստի մեծության որոշումը, վարկի գնի սահմանումը և ի վերջո փոխառուին վարկ տրամադրելու մասին որոշումների կայացումը: Վարկային ռիսկը բանկային գործողությունների միասնական ռիսկի առավելագույն մասն է կազմում և այդ պատճառով հիմնականում սահմանում է բանկային գործունեության այնպիսի ցուցանիշներ ինչպիսիք են ակտիվների չափը՝

¹⁰⁰ Колпакова, Г. М. Финансы, денежное обращение и кредит : учеб. пособие для бакалавров / Г. М. Колпакова. – 4-е изд., перераб. и доп. – М. : Юрайт, 2012, էջ 244-246

¹⁰¹ Костюченко Н.С. Анализ кредитных рисков / Н.С. Костюченко - СПб.: ИТД «Скифия», 2010, էջ 60

¹⁰² Финансы, денежное обращение и кредит : учеб. для бакалавров / под ред. Л. А. Чалдаевой. – М. : Юрайт, 2012, էջ 125

կշռված ռիսկի մակարդակով, փոխառվության հնարավոր կորուստների պահուստներ, սեփական կապիտալի բավարարություն և վերջին հաշվով բանկի կապիտալի եկամտաբերություն: Այդ իսկ պատճառով վարկային ռիսկի կառավարման հուսալի մոդելի ընտրությունը հանդիսանում է բանկի ղեկավարության կարևոր ռազմավարական որոշում:¹⁰³

Վարկային ռիսկի կառավարման ռազմավարությունը պետք է փաստաթղթավորված լինի և ներառի հետևյալ հիմնական ընթացակարգերը.

- ✚ Վարկառուի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում և վերլուծություն,
- ✚ Վարկերի հաստատման և տրամադրման սահմանաչափեր վարկերի համար պատասխանատու յուրաքանչյուր ղեկավար աշխատողի համար,
- ✚ Պահանջվող փաստաթղթերի ցանկ, բանկի իրավաբանական վարչության կողմից հաստատված ստանդարտացված վարկային պայմանագրեր,
- ✚ Բավարար գրավ, գրավի պայմանագրեր, գրավի պարտադիր ապահովագրություն,
- ✚ Ոչ ամբողջական փաստաթղթերի մոնիթորինգ և համալրում,
- ✚ Տրամադրված վարկերի նպատակային օգտագործման մոնիթորինգ,
- ✚ Ժամկետանց վարկերի և տոկոսների մոնիթորինգ,
- ✚ Գրավների քանակի և որակի վերահսկում (առավել կարևոր է շրջանառու միջոցների գրավի դեպքում),
- ✚ Վարկերի և վարկային գծերի պարբերաբար վերանայում,
- ✚ Հաշվետվություններ բանկի ղեկավարությանը և ԱՊԿՀ-ին՝ ըստ սահմանված ժամանակացույցի, ներառյալ՝ ժամկետանց կամ վերանայված պայմաններով վարկերի, խոշոր վարկառուների, վարկային պորտֆելի կենտրանացումների, պոտենցյալ վարկառուների վերաբերյալ հաշվետվությունները և այլն,
- ✚ Բանկային համակարգը վերահսկող մարմինների կողմից վարկային պորտֆելի և առանձին վարկառուների նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխանության վերահսկում,

¹⁰³ Тавасиев, А. М. Банковское дело: управление кредитной организацией : учеб. пособие / А. М. Тавасиев. – 2-е изд., перераб. и доп. – М. : Дашков и К, 2016, էջ 144-145

🚦 Վարկային պորտֆելի և առանձին վարկառուների անկախ վերստուգում և վերլուծություն բանկի ներքին աուդիտի կողմից:¹⁰⁴

Բանկի վարկային քաղաքականության իրագործման փուլում բանկը անցնում է վարկերի տրամադրմանը, սկսում է աշխատել վարկային գործունեության կազմակերպման մեխանիզմը և ի հայտ են գալիս առաջին խնդիրները և ռիսկերը: Կարևոր է ժամանակին հայտնաբերել ռիսկերը: Վարկային քաղաքականության իրագործման մեթոդական ապահովման կարևոր բաղադրամաս է վարկերի տրամադրման կարգը, որով սահմանվում է բանկի կողմից իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և քաղաքացիների վարկավորման ընթացակարգերը: Այսպես, օրինակ, սպառողական վարկերի տրամադրման և սպասարկման գործընթացը արմատապես տարբերվում է գյուղատնտեսական գործունեության համար պահանջվող վարկերի համանման գործընթացներից: Մասնավորապես, ոսկու գրավադրմամբ վարկավորման դեպքում սովորաբար չկա վարկառուի վարկունակության, գործարար շրջանակներում նրա ունեցած համբավի, նրա հետ փոխկապակցված անձանց և այլ հարցերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման անհրաժեշտություն: Եվ, ընդհակառակը, գյուղատնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտներին վարկ տրամադրելու դեպքում նմանատիպ գործոնների դերի թերագնահատումը կարող է ծանր հետևանքներ ունենալ վարկատուի համար:¹⁰⁵

Այսպիսով, վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է հետևյալ հիմնական եղանակներով.

- Վարկային պորտֆելի և բանկի ներդրումների բազմատեսակացումը,
- Վարկունակության, այսինքն՝ վարկի մարման՝ փոխառուների հնարավորությունների նախնական վերլուծություն,
- Տրամադրվող վարկերի արժեքի գնահատում,
- Նախապես տրված վարկերի օպերատիվ վերահսկողություն:

Վարկային ռիսկերի նույնականացումը համարվում է ռիսկի ակտիվ կառավարման սկզբնական փուլը: Հետո տեղի է ունենում վարկային ռիսկի առաջացման

¹⁰⁴ Բ.Ասատրյան. Բանկային գործ. Երևան, Սարվարդ հրատ. 2004, էջ 398


¹⁰⁵ Лаптырев Д. “Система управления финансовыми ресурсами банка”. М., БДИ-пресс, 2006. էջ 93

պատճառների սահմանում, ինչը կարող է հետագայում օգնել կոնկրետ քայլեր ձեռնարկել ռիսկի վրա ազդելու համար: Հետևանքների կանխատեսումը կարելի է իրականացնել մի քանի սցենարով՝ բացասական (բանկի վարկային ծառայողներին չի հաջողվում ռիսկը նվազեցնել) և դրական (բանկը կարողանում է դուրս գալ ռիսկային իրավիճակից առանց կորուստների) և չեզոք (բանկի կորուստները կամ եկամուտի չստացումը կարելի է կոմպենսացնել ուրիշ աղբյուրներով):¹⁰⁶ Ստեղծված իրավիճակից դուրս ելնելով բանկը իրականացնում է վարկային ռիսկի վրա ազդող որոշակի քայլերի մշակում և կիրառում: Որոշ ժամանակ անց պարզ է դառնում, թե ինչքան հաջող է բանկը հաղթահարել ռիսկը: Արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս հայտնաբերել կառավարման համակարգի թույլ կողմերը: Եթե ռիսկը նվազեցնելու հետ կապված միջոցները հաջող են կատարվել, և արդյունքները դրական են, ապա նշանակում է, որ կառավարման համակարգը արդյունավետ է աշխատում: Հետևաբար կարելի է վերադառնալ երկրորդ փուլին: Եթե արդյունքները բացասական են, ապա անհրաժեշտ է անցնել հաջորդ փուլին՝ անցկացվող վարկային քաղաքականության (ռազմավարության) համապատասխան վերլուծության, որն ընդունելի է ռիսկի մակարդակի վերլուծությանը: Այն դեպքում երբ բանկը չի կարողացել հաղթահարել ռիսկը, բայց վարկային ռազմավարությունը ճիշտ է ընտրված, իսկ կորուստները կատարվել են բանկի ներքին գործոնների պատճառով, անհրաժեշտ է փոփոխություններ մտցնել անցկացրած վարկային քաղաքականության մեջ՝ շտկելով մարտավարությունը: Եթե անցկացվող վարկային քաղաքականությունը չի համապատասխանում ռիսկի ընդունելի մակարդակին, ապա պետք է վերադառնալ առաջին քայլին՝ մշակելով նոր ռիսկերի կառավարման ռազմավարություն:¹⁰⁷

Այսպիսով ներկայացնենք վարկային ռիսկի կառավարման հիմնական փուլերը գծանկարի միջոցով.

¹⁰⁶ Колпакова, Г. М. Финансы, денежное обращение и кредит : учеб. пособие для бакалавров / Г. М. Колпакова. – 4-е изд., перераб. и доп. – М. : Юрайт, 2012, էջ 88-89

¹⁰⁷ Управление банковским кредитным риском. Кабушкин С. Н. — Минск: Новое знание, 2007, էջ 74



Գծանկար 16. Վարկային ռիսկի կառավարման փուլերը

Ռիսկերի կառավարումը ենթադրում է բանկի գործունեության ընթացքում հնարավոր ռիսկերի բացահայտման, նույնականացման, գնահատման և գնահատված ռիսկերին արձագանքման փուլերի իրականացում: Ընդ որում ռիսկերին արձագանքման փուլն իրականացվում է ռիսկից խուսափման, ռիսկի նվազեցման, ռիսկի ընդունման կամ ռիսկի փոխանցման տարբերակներով: Որպես ռիսկի կառավարման առաջին՝ նվազագույն մակարդակ, կարելի է կիրառել բանկերի գործունեությունը կարգավորող և վերահսկող մարմինների (սովորաբար կենտրոնական բանկերի) կողմից սահմանվող տնտեսական նորմատիվները:¹⁰⁸ Ռիսկերի կառավարման ավելի խորացված և գործուն համակարգն արտաքին պարտադիր պահանջներից զատ նախատեսում է նաև բանկի կառավարման մարմնի կողմից

¹⁰⁸ Шапкин, А. С. Экономические и финансовые риски: оценка, управление, портфель инвестиций : [учеб. пособие] / А. С. Шапкин, В. А. Шапкин. – 9-е изд. – М. : Дашков и К, 2013. – 543 с. – 5 экз., էջ 120

մշակված և կիրառվող ներքին կանոնակարգեր և արարողակարգեր, կառավարչական վճիռների կայացման և տեղեկատվական հոսքերի ապահովման, ներքին վերահսկողության համակարգերի կիրառման համախումբ:¹⁰⁹

Բանկը պետք է լայնորեն կիրառի առկա գիտագործնական արդյունավետ փորձը ակտիվների և պասիվների կառավարման գործընթացում՝ մշակված մեխանիզմների ներդրման և շարունակական կատարելագործման միջոցով, որը բանկին հնարավորություն կտա նվազեցնել ռիսկայնությունը՝ բարձրացնելով կառավարման արդյունավետությունը, ընդ որում՝ ռիսկի գնահատման և հետագայում նվազեցման կամ չեզոքացման ուղղությամբ անհրաժեշտ է աշխատանքներ կատարել միայն այն դեպքում, երբ այդ աշխատանքների հետ կապված ծախսերը չեն գերազանցում աշխատանքները չկատարելու արդյունքում հնարավոր կորուստների և չստացված եկամուտների հանրագումարը:¹¹⁰

Ռիսկերի կառավարման օպտիմալ համակարգի առկայությունը բանկում պայմանավորված է միջազգայնորեն ընդունված ռիսկերի կառավարման ստանդարտների և լավագույն փորձի տեղայնացման հնարավորություններով և ներդրման գործընթացի արդյունավետությամբ: Ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով պետք է սահմանվեն ռիսկերի ընդունելի մակարդակները և ռիսկեկամուտ օպտիմալ հարաբերակցությունը, որոնք պետք է ապահովեն բանկի գործունեության շարունակականությունը և զարգացումը՝ առաջադրված ընթացիկ և ռազմավարական խնդիրների լուծման պարագայում: Բանկում ռիսկերի կառավարումը պետք է իրականացվեն ռազմավարական խնդիրների սահմանման, բանկային գործունեությունը կանոնակարգող ընթացակարգերի, այլ ներքին իրավական ակտերի, ծրագրերի մշակման, բանկային գործառնությունների կատարման, ռիսկերի գնահատման, հսկողության փուլերում ընդգրկված՝ բանկի կառավարման մարմինների, ղեկավարների, համապատասխան ստորաբաժանումների և այլ աշխատակիցների կողմից: Բանկի գործունեության ռիսկայնության համակարգային գնահատումը պետք է իրականացվի տարածքային և

¹⁰⁹ Роль кредита и модернизация деятельности банков в сфере кредитования: монография / под ред. О. И. Лаврушина. – М. : КНОРУС, 2012, էջ 85-86

¹¹⁰ Л.П. Белых «Устойчивость коммерческих банков». Москва, «Банки и биржи» 1999 г, էջ 39

կառուցվածքային ստորաբաժանումների, առանձին բիզնես-ուղղությունների և ռիսկատեսակների գծով տվյալների հավաքագրման և վերլուծության հիման վրա:¹¹¹

Հարկ է նշել, որ բանկի վարկային ռիսկի կառավարման գործընթացը պետք է իրականացվի երկու մակարդակով՝ անհատական և պորտֆելային կամ միանման վարկառուների խմբերի և ամբողջ պորտֆելի մակարդակով:¹¹²

Անհատական մակարդակով վարկային ռիսկի կառավարումը ենթադրում է առանձին փոխառուների վարկունակության գնահատում, ինչպես նաև յուրաքանչյուր կոնկրետ փոխառվության մինիմալ պահանջվող եկամտաբերության սահմանում:

Կորպորատիվ վարկառուների մակարդակով ռիսկը գնահատելիս կիրառվում են հետևյալ երեք խումբ գործոնները՝

1. Վարկային պատմություն՝ ներառյալ ժամկետանցների, վերաֆինասավորումների, վերանայումների դեպքերը,
2. Վարկառուի ներկա և սպասվող ֆինանսական վիճակի վերլուծություն՝ ընթացիկ և կանխատեսվող ֆինանսական հոսքեր, միջոցների օգտագործման նպատակայնություն, բիզնեսի (ճյուղի) պատմություն և հեռանկարներ, վարկառուի ռեյտինգ, փոխկապակցված անձանց ֆինանսական դրություն և այլն,
3. Վարկի ապահովվածություն:

Գնահատման ժամանակ այս կամ այն չափանիշի ընտրությունը կախված է վարկի չափերից, վարկառուի տեսակից, պրոդուկտի տեսակից, ստանդարտացվածության աստիճանից և այլն: Փոխառուի (պարտապանի) տեսակից կախված՝ կարող են հաշվի առնվել նաև այլ առանձնահատուկ գործոններ, օրինակ՝ պետությունների կամ ֆինանսական կազակերպությունների դեպքում: Նախկինում բավական տարածված էր արտաքին ռեյտինգների կիրառումը, սակայն այս համակարգը լուրջ խնդիրներ ի հայտ բերեց ճգնաժամի ընթացքում: Դա հաշվի

¹¹¹ Астрелина, В. В. Управление ликвидностью в российском коммерческом банке : учеб. пособие / В. В. Астрелина, П. К. Бондарчук, П. С. Шальнов. – М. : Форум : ИНФРА-М, 2012., էջ 324-325

¹¹² Горелая, Н. В. Организация кредитования в коммерческом банке : учеб. пособие / Н. В. Горелая. – М. : Форум : ИНФРА-М, 2012., էջ 109

առնելով FSB-ի /Financial Stability Board/ կողմից առաջադրված կիրառելի հետևյալ սկզբունքները՝

1. Կարգավորող նորմերից հնարավորինս պետք է հեռացվեն արտաքին ռեյտինգներին հղումները՝ դրանք փոխարինելով այլընտրանքային վարկունակության գնահատման մեթոդներով,
2. բանկերը և այլ ֆինանսական շուկայի մասնակիցները, ինստիտուցիոնալ ներդրողները պետք է ինքնուրույն իրականացնեն վարկունակության գնահատումը և ոչ թե մեխանիկորեն հույս դնեն միայն արտաքին ռեյտինգների վրա:¹¹³

Առանձին վարկառուի վարկունակության գնահատականի մեթոդի մշակումը հանդիսանում է հիմնային տարր բանկի վարկային ռիսկի կառավարման համակարգում: Ընդ որում առանձին վարկառուի վարկունակության ինդեքսը հաճախ սահմանվում է որպես տնտեսական գործունեության ցուցանիշների գծային կոմբինացիա՝

$$Y_i = X_{i1}\alpha_1 + \dots + X_{im}\alpha_m,$$

որտեղ Y_i -ն i -րդ վարկառուի վարկունակության ցուցանիշն է

$X_{i1}, \dots, X_{im}$ -ը i -րդ վարկառուի տնտեսական գործունեության ցուցանիշների վեկտորն է

$\alpha_1, \dots, \alpha_m$ -ը կշռային գործակիցների վեկտորն է:

Պորտֆելային մակարդակում վարկային ռիսկի կառավարման կարևորագույն պահանջը վարկային պորտֆելի ճիշտ համակցության ձևավորումն է՝ վարկային պորտֆելի բազմատեսականացում:


¹¹³ <http://www.fsb.org/2016/02/possible-measures-of-non-cash-collateral-re-use/>

3.2. Վարկային ռիսկերի կառավարման կատարելագործման արդի գերակայություններն ու կառուցակարգերը ՀՀ բանկային համակարգում

ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության տեսանկյունից վարկային ռիսկը շարունակում է դիտարկվել որպես բանկային կարևոր ռիսկերից մեկը: Համաձայն ՀՀ կենտրոնական բանկի «Ֆինանսական կայունության հաշվետվության» 2016 թվականի հրապարակման՝ Հայաստանի Հանրապետությունում վարկային պորտֆելի աճի տեմպը գրեթե մնացել է անփոփոխ՝ նախորդ տարվա համեմատությամբ, ինչ դրական է դիտվում վարկային ռիսկի զսպման տեսանկյունից: Առևտրային բանկի՝ ռիսկով կշռված ակտիվներում վարկային ռիսկի մասնաբաժինը 91.2% է, որը տարեվերջի համեմատ գրեթե չի փոխվել (31.12.2014թ. դրությամբ 91.1%): Այս առումով խիստ կարևորվում է վարկային ռիսկի պատշաճ կառավարումը:

Ներկայացնենք բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկերով կշռված ակտիվների կառուցվածքը 01.01.2016թ. դրությամբ:

Գծանկար 17. Բանկային համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկերով կշռված ակտիվների կառուցվածքը 01.01.2016թ. դրությամբ*




*Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկ, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016, www.cba.am

Գծանկարից պարզ է, որ վարկային ռիսկը մեծ տեսակարար կշիռ ունի (91.2%) ընդհանուր ռիսկերի կազմում, ինչը ևս մեկ անգամ փաստում է վարկային ռիսկի պատշաճ կառավարման անհրաժեշտության մասին:

Վարկային ներդրումների ռիսկայնության առումով՝ «չաշխատող» վարկերի և դեբիտորական պարտքերի («հսկվող», «ոչ ստանդարտ» և «կասկածելի» ռիսկային դաս ունեցող վարկեր և դեբիտորական պարտքեր) տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում տարեվերջի համեմատ աճել է 1.3 տոկոսային կետով և կազմել 5.6%, ինչը բացասական երևույթ է: «Չաշխատող վարկերի» և դեբիտորական պարտքերի տեսակարար կշռի աճին հատկապես նպաստել է նախորդող 3 տարիների վարկային պորտֆելի արագատեմպ աճը (տարեկան միջինը 30% աճ): Այս համատեքստում վարկային պորտֆելի աճի տեմպի դանդաղման միտումները դրական են գնահատվում վարկային ռիսկի զսպման տեսանկյունից: Կիսամյակի ընթացքում «չաշխատող» վարկերի տեսակարար կշռի համեմատաբար զգալի աճ է արձանագրվել արդյունաբերության, հիփոթեքային և շինարարության վարկերում. «չաշխատող» վարկերի տեսակարար կշիռներն ավելացել են համապատասխանաբար 2.2, 2.2 և 2.1 տոկոսային կետով և կազմել 5.8%, 6.4% և 10.4%: 2015թ. չորրորդ կիսամյակի վերջի դրությամբ հիպոթեքային, շինարարության և արդյունաբերության «չաշխատող» վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր «չաշխատող» վարկերում կազմել է համապատասխանաբար 8.5%, 10.1% և 19.6% (31.12.2014թ. դրությամբ՝ 7.6%, 11.5% և 16.7%):¹¹⁴ Ասվածը ներկայացնենք ստորև գծանկարի միջոցով՝

¹¹⁴ Հայաստանի բանկերի միության „ՀՀ բանկային համակարգի 2015թ. տարեկան, այդ թվում՝ չորրորդ եռամսյակի գործունեության ամփոփում: <http://www.uba.am/analysis/banks/?pageid=120&childid=121>

Գծանկար 18. Ըստ տնտեսության ճյուղերի վարկերում «չաշխատող» վարկերի տեսակարար կշռի փոփոխությունը (սլաքի վերջնակետը 01.01.2016թ. դրությամբ է, իսկ սկզբնակետը 01.01.2013թ. դրությամբ)*




* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճագրական Ծառայություն, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016, Հայաստանի բանկերի միություն, www.uba.am

Գծանկարում ուղղահայաց առանցքը ցույց է տալիս «չաշխատող» վարկերի տեսակարար կշռի տվյալ ճյուղի ընդհանուր վարկերում, իսկ հորիզոնական առանցքը՝ ճյուղի «չաշխատող» վարկերի տեսակարար կշիռը ընդհանուր «չաշխատող» վարկերում:

Վարկային պորտֆելում արդյունաբերության և հիպոթեքային վարկերի մասնաբաժինների կայուն պահպանվելու պարագայում աճել է այդ ոլորտների վարկերի կշիռը ընդհանուր վարկային պորտֆելում «չաշխատող» վարկերի մեջ: Մինչդեռ շինարարության վարկերի ձևավորմանը նվազել է՝ պայմանավորված վարկային պորտֆելում այս ճյուղի մասնաբաժնի նվազմամբ: «Չաշխատող» վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում, հաշվարկված միջազգային մեթոդաբանության համաձայն, տարեվերջի համեմատ ավելացել է 1.0 տոկոսային կետով և կազմել 8.3%: Ըստ միջազգային մեթոդաբանության՝ «չաշխատող» վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում, հաշվարկվում է որպես «ոչ ստանդարտ»,

«կասկածելի» և «անհուսալի» դասերին պատկանող վարկերի, դեբիտորական պարտքերի և ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի հարաբերություն: Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումներ/ակտիվներ հարաբերակցության ցուցանիշը նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 0.7%:


Գծանկար 19. «Չաշխատող» վարկերի տեսակարար կշիռը մի շարք երկրների վարկային պորտֆելում 2016թ. հունվարի 1-ի դրությամբ*



*Աղբյուրը՝ Հայաստանի բանկերի միություն, ՀԲՄ անդամ բանկերի գործունեության ամփոփում՝ www.uba.am

Վարկային ներդրումների ճյուղային բաշխվածության տեսանկյունից, ըստ տնտեսության ճյուղերի վարկային ներդրումների՝ Հարֆինդալ-Հիրշմանի ինդեքսը մեծացել է անփոփոխ՝ 0.12 միավոր: Այս ցուցանիշի մակարդակը փաստում է բանկային համակարգում վարկային ներդրումների բաշխվածության փոքր-ինչ կենտրոնացվածության մասին: Նույն ցուցանիշի մեծությունը, հաշվարկված ըստ բանկերի միջինի, մնացել է անփոփոխ՝ 0.17 միավոր: Բանկային համակարգի վարկային ներդրումների ճյուղային կենտրոնացվածության ցուցանիշի համեմատ բանկերի միջին ցուցանիշի բարձր արժեքը փաստում է որոշ բանկերում վարկերի ճյուղային կենտրոնացվածության համեմատաբար բարձր մակարդակի մասին:

Կորպորատիվ հաճախորդներին տրամադրված վարկերի տեսակարար կշիռները ընդհանուր վարկերում 2016թ. հունվարի 1-ի դրությամբ*




* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճագրական Ծառայություն, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016

Գծանկար 20-ից պարզ է դառնում, որ իրավաբանական և ֆիզիկական անձանց տրամադրած վարկերի տեսակարար կշիռները ընդհանուր վարկերում գրեթե անփոփոխ է մնացել՝ նախորդ տարիների համեմատությամբ՝ միջին հաշվով կազմելով համապատասխանաբար 60% և 40%:

Ընդհանուր վարկային ներդրումներում խոշոր փոխառուներին տրամադրված վարկային ներդրումների տեսակարար կշիռը տարեվերջի համեմատ նվազել է 0.7 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 24.5%: Խոշոր փոխառուների գծով բանկի դիսկը գերազանցում է բանկի միջին ամսական նորմատիվային ընդհանուր կապիտալի 5%-ը՝ հաշվի առնելով փոխկապվածությունը: Գծապատկերային ներկայացումը տրված է ստորև.

Գծանկար 21. Խոշոր փոխառուներին տրամադրված վարկային ներդրումների հարաբերությունը ընդհանուր բանկային ներդրումներին*



* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճագրական Ծառայություն, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016


ՀՀ բանկերի կողմից իրականացվող վարկային գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով կենտրոնական բանկի կողմից իրականացվել են տարբեր սթրես-թեստեր, որոնց արդյունքները ներկայացված են ստորև.

Աղյուսակ 5. Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

	Դիտարկվող	սթրեսային	սցենարներ
30.06.2015թ.	Միաժամանակ հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի վարկերի 25%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի
Բանկային համակարգի վնասի մեծությունը	22.0 մլրդ. դրամի կամ համակարգի նորմատիվային կապիտալի 5.0%-ը	5.9 մլրդ. դրամի կամ համակարգի նորմատիվային կապիտալի 1.4%-ը	53.5 մլրդ. դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 12.2%-ը
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համաթեքությունը սթրես-սցենարի դրսևորման դեպքում	15.5%	1 6,0%	15,0%

Տարեվերջին իրականացված սթրես-թեստերի արդյունքների համեմատ՝ 2015թ. առաջին կիսամյակում վարկային ռիսկի սթրես-թեստերի արդյունքները փոքր-ինչ վատացել են՝ պայմանավորված վարկային պորտֆելում «չաշխատող» վարկերի տեսակարար կշռի աճով: Դիտարկվող վատթարագույն սթրես-սցենարում որոշ բանկերում արձանագրվել են ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջի խախտման դեպքեր: Այդուհանդերձ, վարկային ռիսկից բխող հնարավոր վնասների դեպքում բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը շարունակում է գերազանցել պահանջվող նվազագույն մեծությունը՝ 12%, և անվճարունակության խնդիրների ի հայտ գալու հավանականությունը գնահատվում է ցածր:

Գծանկար 22. Վարկերի կորուստների դինամիկ աճի դեպքում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը խախտող բանկերի քանակը



Սթրես-սցենարները չեն կանխատեսում այս կամ այն ռիսկերի դրսևումը, այլ նպատակ ունեն բացահայտելու ֆինանսական համակարգի թույլ կողմերը, գնահատելու վերջինիս կողմից ռիսկերը չեզոքացնելու ունակությունը:

Աղյուսակ 6. Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենար

Դիտարկվող սթրես-սցենար		
30.06.2014թ.		
Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների 50%-ի կատարում		
Քանկային	համակարգի	ընդհանուր
կապիտալի համարժեքությունը մինչև շոկային իրավիճակի դրսևորումը		
		16.2%
Քանկային	համակարգի	ընդհանուր
կապիտալի համարժեքությունը շոկային իրավիճակի դրսևորումից հետո		
		16,0%

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների կատարումից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստի արդյունքներով՝ առանձին բանկերում կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշի նվազումը չի գերազանցում 0.5 տոկոսային կետը, և որևէ բանկում կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջի խախտում չի արձանագրվում: Այս համատեքստում հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի ազդեցությունը ֆինանսական կայունության խոցելիության վրա գնահատվում է աննշան:

Կապիտալի համարժեքության նորմատիվի պահպանման տեսանկյունից նշենք, որ 2015թ. առաջին կիսամյակում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը նվազել է 0,5 տոկոսային կետով և կազմել 16,2%՝ պայմանավորված ընդհանուր նորմատիվային կապիտալի նկատմամբ վարկային պորտֆելի առաջանցիկ աճի տեմպով: Ըստ առանձին բանկերի՝ կիսամյակի ընթացքում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը պահպանվել է գործող պահանջների ներքո, և որևէ բանկում կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջի խախտում չի արձանագրվել: Առևտրային բանկերի ընդհանուր նորմատիվային կապիտալը տարեվերջի համեմատ ավելացել է 2,8%-ով և կիսամյակի վերջին կազմել 440,3 մլրդ դրամ: Ընդհանուր նորմատիվային կապիտալում նորմատիվային հիմնական կապիտալի մասնաբաժինն ավելացել է 2,2 տոկոսային կետով և կազմել 88,8%: Սա շատ լավ ցուցանիշ է, քանի որ ընդհանուր նորմատիվային կապիտալում հիմնական

կապիտալի բարձր տեսակարար կշիռը փաստում է առևտրային բանկերի՝ կապիտալի ռիսկերի կլանման բարձր ունակության մասին:

Իսկ բանկեր գործունեության շահութաբերության տեսանկյունից պետք է նկատել, որ, 2014թ. առաջին կիսամյակում բանկային համակարգի զուտ շահույթը՝ ըստ վերահսկողական հաշվետվությունների, կազմել է 18,3 մլրդ դրամ, ընդ որում՝ շահույթով է աշխատել 16, իսկ վնասով՝ 6 բանկ: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ՝ բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (ROA) (տարեկանացված) և շահութաբերությունն ըստ կապիտալի (ROE) (տարեկանացված) աճել են համապատասխանաբար 0,3 և 0,2 տոկոսային կետով և կազմել 1,3% և 8.0%:

Ներկայացնենք ՀՀ առևտրային բանկերի շահույթի և շահութաբերության ցուցանիշները՝ 2015 թվականի 4 եռամսյակների տվյալներով: Ընդգծենք, որ տվյալները վերցված են բանկերի 2015թ. եռամսյակային միջանկյալ հաշվետվություններից:

ՀՀ առևտրային բանկերի շահույթը

Ինչպես տեսնում եք աղյուսակում, ՀՀ 21 առևտրային բանկերից 16-ը նախորդ տարին փակել են շահույթով: Բացարձակ մեծությամբ՝ ամենամեծ շահույթը գրանցել է HSBC-Հայաստան բանկը՝ ավելի քան 6.4 մլրդ դրամ: Ամերիաբանկը շահույթի ցուցանիշով երկրորդն է (4.8 մլրդ դրամ), իսկ եռյակը եզրափակում է Ինեկոբանկը (4.77 մլրդ դրամ): Թվով 5 բանկեր 2015-ը փակել են վնասով: Ամենամեծ վնասը գրանցել է Արցախբանկը՝ 4.2 մլրդ դրամ:

Աղյուսակ 7. ՀՀ առևտրային բանկերի շահույթը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ*

Բանկի անվանումը	01.01.2016թ.	01.01.2015թ.	Փոփոխ. /հազ. դրամ/	Փոփոխ. /%/
HSBC Հայաստան	6 416 063,0	6 565 449,0	-149 386,0	-2.3
Ամերիաբանկ	4 821 475,0	7 148 870,0	-2 327 395,0	-32.6
Ինեկոբանկ	4 773 107,0	4 789 713,0	-16 606,0	-0.3
Արդշինբանկ	2 806 149,0	3 908 978,0	-1 102 829,0	-28.2
Արմավիսբանկ	1 951 153,0	2 128 815,0	-177 622,0	-8.3
ԱԿԲԱ Կրեդիտ	1 841 280,0	305 824,0	1 535 456,0	502,1
Հայքիզնեսբանկ	1 243 775,0	3 448 556,0	-2 204 781,0	-63,9
Պրոմեթեյ	1 066 681,0	967 763,0	98 918,0	10,2
Արարատբանկ	953 395,0	2 843 432,0	-1 890 037,0	-66,5
Անելիք բանկ	733 758,0	335 229,0	398 529,0	118,9
Կոնվերս	727 975,0	2 062 501,0	-1 334 526,0	-64,7
Մեյլաթ բանկ	673 824,0	215 127,0	458 697,0	213,2
Զարգացման հայկական բանկ	665 479,0	836 154,0	-170 675,0	-20,4
Յունիբանկ	493 238,0	532 475,0	-39 237,0	-7,4
Հայէկոնոմբանկ	368 787,0	816 797,0	-448 110,0	-54,8
Պրոկրեդիտ	38 360,0	502 128,0	-463 768,0	-92,4
ԲՏԱ Հայաստան	-187 363,0	-1 177 963,0	-9 400,0	5,3
Առէկսիմբանկ	-1 178 687,0	-5 365 086,0	3 586 399,0	-66,8
Բիբլոս բանկ	-2 150 872,0	-1 106 487,0	-1 044 385,0	94,4
ՎՏԲ Հայաստան	-2 988 627,0	-12 814 627,0	9 826 000,0	-76,7
Արցախբանկ	-4 215 010,0	-1 697 150,0	-2 517 860,0	148,4

* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճագրական Ծառայություն, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016, ՀՀ բանկերի եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ, www.banks.am

Ընդհանուր առմամբ, 2015 թվականին ՀՀ բանկային համակարգի շահույթը կազմել է 18.2 մլրդ դրամ: Դա 2.47 մլրդ-ով կամ 15.7%-ով գերազանցում է 2014 թվականի ցուցանիշը:¹¹⁵

ՀՀ առևտրային բանկերի շահութաբերությունը

Առանձին անդրադառնանք նաև շահութաբերությանը, քանի որ շահույթի մեծությունն ու շահութաբերությունը տարբեր ցուցանիշներ են:

Մենք հաշվարկել ենք բանկերի շահութաբերությունը՝ ըստ սեփական կապիտալի (RoE):¹¹⁶

¹¹⁵ ՀՀ բանկերի եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ /2015թ./ www.banks.am

¹¹⁶ RoE-ի հաշվարկի համար որպես հիմք վերցված են սեփական կապիտալի՝ 2015թ. 4 եռամսյակների միջինացված ցուցանիշները: Աղբյուրը՝ <http://168.am/2016/02/09/593050.html> >© 168.am</br>

Ամենաշահութաբերը 2015 թվականի արդյունքներով եղել է Ինեկորբանկը՝ 15.3%: Նրան հաջորդում են HSBC Հայաստան բանկը (12.7%) և Արմավիսբանկը (10.9%): Ամենից մեծ վնասաբերությունը գրանցել են Բիբլոսբանկը (-32.9%) և Արցախբանկը (-37.8%):

Աղյուսակ 8. ՀՀ առևտրային բանկերի շահութաբերությունը 2016թ. հունվարի 1-ի դրությամբ*

Բանկի անվանումը	Շահութաբերությունը /%/
Ինեկորբանկ	15,3
HSBC Հայաստան	12,7
Արմավիսբանկ	10,9
Ամերիաբանկ	9,9
Զարգացման հայկական բանկ	6,6
Արդշինբանկ	5,7
Անելիք բանկ	5,0
Պրոմեթեյ	4,5
Հայբիզնեսբանկ	4,3
Արարատբանկ	4,3
Մելլաթ բանկ	3,9
ԱԿԲԱ Կրեդիտ Ագրիկոլ	3,4
Հայէկոնոմբանկ	3,4
Կոնվերս	3,2
Յունիբանկ	2,3
Պրոկրեդիտ	0,4
ԲՏԱ Հայաստան	-3,5
Առէկսիմբանկ-Գազպրոմխումբ բանկ	-6 6
ՎՏԲ Հայաստան	-8 9
Բիբլոս բանկ	-32,9
Արցախբանկ	-37,8

* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճագրական Ծառայություն, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016, ՀՀ բանկերի եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ, www.banks.am

Բանկային համակարգի ընդհանուր շահութաբերությունը (RoE) 2015 թվականին կազմել է 3.6%:¹¹⁷

Անրադառնալով վարկային ռիսկի հետ առնչվող շուկայի մյուս խոշոր սուբյեկտներին՝ վարկային կազմակերպություններին, հարկ ենք համարում նշել, որ շահույթով են աշխատել 28, իսկ վնասով՝ 5 վարկային կազմակերպություններ: Վարկային կազմակերպություններ՝ ըստ ակտիվների և ըստ կապիտալի շահութաբերության ցուցնաիշները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի


¹¹⁷ ՀՀ բանկերի եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ /2015թ./ www.banks.am

համեմատ նվազել են համապատասխանաբար 0,2 և 0,4 տոկոսային կետով և կազմել 3,4% և 8,9%: Իսկ վարկային պորտֆելում «չաշխատող» վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ավելացել է 0,5 տոկոսային կետով և կազմել 4,3%: Վարկային ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ «չաշխատող» վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտների, հիպոթեքային և սպառողական վարկերում՝ համապատասխանաբար 14.9%, 10.1% և 9.0%: «Չաշխատող» վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը, հաշվարկված միջազգային մեթոդաբանությամբ («ոչ ստանդարտ», «կասկածելի», «անհուսալի» դասի վարկեր և դեբիտորական պարտքեր), աճել են 0,3 տոկոսային կետով և կազմել 5,2%:

Պետք է նշել, որ կատարված սթրես-սցենարների բանկային համակարգի համեմատ վարկային կազմակերպությունների կապիտալացումն ավելի բարձր է, և, ըստ տարբեր սթրես-սցենարների, վարկային կազմակերպությունները լիովին ունակ են կլանելու հնարավոր վնասները:

Այժմ անրադարձ կատարենք վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացմանը նպաստող Վարկային ռեգիստրի և ԱՔՌԱ վարկային բյուրոյի գործունեության վիճակագրական ցուցանիշներին: Վարկային ռեգիստրում հաշվառվող վարկերի թիվը նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ավելացել է 405688-ով: 2015թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ Վարկային ռեգիստրում առկա է եղել տեղեկատվություն 453370 գործող և 1469548 մարված վարկերի վերաբերյալ: Նախորդ տարվա առաջին կիսամյակի ընթացքում տրամադրված վարկերի քանակը եղել է 120725, իսկ այս տարվա առաջին կիսամյակում տրամադրվել է 129170 վարկ:


Գծանկար 23. 2014-2015թթ. առաջին կիսամյակներում տրամադրած վարկերի քանակը*



* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճագրական Ծառայություն, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016, ՀՀ բանկերի եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ, www.banks.am

Ինչ վերաբերում է ԱԲՌԱ վարկային բյուրոյի տվյալների բազայում գրանցված հաճախորդների թվին, ապա այն 2015թ. առաջին կիսամյակում, 2014թ. դեկտեմբերի համեմատ, ավելացել է 3.2%-ով և 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 1402334, որոնց 98%-ը ֆիզիկական անձիք են: Տվյալների բազայում առկա վարկերի քանակը 2016թ. հունվարին, 2015թ. հունվարի համեմատ, ավելացել է 9.2%-ով և 2016թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 9.089.145:

Գծանկար 24. 2014-2015թթ. տրամադրած վարկերի քանակը*



* Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության Ազգային Վիճագրական Ծառայություն, Հայաստանի ֆինանսների վիճակագրություն 2015թ., Երևան 2016, ՀՀ բանկերի եռամսյակային միջանկյալ հաշվետվություններ, www.banks.am

Վերլուծելով և ամփոփելով վերը նշված տվյալները՝ հանգեցինք այն եզրակացության, որ ֆինանսական համակարգի գերակշիռ մասնաբաժին ունեցող բանկային համակարգում 2015թ. ֆինանսական ռիսկերը պահպանվել են կառավարելի շրջանակներում: Դիտարկվող ժամանակաշրջանում արձանագրվել է վարկային պորտֆելի աճի տեմպի դանդաղում, ինչը ֆինանսական կայունության համատեքստում գնահատվում է դրական՝ պայմանավորված հետագա տարիներին վարկային ռիսկի զսպմամբ: Փոքր ինչ վատացել է վարկային պորտֆելի որակը՝ հիմնականում պայմանավորված նախորդ 3 տարիներին վարկային պորտֆելի արագ աճով: Այդուհանդերձ, վարկային ռիսկից բխող հնարավոր վնասների դեպքում բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը շարունակում է գերազանցել պահանջվող նվազագույն մեծությունը: Ֆինանսական կայունությունը խոցող իրացվելիության և շուկայական ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը ևս գնահատվել է ցածր:

Այնուամենայնիվ, ցավոք, պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունը ևս զերծ չմնաց արտաքին տնտեսական ճգնաժամի բացասական հետևանքներից:

Բանկային համակարգի խնդիրները շատ արագ են փոխանցվում ֆինանսական համակարգի մյուս մասնակիցներին և ապա իրական տնտեսություն՝ հանգեցնելով իրացվելիության և վարկավորման ծավալների կտրուկ անկման և բանկերի նկատմամբ հասարակության անվստահության բարձրացմանը: Ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ կարգավորման և վերահսկողության դաշտում բացահայտվեցին մի շարք անկատարություններ, բացթողումներ ու խնդիրներ, որոնք ցույց տվեց Բազել 2-ի թույլ կողմերը: Ճգնաժամի հետևանքով կտրուկ աճեցին բանկերի ռիսկերի մակարդակը, ինչը ցույց տվեց, որ ռիսկերի նկատմամբ կապիտալի համարժեքության նորմատիվի զգայնության մակարդակը բավարար չէ: Այս մոդելը չկարողացավ արդյունավետ գործել ճգնաժամային իրավիճակներում, ինչի հիմնական պատճառը կապիտալի նկատմամբ պրուդենցիալ պահանջների առկայություն էր, որը սահմանափակում է բանկի ռիսկային ակտիվային գործառնությունները (մասնավորապես վարկերի տրամադրումը), քանի որ ճգնաժամի պայմաններում բանկի վատորակ ակտիվների տեսակարար կշիռը ավելանում է, որը իր հերթին պահանջում է լրացուցիչ կապիտալի ներգրավում կամ ակտիվային գործառնությունների սահմանափակում՝ կապիտալի համարժեքության նորմատիվը չխախտելու նպատակով: Ինչը ավելի է խորացնում բանկերի ֆինանսական վատթար վիճակը: Այդ պատճառով անհրաժեշտ է բանկերի կապիտալի և իրացվելիության պահանջների խստացման բարձրացում: Այս ամենը հաշվի առնելով, առաջարկում ենք ամբողջությամբ անցում կատարել Բազել 2-ի վերանայված տարբերակին, որը ռիսկերի կառավարման համար հիմքում է ընդունում ոչ թե կապիտալի համարժեքությունը, այլ առաջարկում է սահմանել չափանիշներ, որոնց բավարարելու դեպքում միայն այս կամ այն գործիքը կարող է դիտվել որպես նորմատիվային կապիտալի տարր: Բազել 3-ով սահմանում է նաև անվճարունակության հավանականությունը հաշվարկելու երկարաժամկետ պատմական տվյալների օգտագործման պահանջ, ինչը կմեղմի պրոցիկլայնությունը, որի շնորհիվ աճող ռիսկերի նկատմամբ կապիտալի պահանջների զգայունությունը ավելի է մեծացնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության թեմայի շրջանակներում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում ներկայացնել ՀՀ-ում բանկային համակարգում կորպորատիվ հաճախորդների վարկավորման գործընթացի բարելավմանն ու բանկերի վարկային պորտֆելի կառավարման արդյունավետության բարձրացմանն ուղղված հետևյալ հիմնական եզրակացությունները և առաջարկությունները:

🌈 ՀՀ բանկային համակարգում կորպորատիվ հաճախորդների վարկավորման գործունեության վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ներկայումս ՀՀ բանկային համակարգը հանդիսանում է երկրի ներդրումային շուկայում վարկային ռեսուրսների մատակարար հանդիսացող կարևոր ֆինանսական կառույց, որը մեծ դերակատարում ունի տնտեսության տարբեր ոլորտներում ներդրումներ իրականացնելու գործընթացում: Այդ է պատճառը, որ ներկայումս մեծ կարևորություն են ստացել ՀՀ բանկերի ռեսուրսային բազայի ընդլայնման խնդիրները, քանի որ մեծ ռեսուրսային բազայով բանկերն են հնարավորություն ստանում մեծածավալ ներդրումներ իրականացնել տնտեսության իրական հատվածում և բավարարել կորպորատիվ հաճախորդների պահանջը լրացուցիչ վարկային միջոցների գծով:

Ինչ վերաբերում է ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումների պորտֆելին, ապա վերլուծության արդյունքները ցույց տվեցին, որ վերջինս աճման միտում ունի՝ թեև աճի տեմպերը, պայմամավորված ֆինանսատնտեսական ճգնաժամի դեռևս պահպանված բացասական հետևանքներով և վարկային զգուշավոր քաղաքականության իրականացմամբ, վերջին երեք տարիներին ցածր են եղել:

🌈 Կորպորատիվ հաճախորդների վարկային գործառնությունների արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է պարբերաբար մեծացնել բանկերի կողմից վարկային ներդրումների դիվերսիֆիկացիայի շրջանակները և որոշակի սահմանափակումներ կիրառել տարբեր ուղղություններով վարկային ներդրումների սահմանաչափերում: Դա ոչ միայն թույլ կտա բանկերին ընդլայնել վարկային-ներդրումային գործունեության շրջանակները, այլև սահմանափակ չափաքանակով վարկային ներդրումներից ապահովել երաշխավորված եկամուտ-

ներ: Իսկ ՀՀ առևտրային բանկերի վարկային ներդրումների պորտֆելի կառուցվածքի բարելավման նպատակով անհրաժեշտ է նրանում ընդգրկել առավելապես միջինժամկետ և երկարաժամկետ ներդրումային ռեսուրսներ՝ կորպորատիվ հաճախորդների պահանջումների բավարարման նպատակով:

✚ Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ ՀՀ բանկերը նախընտրում են ընդլայնել իրենց կարճաժամկետ վարկային պորտֆելը՝ պայմանավորված վարկային և իրացվելիության ռիսկերի նվազեցման անհրաժեշտությամբ: Այս պայմաններում բանկերը հնարավորություն են ստանում նվազեցնելով վարկային ռիսկերը և մեծացնելով փոքր ծավալով կարճաժամկետ վարկային միջոցների տեղաբաշխման շրջանակները՝ ճգնաժամի պայմաններում ապահովել երաշխավորված շահույթի մակարդակ: Սակայն պետք է նշել, որ տնտեսավարողների ներդրումային նախագծերը ֆինանսավորելու համար կարևոր և առաջնային նշանակություն ունեն հատկապես երկարաժամկետ ներդրումները: Այս առումով կորպորատիվ հաճախորդներին անհրաժեշտ է և պարտադիր մեծացնել բանկերի երկարաժամկետ վարկային ներդրումների պորտֆելը: Մասնավորապես, առաջարկվում է երկարաժամկետ վարկային ռեսուրսներ տրամադրել հատկապես այն տնտեսավարողներին, որոնց ներդրումային նախագծերը հետագայում կարող են հանգեցնել տվյալ ոլորտի զարգացմանը:

Տնտեսության մեջ ռիսկի խնդիրը շատ կարևոր է, քանի որ տեղեկատվական անորոշության պայմաններում որոշումների ընդունման գործընթացը խիստ կապված է դրա հետ: Հիմնական ռիսկը, որի հետ բախվում է բանկը իր գործունեության ընթացքում վարկային ռիսկն է, քանի որ վարկավորման գործառնությունները հանդիսասանում են առևտրային բանկերի գործունեության կարևորագույն տեսակները:

✚ Բանկի առջև դրված հեռանկարային և ընթացիկ նպատակների իրականացմանն ուղղված միջոցառումների արդյունավետությունն ուղղակիորեն պայմանավորված է վարկային ռիսկի կառավարման օպտիմալ համակարգի առկայությամբ, որն ուղղված է վարկային ռիսկի ընդունելի մակարդակի և ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցության պայմաններում բանկի գործունեության շարունակականության ապահովմանը: Այդ պատճառով կարևոր է ճիշտ վարկային քաղաքականության և

ռազմավարության մշակումը՝ հիմնված գիտատեխնիկական առաջընթացի, միջազգային ստանդարտների, մեթոդների և մոդելների կիրառման վրա, որը հնարավորություն կտա ձևավորել արդյունավետ վարկային պորտֆել՝ կառավարելով վարկային ռիսկը և՛ անհատական, և՛ պորտֆելային մակարդակներով:

Վարկային ռիսկի կառավարման օպտիմալ համակարգի ձևավորմանը կարելի է հասնել միջազգային լավագույն փորձի տեղայնացման և ներդրման արդյունքում:

Վարկային ռիսկի բնութագրային առանձնահատկություն է հանդիսանում այն, որ վարկային ռիսկը առաջանում է ոչ միայն վարկի տրամադրման և տոկոսների ստացման գործընթացում, այլև այլ հաշվեկշռային և արտահաշվեկշռային գործառնությունների հետևանքով, այդ պատճառով պետք է մանրակրկիտ ուսումնասիրել վարկային ռիսկի վրա ազդող բոլոր հնարավոր գործոնները:

✚ Ռիսկերի կառավարումը էական նշանակություն ունի ոչ միայն առանձին բանկերի, այլ նաև ընդհանուր ֆինանսական շուկայի կայուն, հուսալի, արդյունավետ և ապահով զարգացման գործընթացում, այդ պատճառով գնալով ավելի է կարևորվում արդյունավետ ռիսկերի կառավարման համակարգի ներդրումը առանձին բանկերում և բանկային համակարգում: Ուստի ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով ԿԲ-ի կողմից պետք է սահմանվեն ռիսկերի ընդունելի մակարդակներ, նորմատիվներ, սահմանափակումներ, պայմաններ և պահանջներ, որոնք կապահովեն ռիսկ-եկամուտ օպտիմալ հարաբերակցությունը, ինչը իր հերթին կապահովի բանկի գործունեության շարունակականությունը և զարգացումը՝ առաջադրված ընթացիկ և ռազմավարական խնդիրների լուծման պարագայում:

✚ Վերլուծելով ՀՀ բանկային համակարգում ռիսկերի կառավարման գործընթացը հանգեցինք այն եզրակացության, որ ռիսկեր կառավարումն իրականացվում է միջազգայնորեն սահմանված ստանդարտներին համապատասխան:

Դիտարկելով ֆինանսատնտեսական ճգնաժամի ժամանակ առաջ եկած մի շարք անկատարությունները, բացթողումներն ու խնդիրներն առաջարկում ենք ամբողջությամբ անցում կատարել Բազել 2-ի վերանայված տարբերակին, որը ռիսկերի կառավարման համար հիմքում դնում է ռիսկերի նկատմամբ ավելի զգայուն տարրեր:

Կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում նպատակահարմար ենք գտնում կատարել որոշակի առաջարկություններ որի հետևանքով, ըստ մեզ, կբարձրանա ՀՀ առևտրային բանկերի վարկային ռեսուրսների ու վարկային ռիսկի կառավարման, ինչպես նաև կորպորատիվ հաճախորդների վարկավորման արդյունավետությունը.

- Կորպորատիվ հաճախորդների վարկային ռազմավարության մշակման և իրականացման ժամանակ խիստ կարևորվում է սեփական ուժեղ և թույլ կողմերի բացահայտումը, արտաքին միջավայրի գործոնների ազդեցության գնահատումը, ինչը կարելի է իրականացնել SWOT վերլուծության միջոցով՝ ինչպես ռազմավարության մշակման, այնպես էլ դրա իրականացման ընթացքում: Դրա արդյունքում հնարավոր կլինի պարզել բանկի կողմից իր վարկային ռազմավարության իրականացման իրական հնարավորությունները, արտաքին միջավայրի սպառնալիքները, իր ուժեղ և թույլ կողմերը, և իրականացնել անհրաժեշտ միջոցառումներ թույլ կողմերի վերացման և սպառնալիքների ազդեցության նվազեցման ուղղությամբ (մասնավորապես, իրականացրել ենք կորպորատիվ հաճախորդների գծով ՀՀ առևտրային բանկերի վարկային ռազմավարության SWOT վերլուծություն և կատարել մի շարք առաջարկություններ՝ թույլ կողմերի վերացման և սպառնալիքների ազդեցության նվազեցման ուղղությամբ):
- Վարկային գործառնությունների իրականացման ժամանակ խիստ կարևորվում է նաև կորպորատիվ հաճախորդների վարկունակության օբյեկտիվ գնահատումը: Ներկայումս ՀՀ առևտրային բանկերը իրավաբանական անձանց վարկունակության գնահատման ժամանակ հիմնական ուշադրությունը դարձնում են ֆինանսական ցուցանիշների վերլուծությանը, իսկ դրամական հոսքերի վերլուծություն իրականացնում են միայն խոշոր վարկերի դեպքում: Սակայն կարծում ենք, որ անհրաժեշտ է իրականացնել նաև հաճախորդների գործարար ռիսկի վերլուծություն, ընդ որում դրա արդյունավետ իրականացման համար կարելի է առանձնացնել անհրաժեշտ գործոնները և մշակել դրանց գնահատման բալային համակարգ (սքոինգ համակարգի նման):

- Առևտրային տարատեսակ վարկերի տրամադրման գործընթացում կորպորատիվ հաճախորդների վարկունակությունը գնահատելիս, ՀՀ առևտրային բանկերը, հիմնվելով կորպորատիվ հաճախորդների անձնական տվյալների և եկամտի մեծության վրա, իրականացնում են վարկունակության քանակական հաշվարկ: Կարծում ենք, որ տնտեսավարող սուբյեկտների վարկունակության գնահատման ժամանակ կարելի է կիրառել սքորինգ համակարգը, որը լայնորեն կիրառվում է միջազգային պրակտիկայում: Սքորինգ համակարգը արդյունավետ է, քանի որ թույլ է տալիս հաշվի առնել միանգամից բազմաթիվ գործոններ, սակայն միայն սրանով բավարարվել չի կարելի և վարկունակության գնահատման ժամանակ անհրաժեշտ է իրականացնել նաև փորձագիտական գնահատում՝ պարզելով համար արտաքին միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների հնարավոր ազդեցությունը հաճախորդի վարկունակության վրա:
- Կորպորատիվ հաճախորդների վարկային ռազմավարության իրականացման և վարկային ներդրումների կառավարման ժամանակ կարևորվում է վարկային ռիսկի հետևողական կառավարումը, ինչը կարելի է իրականացնել՝ ընտրելով վարկային ռիսկի նվազեցման և դիվերսիֆիկացիայի ռազմավարությունները, այսինքն բացառել բարձր ռիսկային վարկային գործառնությունները, իրականացնել վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիա, կիրառել սահմանափակումների համակարգ՝ ըստ տնտեսության ճյուղերի, վարկառուների, իրականացնել վարկի հետևողական մոնիթորինգ, և այլն: Նշված ռազմավարությունների կիրառումը թույլ կտա ապահովել ռացիոնալ հարաբերակցություն՝ եկամտաբերության և հուսալիության միջև:
- Վարկային ռազմավարության կարևորագույն տարրերից է վարկային տոկոսի սահմանման և տոկոսային քաղաքականության իրականացման խնդիրը: Բանկերը կորպորատիվ հաճախորդների վարկերի տոկոսադրույքները սահմանելիս պետք է հաշվի առնեն վարկային ռիսկի չափը, միաժամանակ սահմանելով այնպիսի տոկոսադրույքներ, որոնք ձեռնտու են նաև վարկառուներին՝ թույլ չտալով ռիսկի թույլատրելի մակարդակից շեղումներ: Սակայն ներկայումս ՀՀ բանկերի ճնշող մեծամասնության կողմից տրամադրվող առևտրային վարկերի տոկոսադրույքները չափազանց բարձր են, ինչն էլ

հանդիսանում է վարկային ներդրումների կառավարման ցածր արդյունավետության եթե ոչ կարևորագույն, ապա կարևոր պատճառներից մեկը:

- Կորպորատիվ հաճախորդների վարկային ռիսկի արդյունավետ կառավարման անհրաժեշտ քայլերից է օպտիմալ վարկային ապրանքների և նոր ծառայությունների մշակումը, որոնք գրավիչ կլինեն նպատակային շուկայի համար և մակրոտնտեսական պայմաններում կհամապատասխանեն բանկի վարկային քաղաքականությանը: Այս դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել մի շարք առաջնահերթ գործոններ՝ կորպորատիվ հաճախորդի կարգավիճակը, վարկի ժամկետը, մարման կարգը, տոկոսադրույքը և այլն:
- Տնտեսավարող սուբյեկտների վարկային ռիսկի կառավարման ժամանակ անհրաժեշտ է գնահատել մակրոտնտեսական ցուցանիշների փոփոխության ազդեցությունը վարկային պորտֆելի վրա: Միջազգային բանկային պրակտիկայում դա իրականացվում է սթրես-թեստավորման միջոցով: Կարծում ենք, որ հայաստանյան բանկերի կողմից սթրես-թեստավորման իրականացումը էապես կբարձրացնի վարկային ռիսկի կառավարման արդյունավետությունը
- Կորպորատիվ հաճախորդների վարկային ռեսուրսների և վարկային ռիսկի կառավարման արդյունավետության բարձրացմանը մեծ չափով կնպաստի նաև մեր կողմից առաջարկված ներքին ռեյտինգավորման համակարգի ներդրումը՝ Բազել 2 համաձայնագրի չափանիշներին համապատասխան: Այս դեպքում վարկային ռիսկը հաշվարկելիս բանկերը կարող են օգտագործել փոխառուների վարկունակության իրենց գնահատականները՝ վարկանիշը: Ընդ որում ներքին ռեյտինգավորման համակարգը և նրա միջոցով ստացված տվյալները կարող են օգտագործվել ակտիվների և պասիվների կառավարման, առօրյա գործունեության ընթացքում՝ հետևյալ ուղղություններով՝ պահուստավորում, վարկի արժեքի սահմանում, պորտֆելի մոնիթորինգ, պլանավորում և կանխատեսում, և այլն: Ներկայումս ՀՀ առևտրային բանկերի կողմից ներքին ռեյտինգավորման համակարգի կառուցման գլխավոր խնդիրներից մեկը հաճախորդների գծով կենտրոնացված տեղեկատվության բացակայությունն է, և այս իրավիճակից հնարավոր ելքը հաճախորդների վերաբերյալ կենտրոնացված տեղեկատվության հավաքագրումն է վարկային բյուրոների միջոցով (ՀՀ-ում

ներկայումս գործում է ՀՀ ԿԲ-ի վարկային ռեգիստրը և ԱՔՌԱ մասնավոր վարկային բյուրոն), ընդ որում կարևոր է, որ վարկային բյուրոների միջոցով հավաքագրվեն ռիսկերի գնահատման համար այնպիսի կարևոր տվյալներ, ինչպիսիք են՝ կորպորատիվ հաճախորդների ժամկետանց պարտավորությունները առևտրային, գործարար և այլ վարկերի գծով և այլն: Կարծում ենք, որ ներքին ռեյտինգավորման համակարգի ներդրումը ՀՀ առևտրային բանկերի կողմից կարող է կատարելագործել նրանց գործունեությունը միանգամից մի քանի ուղղություններով և նպաստել վարկային ռազմավարության իրագործման արդյունավետության բարձրացմանը:

- Ի վերջո, վարկային ներդրումների կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով նպատակահարմար ենք գտնում սուբսիդավորման եղանակով կորպորատիվ հաճախորդներին վարկեր տրամադրող նոր խոշոր մասնագիտացված կառույցի ստեղծումը, որը կարող է ստեղծվել բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակով առևտրային բանկի տեսքով, որի միակ մասնագիտացումը պետք է հանդիսանա տնտեսության տարբեր ոլորտներում վարկային ներդրումների արդյունավետ կառավարումը: Ընդ որում, այդ կառույցը պետք է հիմնադրվի պետական աջակցությամբ՝ սուբսիդավորված վարկերի տրամադրման հնարավորության նպատակով: Օրինակ, դա կարող է լինել գյուղատնտեսական վարկավորման մասնագիտացված բանկ, որը պետք է հաշվետու լինի ՀՀ Կենտրոնական բանկին և ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

1. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, «ՀՀ պաշտոնական տեղեկագիր» 1998թ. թիվ 6
2. «Ֆինանսական կարգավորման և վերահսկողության միավորված համակարգի ներդրման մասին» ՀՀ օրենքը (ընդունված 08.12.2005թ.,)
3. ՀՀ օրենքը «ՀՀ Կենտրոնական բանկի մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 30.06.96թ.)
4. ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից, 29.06.96թ.)
5. ՀՀ օրենքը «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 02.09.1993թ.)
6. ՀՀ օրենքը «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 30.11.2001թ.)
7. ՀՀ օրենքը «Բանկային գաղտնիքի մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 07.10.1996թ.)
8. ՀՀ օրենքը «Բաժնետիրական ընկերությունների մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 27.10.2001թ.)
9. ՀՀ օրենքը «Վարկային կազմակերպությունների մասին» (ընդունված ՀՀ Ազգային ժողովի կողմից 29.05.2002թ.)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԵՎ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐ

10. Կանոնակարգ 2. «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները»: (ԿԲ խորհրդի 27.09.2004 թ. թիվ 237-Ն որոշում)
11. 16.03.1999թ. թիվ 40 «ՀՀ բանկային համակարգում գործառնական ռիսկերի կառավարումը (պարտադիր նվազագույն պահանջներ)»
12. Կանոնակարգ 14 «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» 05.11.2002թ. թիվ 247-Ն
13. Կանոնակարգ 9/01 «Վարկային բյուրոների լիցենզավորումը, վարկային բյուրոների տարածքային, տեխնիկական, անվտանգության և ծրագրային հագեցվածության պահանջները» 21/04/2009, թիվ 93-Ն
14. 12.12.2002թ. «Վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի և փոխառությունների տրամադրման կարգն ու պայմանները» 05.12.2002թ. թիվ 396
15. «ՀՀ եւ ԼՂՀ տարածքներում գործող առևտրային բանկերի եւ վարկային կազմակերպությունների վարկային ներդրումների եւ ներգրավված միջոցների կազմն ու կառուցվածքն ըստ մարզերի»/2003-2015թթ./,
16. KPMG. Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրությունը /2015թ. արդյունքներ/, 2016թ. փետրվար, Երևան
17. ՀՀ բանկային համակարգի 2015 թ-ի տարեկան, այդ թվում՝ չորրորդ եռամսյակի գործունեության ամփոփում, Հայաստանի բանկերի միություն
18. Հայաստանի բանկային համակարգը 2003-2014թթ. զարգացումը, վերահսկողությունը, կարգավորումը: Երևան, 2004-2015թթ.

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

19. Անդրեասյան Ա. «Վարկային գործառնություններ», Երևան, Ֆինանսաքանկային քոլեջ, 2003թ., 94 էջ
20. Բագրատյան Ա., Բալաբանյան Ա. «Բանկային գործ», Երևան, Նաիրի, 2003թ. 308 էջ
21. «Բանկային գործ» (Բ. Ասատրյանի ընդհ. խմբագր.) Երևան, Սարվարդ հրատ. 2004թ., 720 էջ
22. Բոստանջյան Վ. Ֆինանսական վերահսկողության խնդիրները և հիմնական գործառնությունները: ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները: Երևան 2012թ., 11-19 էջ
23. Բոստանջյան Վ., Հովակիմյան Թ., Ղուկասյան Գ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները: ԵՊՀ Տարեգիրք 2013, Տնտեսագիտության ֆակուլտետ, Եր.: ԵՊՀ հրատ. 2014, էջեր 233-244
24. Զաքոյան Հ. Բանկային խմբի ռիսկերի կառավարման միասնական համակարգին կազմակերպությունների ինտեգրվելը և համակարգի գործառնությունները: Երևան, Ֆինանսներ և էկոնոմիկա, 2016թ, ապրիլ, էջ 10-13
25. Կիրակոսյան Գ. Բանկային ռիսկերը և դրանց կառավարման միջազգային փորձի համեմատական վերլուծությունը: Երևան, Ֆինանսներ և էկոնոմիկա, հունվար 2017թ., էջ 90-92
26. Մխիթարյան Խ. Բանկային մենեջմենթի արդի հիմնահարցեր /մենագրություն/: Երևան, Տնտեսագետ, 2016թ, 422 էջ
27. Մխիթարյան Խ. ՀՀ բանկերի կողմից իրականացվող վարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման ուղիները: Բանբեր ՀՊՏՀ գիտական հանդես, 2016 N3, էջ 58-68
28. Վարդանյան Վ. «Բանկային գործ, բանկային մենեջմենթ, փող, վարկեր, բանկեր», ուս. ձեռն., Երևան 2004թ., 350 էջ
29. Վարդումյան Է. «Ֆինանսական ռիսկերի կառավարման մեթոդներ» /ուսումնական ձեռնարկ/, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015թ, 41 էջ
30. «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» Լ. Բադանյանի խմբ. Երևան, ՄՈԱ ՍՊԸ 2010, 586 էջ

- 31.Абалкина Т.В., Абалкин А.А. Цели и приоритеты кредитной политики при формировании стратегии развития коммерческих банков. Интернет-журнал Науковедение, 3(22)/2014
- 32.Астрелина, В. В. Управление ликвидностью в российском коммерческом банке: учеб. пособие / В. В. Астрелина, П. К. Бондарчук, П. С. Шальнов. – М. : Форум : ИНФРА-М, 2012. – 175 с.
- 33.Балабанов И.Т.. Банки и банковское дело. Издательство: Питер. Год издания: 2003, 259 с.
- 34.Банки и банковское дело: учебник / Балабанов А. И. [и др.] – Санкт-Петербург: Питер, 2007. – 488 с.
- 35.Банковский аудит: учебное пособ. / Л.С. Ефремова [и др.]; под ред. Л.С. Ефремовой. – Минск: БГЭУ, 2007. – 389 с.
36. Банковское дело / Ю. Соколов и др.; под ред. Ю. Соколова, Е. Жукова. – Москва: Юрайт, 2015. – 592 с.
- 37.Банковское дело: учебное пособие / [М. А. Петров и др.]; под ред. М. А. Петрова. – Москва : Рид Групп, 2011. 240 с.
38. Банковские операции: пособие / М. А. Коноплицкая [и др.]; под ред. М. А. Коноплицкой. – Минск: Вышэйшая школа, 2008. – 314 с.
39. Банковские риски : учебник / под ред. О. И. Лаврушина, Н. И. Валенцовой. –3-е изд., перераб. и доп. – М. : КНОРУС, 2013. – 292 с.
- 40.Банковское дело : учеб. для бакалавров / под ред. Е. Ф. Жукова, Ю. А. Соколова. – М. : Юрайт, 2012. – 590 с.
- 41.Банковское дело: дополнительные операции для клиентов. Тавасиев А. Арсланбеков А и др. М., Финансы и статистика, 2005, – 420 с.
- 42.Банковское и страховое дело: Учебное пособие. Голубев А.А., Абакумова А.В., Мишура Л.Г. – СПб.: СПб ГУИТМО, 2006. – 93с
- 43.Банковское право: учебник для магистров.- 3-е изд., перераб. и доп. / под ред. Д.Г. Алексеевой, С.В. Пыхтина.– М.: Юрайт, 2012.- 1055с.

- 44.Белоглазова Г.Н., Кроливецкая Л.П. Банковское дело организация деятельности коммерческого банка. Учебник для вузов. — М.:Издательство Юрайт, 2012 г. — 422 с.
- 45.Букин С. Безопасность банковской деятельности: Учебное пособие. — СПб.: Питер, 2011 г. 288 с.
- 46.Восточно-Европейская редакция ИА REGNUM. Белоруссия: Социальный кризис в стране «рыночного социализма».
- 47.Горелая, Н. В. Организация кредитования в коммерческом банке : учеб. пособие / Н. В. Горелая. – М. : Форум : ИНФРА-М, 2012. – 207 с.
- 48.Джорджа Мейсона Лоуренс Уайт. Банковская система развитых стран мира. лекция в рамках проекта InLiberty. Москва, 2016
- 49.Жарковская, Е. И., Арендс, И.У. Банковское дело / Е.И. Жарковская, И.У. Арендс. – Москва: Омега-Л, 2010. – 304 с.
50. Казахстан тоже переживает кризис ипотечного кредитования. время публикации: 23 августа 2007. Каталог NEWSru.com:
- 51.Киреев, В. Л. Банковское дело : учебник / В. Л. Киреев, О. Л. Козлова. – М: КНОРУС, 2012. – 239 с.
- 52.Когденко, В. Г. Краткосрочная и долгосрочная финансовая политика : учеб. пособие для вузов / В. Г. Когденко, М. В. Мельник, И. Л. Быковников. – М. : ЮНИТИ-ДАНА, 2012. – 471 с.
- 53.Колпакова, Г. М. Финансы, денежное обращение и кредит : учеб. пособие для бакалавров / Г. М. Колпакова. – 4-е изд., перераб. и доп. – М. : Юрайт, 2012. – 538 с.
- 54.Костерина, Т. М. Банковское дело : учеб. для бакалавров / Т. М. Костерина ; Моск. гос. ун-т экономики, статистики и информатики. – 2-е изд., перераб. и доп. – М. : Юрайт, 2014. – 332 с.
- 55.Крупнейший банк Прибалтики снизил прогнозы экономического роста Эстонии за 2012 год.
- 56.Курбатов А.Я. Банковское право России 2-е изд. Учебник для вузов. — М.:Издательство Юрайт, 2011 г. — 525 с.

57. Курбатов А.Я. Банковское право России: учебник для магистров.– М.: Юрайт, 2012.– 525с.
58. Курсов, В. Н. Бухгалтерский учет в коммерческом банке: новые типовые бухгалтерские проводки операций банка : учеб. пособие / В. Н. Курсов, Г. А. Яковлев. – 15-е изд., испр. и доп. – М. : ИНФРА-М, 2012. – 364 с.
59. Лаврушин, О.С. Основы банковского дела / О.С. Лаврушин. – Москва: Кнорус, 2011. – 392 с.
60. Лупанов В. В. Формирование кредитной политики коммерческого банка. Журнал Известия Тульского государственного университета. Экономические и юридические науки. Выпуск № 1-2 / 2010
61. Михайлов С.. Мировой финансово-экономический кризис в России. Тенденции и перспективы. М. 2013. – 120 с.
62. Об особенностях современного мирового финансового кризиса и его последствий для России А. Г. Аганбегян, академик РАН, заведующий кафедрой Академии народного хозяйства при Правительстве Российской Федерации.
63. Организация деятельности коммерческих банков учеб. / Г. И. Кравцова [и др.]; под ред. Г. И. Кравцовой. – Минск: БГЭУ, 2007. – 487 с.
64. Организация межбанковского кредитования: понятие, механизм особенности проведения в России. Селезнева Ю.В. Вестник Российского экономического университета им. Г.В. Плеханова. Вступление. Путь в науку, 2012. № 1
65. Основы банковского дела / Коробов, Ю. А. и др.; под ред. Ю.А. Коробова, Г.Д. Коробовой. – Москва: ИНФРА-М, 2010. – 448 с.
66. Павлиашвили Соломон. Мировой экономический кризис и Грузия. Журнал Кавказ и глобализация. Выпуск № 3-4 / том 5 / 2011
67. Палочкин М. Как стать успешным банкиром: советы для начинающих. Издательство: Бараул. 2014. – 15 с.
68. Печникова, А. В. Банковские операции: учеб. / А. В. Печникова [и др.]. – Москва: ФОРУМ: ИНФРА-М, 2007. – 366 с
69. Пол Х. Аллен. Реинжиниринг банка: программа выживания и успеха. Альпина Паблишер. Год издания: 2015 – 588 с.

70. Региональные банки в системе финансового посредничества. Монография / Зверькова Т.Н. – Оренбург: Издательство «ООО «Агентство Пресса», 2014. – 262 с.
71. Роль кредита и модернизация деятельности банков в сфере кредитования: монография / под ред. О. И. Лаврушина. – М. : КНОРУС, 2012. – 267 с.
72. Рыкова, Л. М. Регулирование деятельности банков. Банковский надзор: учеб. пособ. / Л. М. Рыкова. Минск: Современная школа, 2009. – 237 с.
73. Семибратова, О. В. Банковское дело / О. В. Семибратова. – Москва: Academia, 2012. – 224 с.
74. Совершенствование механизма кредитования на современном этапе, Маслова В.В. Журнал: Экономика, управление, 2014. № 2,
75. Тавасиев, А. М. Банковское дело: управление кредитной организацией : учеб. пособие / А. М. Тавасиев. – 2-е изд., перераб. и доп. – М. : Дашков и К, 2011. – 639 с.
76. Управление кредитными рисками и регулирование рисков кредитной деятельности коммерческих банков. Журнал: современные научные исследования, 2013. № 17 (2).
77. Управление финансами. Финансы предприятий : учебник / под ред. А. А. Володина. – 2-е изд. – М. : ИНФРА-М, 2012. – 509 с.
78. Финансы, денежное обращение и кредит : учеб. для бакалавров / под ред. Л. А. Чалдаевой. – М. : Юрайт, 2012. – 540 с.
79. Шапкин, А. С. Экономические и финансовые риски: оценка, управление, портфель инвестиций : [учеб. пособие] / А. С. Шапкин, В. А. Шапкин. – 9-е изд. – М. : Дашков и К, 2013. – 543 с. – 5 экз.
80. Экономический кризис в России: прогнозы. Воеводскова Елена Евгеньевна. Журнал Проблемы современной науки и образования. Выпуск № 6 (36) / 2015.
81. ADBI Working Paper Series Why was Japan Hit So Hard by the Global Financial Crisis? Masahiro Kawai and Shinji Takagi No. 153 October 2013.

82. Board of Governors of the Federal Reserve System International Finance Discussion Papers Number 1064 November 2012 Foreign Banks in the U.S.: A primer William Goulding and Daniel E. Nolle
83. Calibrating the Single-Counterparty Credit Limit between Systemically Important Financial Institutions March 4, 2016
84. Changing Banking Supervision in the Euro zone: the ECB as a Policy Entrepreneur Stefaan De Rynck. Bruges Political Research Papers 38 / 2014
85. Committee on the Global Financial System CGFS Papers No 41 Long-term issues in international banking Report submitted by a Study Group established by the Committee on the Global Financial System This Study Group was chaired by Hans-Helmut Kotz of the Deutsche Bundesbank July 2010
86. Crisis Management and Resolution for a European Banking System. Fonteyne, Wim; Bossu, Wouter; Cortavarria, Luis; Giustiniani, Alessandro; Gullo, Alessandro; Hardy, Daniel C. L.; Kerr, Sean. March 01, 2010.
87. Europe's banking union in the global financial system: constructing open and inclusive institutions Alexander Lehmann and Lars Nyberg. Working Paper No. 175 Prepared in October 2014
88. International Banking System: Risk Analysis. The Learning Village(Pty)Ltd. May 16, 2015
Financial Crises: Explanations, Types, and Implications. IMF Working Paper Research Department Prepared by Stijn Claessens and M. Ayhan Kose¹ January 2013
89. Financial Crisis, US Unconventional Monetary Policy and International Spillovers. Prepared by Qianying Chen, Andrew Filardo, Dong He, and Feng Zhu² Authorized for distribution by Bas Bakker April 2015
90. Financial Crises and Reform of the International Financial System. Stanley Fischer. NBER Working Paper No. 9297 Issued in October 2015
91. OECD (2012), "Financial Contagion in the Era of Globalised Banking?", OECD Economics Department Policy Notes, No. 14, June.
92. Research on global financial stability: the use of BIS international banking and financial statistics Joint BIS – CGFS Workshop on 7 May 2016

93. Social Science research Network. Identifying Risks in the International Banking System. Kamal Sagdar Khan. September 14, 2012
94. Sorting Out Japan's Financial Crisis. Anil K. Kashyap. NBER Working Paper No. 9384. Issued in December 2002
95. The Corporate Saving Glut in the Aftermath of the Global Financial Crisis Joseph W. Gruber – Deputy Associate Director, Division of International Finance, Board of Governors of the Federal Reserve System Steven B. Kamin* – Director, Division of International Finance, Board of Governors of the Federal Reserve System: June 2015
96. The financial crisis in Japan during the 1990s: how the Bank of Japan responded and the lessons learnt. BIS Papers No 6. October 2001
97. www.gov.am - ՀՀ Կառավարության պաշտոնական կայքէջ
98. <http://www.minfin.am/> - ՀՀ Ֆինանսների նախարարության պաշտոնական կայքէջ
99. www.cba.am - ՀՀ Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ
100. www.banks.am – Բանկային նորությունների կայքէջ
101. www.armstat.am - ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքէջ
102. www.parliament.am - ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական կայքէջ
103. www.bankir.ru - Բանկային նորությունների կայքէջ